ՎԱՐՔ ԵՎ ԲԱՆՔ

ՍՈՒՐԲ ՀԱՐԱՆՑ

ԵՐԱՆԵԼԻ ԱԲԲԱ ՋՈՍՄԻՈՍ
ՊԱՂԵՍՏԻՆՑԻ

Գիրք 1

ՎԱՐՔ ԵՎ ԲԱՆՔ ՍՈՒՐԲ ՀԱՐԱՆՑ

Գիրք Ա

ԵՐԱՆԵԼԻ ԱԲԲԱ ԶՈՍՄԻՈՍ ՊԱՂԵՍՏԻՆՑԻ

ÐÆÞÆð ²Üò² Ì úð°ðÀ, Øî²´°ðÆð
²Üò² Ì ê°ðàôÜ¸Ü°ðÆ î²ðÆÜ°ðÀ,
Ð²ðòðàô øà Ð²Úð°ðÆÜ, °ì Üð²Üø
ø°¼ Îä²îØ°Ü, øà Ì°ð°ðÆÜ, °ô
Üð²Üø ø°¼ Î²ê°Ü:

Բ ՕՐԻՆԱՑ 32:7

àí »ñ³Ý»ÉÇ ³µµ³ ¼áëÇÙáë, Áëù»½ áõÝÇÙù
µ³ñ»Ëáë ³é øñÇëïáë í³ëÝ ³ÝÓ³Ýó Ù»ñáó£
Î³ÝË»³ ËÁÝ¹ñ»³ Á½ÃáÕáõÃÇõÝ Ù³Ýó³Ý³ó,
Ç ù»Ý ³ß³Ï»ñïáóë£

ԱՌԱՋԱԲԱՆ

Հուսալով Աստծո ողորմությանը, սկսում ենք մի նոր մատենաշար, որի ամեն մի համար կծանոթացնի Սուրբ Հայրերից մեկի վարքին և նրա ուսուցումներին: Այս մասին արդեն իսկ տեղյակ էր պահվել ձեզ՝ հոգևոր կյանքում նախանձախնդրություն ունեցող ընթերցողներիդ, «Խրատանի Ապաշխարության» մատենաշարի վերջին՝ 8-րդ հատորում: Եվ ինչպես այնտեղ էինք խնդրել, նույնը և խնդրում ենք այստեղ, որ ձեր աղոթքներով աջակից լինեք մեզ՝ այս մատենաշարը անխափան լույս տեսցնելու համար: Մատենաշարի ամեն մի հատորյակ կներկայացնի հիմնականում այն հայրերին, որոնց թե վարքը և թե ուսուցումները պահպանվել են: Թերևս հարց առաջանա, թե ինչո՞ւ ենք անդրադառնում Սուրբ Հայրերի գրվածքներին, չէ որ աշխարհում կան ամենատարբեր, այսպես կոչված, աշխարհահռչակ քարոզիչներ, աստվածաբաններ և նույնիսկ, հրաշագործներ: Նախ, ասենք, որ Հայրերի խոսքերը թանկարժեք քարեր և կրակի միջով անցած ոսկի են և ոչ ծղոտ և փայտ, և ժամանակը ոչ մի վնասակար ազդեցություն չի կարող ունենալ նրանց վրա: Իսկ արևմտյան մի շարք քրիստոնյա երկրների եկեղեցիներում Սուրբ Հայրերի ուսուցումից հեռանալու պատճառով, ընկել են դիվային որոգայթների գուբը և տեղիք տալով չարին, թավալվում են ապականության մեջ: Արդեն վաղուց սրանցից շատերն օրինում են միասեռականությունը, պսակի կարգ կատարելով սրանց վրա և այս նողկալի ախտը համաճարակի պես տարածվում է արևմուտքի շատ եկեղեցիներում, իհարկե, եթե կարելի է դեռ սրանց եկեղեցի անվանել: Սկսել են մկրտել ամեն տեսակի կենդանիների: Որոշները իրենց, այսպես կոչված, պաշտամունքի ժամանակ, հանկարծ բռնկվում են դիվային ծիծաղով և տապալվում գետնին, և դա նրանց մոտ կոչվում է «սուրբ ծիծաղ», և ապա դուրս գալով, սկսում են փսխել, և այս խելագարությունը համարում են քրիստոնեական աստվածպաշտություն: Բայց սա դեռ բոլորը չէ, չարժե էլ ամբողջի մասին գրել: Քանզի դեռ կան բաներ, որոնք կատարվում են Գերմանիայի որոշ եկեղեցիներում, այնպիսի սրբապղծություններ, որը վերը նշվածներից

առավել գարշանք կարող են պատճառել: Եվ այս բոլորը այն բանի հետևանքով, որ մի կողմ թողեցին Սուրբ Հայրերի ժառանգությունը և սկսեցին քայլել ինքնակամ:

«Ես գիտեմ ոմանց, որոնք բազում ջանքից հետո շեղվել են ճանապարհից և մտավոր խանգարում ստացել, որովհետև իրենց հույսը դրել էին իրենց իսկ գործերի վրա՝ համարելով, որ դրանք աստվածահաճո բնույթ են կրում: Դրանով և խեղաթյուրել են Նրա պատվիրանը, Ով ասաց. **«Հարցրու քո հայրերին, և քեզ կպատմեն, քո ծերերին, և նրանք քեզ կասեն»** (Բ Օր. 32-7) (Անտոն Անապատական): Սուրբ Հայրերը սովորեցնում են, թե ինչպես պետք է պատերազմել աներևույթ թշնամիների դեմ, ինչպես քայլել նեղ և անձուկ ճանապարհով, ինչպես համբերել վշտերին և, վերջիվերջո, ինչպես աստվածահաճո կերպով կենցաղավարելով հասնել բարի վախճանի: Գրված է. **«Հիսուս Քրիստոսը նույնն է երեկ, այսօր և հավիտյան»**, այսինքն՝ ինչը մեղք էր համարվում առաջ, նույն է և այսօր, և ինչը առաքինություն էր համարվում առաջ, նույնն է և հիմա: Հայրերը սովորեցնում են, թե ինչպես պետք է բժշկվել բարկությունից, նախանձից, շնությունից, որկրամոլությունից, արծաթսիրությունից և աշխարհսիրությունից և հազարավոր այլ մոլություններից, իսկ այժմ ժամանակակից այս ուսուցումները, մեղքի դեմ ուղղված ճգնությունները համարում են հետամնացության հետևանք՝ անտեսելով Առաքյալի խոսքը, որ կոչ էր անում արյուն թափելու չափ հակառակվել մեղքին: Հայրերի խոսքերը ծանր խարսխի են նման, և եթե այդ ծանրությունը չլինի, դիվային փոթորիկները իսկույն կկործանեն մեր հոգևոր նավը: Այս ծանրության պատճառով է, որ շատերը խուսափում են այդ ուղով գնալուց, և իրենց մարմնավոր կրքերից գերված, պայքարում են իրենց իսկ փրկության դեմ, տեղիք տալով թշնամական ներշնչումներին. «Մեր ժամանակներում Սուրբ Հայրերի աշխատությունների տարածումը հատուկ դիմադրության է արժանանում մերժված ոգիների կողմից, նրանք մարմնավոր իմաստությամբ առաջնորդվող մարդկանց ներշնչում են ամենատարբեր մտքեր՝ ջանալով հակառակվել և դիմադրել այդ հոգեշահ գրականության տարածման գործին» («Հոգևոր պատերազմ» գրքից): Եվ եթե ոմանք էլ գերադասում են իրենց Սուրբ նախնիների ճանապարհով գնալ, սրանք թշնամաբար են տրամադրվում նմանների նկատմամբ. «Թշնամու գործելակերպն

այսպիսին է՝ հոգևոր կյանքում առաջադիմողների մասին կարծիք է ստեղծում, թե նրանք շեղված են հոգևոր ուղուց և հմայված սատանայի կողմից, այլոց մասին կարծիք է ստեղծում, իբր թե նրանք խռովարարներ են» («Հոգևոր պատերազմ»):

Սուրբ Հովհան Ոսկեբերանն ասում էր, որ բոլոր աղանդները առաջացել են Սուրբ Գրքի ոչ ճիշտ ընկալումից և դրանից խուսափելու համար խորհուրդ էր տալիս միշտ օգտվել Սուրբ Հայրերի մեկնություններից: Ուրեմն, հարկ է խուսափել նման ուսմունքներից, որոնք չեն հիմնված Իմաստուն Այրերի՝ մեր Սուրբ նախնիների ուսմունքի վրա, քանզի բոլոր նշված օրինակներից պարզ է, թե ինչ հետևանքներ կարող է ունենալ նման «ժամանակակից» ընթացքը, որից թող Աստված անարատ պահի մեր Սուրբ Եկեղեցին, մեր Սուրբ Հայրերի բարեխոսությամբ: Այժմ անցնենք նորից Սուրբ Հայրերի ուսմունքի մասին խորհրդածելու, թե ինչպես կարելի է այն ընկալել, ճիշտ է նրանց գրվածքները սխալ ընկալելը կարող է բերել շեղումների, բայց այդ պատճառով խուսափել այդ գրականությունից, նույնն է, թե «գայլից վախենալ և անտառ չմտնել»: Շատ այլ եկեղեցիներ, մասնավորապես Ռուս Օրթոդոքս Եկեղեցին, հաջողությամբ լուծել է իր համար այդ հարցը՝ Սուրբ Հայրերի գրվածքները մեկնելով ըստ պատշաճի, որով և հոգևոր բարձունքների է հասցնում իր համայնքի հավատացյալներին:

Եվ այսպես, անցնենք Երանելի Աբբա Զոսիմոսի զրույցներին: Այս զրույցները մեկ անգամ ևս, մյուս այլ հայրերի ուսուցումների պես, նորից մատնանշում են ռազմի այն դաշտը, որտեղ ընթանում է բարի պատերազմը, այսինքն՝ մարդու սեփական սիրտը: Այնտեղ պայքարելով մեղքի հետևանքով գլուխ բարձրացրած կրքերի դեմ և Աստծո շնորհով նրանց զսպելով և արմատախիլ անելով, քրիստոնյան տեղ է պատրաստում իր մեջ Տիրոջ Թագավորության համար, ինչպես որ հրահանգում էր Հովհաննես Մկրտիչը, թե՝ **«Պատրաստեցե՛ք Տիրոջ ճանապարհը և հարթեցե՛ք նրա շավիղները: Բոլոր ձորերը թող լցվեն, և բոլոր լեռներն ու բլուրները թող խոնարհվեն, դժվարին ճանապարհները հեշտ թող դառնան և առապարները՝ հարթ ճանապարհներ, և ամեն մարմին կտեսնի Աստծու փրկությունը»** (Ղուկ. 3:5-6):

Այսինքն, Տիրոջ գալուստը մեր սրտերի մեջ ընդունելու և Աստծո փրկությունը ժառանգելու համար, հարկ է հետևել Սուրբ Մկրտչի

պատգամին, այն իրագործելով մեր մեջ: Եվ դա կարելի է իրականացնել Սուրբ Հայրերի ճանապարհներին հետամուտ լինելով, և դա մի օրվա բան չէ, այլ միայն հարատև պայքարի հետևանքով է, որ կարելի հասնել այդ իրավիճակին և դա հենց այն փնտրտուքն է, որի համար ասվեց. **«Երկնքի արքայությունը այս կողմ, այն կողմ մի փնտրեք, այլ ձեր մեջ»:** Մենք չենք կարող հասնել այն սիրուն, հեզությանը, խոնարհությանը և մյուս այլ առաքինություններին, եթե ըստ պատշաճի չջանանք դրանց համար՝ հուսալով Աստծո աջակցությունը: Ինչպես որ ջանք չի պահանջվում, որպեսզի աճեն և տարածվեն մոլախոտերը, նմանապես և մեր չար կրքերը, սովորությունները և այլն, իսկ երբ հարկ է լինում ստանալ օգտակար որևէ բանջարեղեն կամ միրգ, ապա պետք է հողը փափկեցնել, բարի սերմը ցանել և ապա ամեն տեսակի խնամք տանելով, ջանալ և քրտինք թափել, որպեսզի Աստծո ողորմությամբ բարի պտուղները առաջ գան: Նմանապես և հոժարակամություն, ջանք և քրտինք է պահանջվում առաքինությունների աճի համար: Եթե աղոթքը, ողորմությունը, անձը խոնարհեցնելը, եկեղեցում մի քանի ժամ ոտքի վրա կենալը, ծոմ պահելը, ժուժկալությունը թեթև և հաճելի բաներ լինեին անվարժ մարդու համար, ապա ամբողջ աշխարհը կդառնար քրիստոնյա, և էլ հարկ չէր լինի ասել, թե՝ «Նեղ և անձուկ է փրկության ճանապարհը, և շատ քչերն են, որ գնում են նրանով»: Սակայն երանելի են նրանք, որոնք այս կարճ և վաղանցուկ կյանքում ջանում են և քրտինք թափում այդ նեղ ճանապարհով առաջանալու համար, որպեսզի այն ահավոր օրը դասվեն բարի և հավատարիմ ծառաների հետ. **«Եղբայրներ, ամենայն ուրախության արժանի համարեցեք, երբ տեսակ-տեսակ փորձությունների մեջ ընկնեք, իմացեք, որ ձեր հավատի փորձը համբերություն է առաջ բերում, իսկ համբերությունը թող լիակատար արդյունք ունենա, որպեսզի անթերի և կատարյալ լինեք, ոչ մի բանով պակաս չլինեք»** (Հակոբ. 1: 2-4):

Քրիստոնեությունը միակ կրոնն է, որ առաջնորդում է դեպի ճշմարիտ բարի կատարելության, և Նրա պատվիրանները, որոնցով հարկ է առաջնորդվել, գերբնական են, և ոչ մի մահկանացու ի զորու չէ այն պահել, դրա համար իսկ Սուրբ Հայրերը ջանում էին արտասուքների բխմամբ իրենց տկարությունը Տիրոջ առջև բերել և ստանալ Նրա օգնությունը՝ պատվիրանապահության համար: Եվ նրանց՝ Հայրերի ժա-

ռանգությունը, ուսուցանում է մեզ, թե ինչպես քայլել այդ ճանապարհով, ինչպես է պետք մաքրել հոգին արատներից, աղտեղություններից և բժշկել այն խոցերից, այսինքն՝ ինչպես ձերբազատվել հին Ադամի ժառանգությունից և ինչպես անել, որ Նոր Ադամը՝ այսինքն Քրիստոսը, թագավորի մեր մեջ: Որպեսզի ընկալելի լինի, թե ինչ ասել է՝ անձը սրբել արատներից, բերենք մի երկու օրինակ «Հարանց Վարքից»: Իսկ մինչ այդ հիշենք, թե ինչպես են կանայք մաքրում այրված կերակուրից սևացած կաթսան, ինչպես են քերում այն մետաղական ցանցերով և դանակով, նման ձևով և հոգին պետք է քերել այդ սևացած մնացուկներից, իսկ քերելու գործիքները հոգու համար ամենատարբեր են, նայած ինչ կրքից է հարկ մաքրել: «Խրատանի Ապաշխարության» մատենաշարի հատորներում կարելի է գտնել համապատասխան միջոցներ դրանց համար: Իսկ այստեղ բերվելիք օրինակները հիմնականում ցույց են տալիս, թե ինչպես է պետք մաքրվել հպարտությունից, փառամոլությունից, մարդկային գովքի ակնկալիքից, բարկությունից, թշնամությունից և սրանցից բխող բազում այլ չարիքներից:

Եվ ահա «Հարանց Վարքում» պատմվում է մի ծերի մասին, որը իր առաքինությունների պատճառով ճանաչված և սիրված էր բոլորի կողմից: Սակայն Երանելին իր այդ վիճակը բերելով Տիրոջ առջև, այսպես աղոթեց. «Ով Տեր, չկա մեկը, որ ինձ հանդիմանի և նախատի, և եթե այսպես շարունակվի, ես դժոխք կգնամ»: Տերը շուտով կատարեց նրա խնդրանքը, և վանք եկավ մի երիտասարդ ամբարտավան վանական և սկսեց ծաղրել և ամեն տեսակի լուտանքներ թափել Երանելու վրա: Իսկ ծերը աչքի լույսի պես էր նայում նրան և զգուշանում, որ ինչ-որ մեկը հանկարծ չնեղացնի, և նա չհեռանա վանքից: Քանզի նրան նկատում էր որպես բժշկարար մի միջոցի իր հոգու համար, այս միջոցով իր անձը ճնշելով, տանում էր խոնարհության ճանապարհով: Իսկ մենք, ցավոք, ամեն ջանք թափում ենք, որ խուսափենք նման, թեկուզ և ցավոտ, սակայն բժշկարար միջոցներից և շրջապատում ենք մեզ նրանցով, ովքեր գովաբանում և սիրաշահում են մեզ՝ ի կորուստ մեր թշվառ հոգու: Այնինչ հարկ է Հայրերի օրինակներից խանդավառվել և ջանալ նմանվել նրանց, այլ ոչ թե այն մերժելով, ընդունել թեթևը ու հեշտը, որ առաջարկվում են վերջին օրերի մոլար ուսուցումները, քանզի գրված է. «Վայ նրան, ով բարուն չար ասի և չարին՝ բարի»:

Ահա ևս նմանօրինակ մի պատմություն: Մի հավատավոր առաքինի կին, գալով տեղի վանահոր մոտ, ասում է նրան. «Ով հայր, դու գիտես այս վայրում ապրող կարիքավոր այրիներին: Ուղարկիր ինձ մոտ մեկին, որպեսզի նրա համար խնամք տանեմ»: Ծերը գովելով այս կնոջը իր բարի նպատակի համար, ուղարկում է նրա մոտ մի հեզ ու խոնարհ այրու: Այս կինը սկսում է ամեն կերպ խնամք տանել այրու համար, նա էլ իր հերթին օրհնում է այս կնոջը, շնորհակալ լինելով ամեն բանի համար: Մի քանի օր անց այս կինը նորից գալիս է վանահոր մոտ և ասում. «Ներիր ինձ, հայր, բայց սա իմ ուզածը չէր, խնդրում եմ մեկ ուրիշին ուղարկիր այս այրու փոխարեն»: Ծերը զարմանալով այս բանի վրա, նրա մոտ ուղարկեց մի աղմկարար և չարալեզու այրի կնոջ: Կինը նորից սկսեց ամեն ջանք թափել հիմա էլ այս այրու համար, սակայն շնորհակալ լինելու փոխարեն, սա միշտ դժգոհում էր և վիրավորում: Իսկ կինը նորից գալով վանահոր մոտ ասում է. «Շնորհակալ եմ, հայր, սա այն է, ինչ ես ուզում էի»: Աշխարհիկ մտածողություն ունեցող մարդու համար այս բանը, իհարկե, տարօրինակ կթվա: Սակայն այս իմաստուն ու առաքինասեր կինը չէր ուզում ձրիաբար աշխատել այրիների համար, և իր ջանքերի համար, որ թափում էր, նրանցից էլ որպես վարձք, պահանջում էր խնամք՝ իր հոգու համար: Համարելով որպես թեկուզ և դառը, սակայն բժշկարար դեղամիջոցներ այս այրու հասցրած վիրավորանքը և անշնորհակալ վերաբերմունքը և այն ամենը, ինչը հակառակ է մեղավոր մարդու կրքոտ սրտի ցանկություններին: Եվ ահա թե ինչպես է բնորոշում նման վիճակը Սուրբ Պետրոս Առաքյալը՝ դիմելով նրանց, ովքեր ծառայության լուծ են ուզում վերցնել իրենց վրա. **«Ծառաներ, ամեն ինչում հնազանդ եղեք..., ոչ միայն բարիներին և հեզաբարոներին, այլև կամակորներին, քանի որ Աստծուց է այն շնորհը, երբ մեկը հանիրավի վիշտ է կրում բարի խղճով, քանզի ի՞նչ երախտիք կունենաք, եթե մեղանչելուց հետո, տանջվեք և համբերեք: Իսկ եթե բարիք գործեք ու չարչարվեք և համբերեք, այդ շնորհը Աստծուց է, որովհետև այդ բանի համար իսկ կոչվեցիք, քանի որ Քրիստոս էլ ձեզ համար մեռավ և ձեզ օրինակ թողեց, որ Իր հետքերով գնաք, Նա, որ մեղք չգործեց և Նրա բերանում նենգությունը տեղ չգտավ, Նա, որ նախատվելով, փոխարենը չնախատեց, չարչարվելով չսպառնաց»** (Ա Պետր. 2: 19-24):

Այո, այս ամենը լրիվ հակառակ է լայն ճանապարհով գնացողների մտածելակերպին: Սակայն մեզ պետք է մեր անձերը վարժեցնենք նեղ և անձուկ ճանապարհին: Պատկերացրեք մետրոյի շարժասանդուղքները, որը մարդկանց ստվար խմբերը իջեցնում է ներքև, սա նման է այն բանին, որ երբ մարդիկ ծնվում են, ընթացք են վերցնում դեպի մահ. **«Հող էիր և հողին պիտի դառնաս»:** Պատկերացնենք այժմ, որ աստիճաններով իջնելու պահին մեկին ասեն, թե ձեզ մեծ վտանգ է սպասվում ներքևում, դարանակալ թշնամիներ կան այնտեղ, որոնք ձեր կորուստն են փնտրում: Ի՞նչ կաներ այդ մարդը, ահաբեկված այդ լուրից, նա իսկույն հետ կդառնար: Բայց որքան արգելքների նա կհանդիպի հետդարձի ճանապարհին. նախ հարկ է ջանալ ինքնստինքյան ներքև իջնող աստիճաններին հակառակ բարձրանալ, որը խորհրդանշում է՝ մեր մեղավոր բնությանը հակադրվել և գործել նրան հակառակ: Եվ ապա անհոգ ներքև իջնող ամբոխի անդորրը պիտի խախտվի՝ այդ հասարակությանը հակառակ գնալու ջանքերից: Սրանք էլ իրենց հերթին կանպատվեն, կնեղեն, կծաղրեն, միգուցե հարվածեն և ամեն տեսակի այլ արգելքներ կառաջացնեն: Սակայն, որպեսզի այս արգելքները հաղթահարվի, պետք է անձնուրացություն, անձը խոնարհեցնել այդ բոլոր վիրավորանքների տարափի տակ և ինքնաարդարացման ջանքեր չանել, որ կարող է վեճի պատճառ լինել և կասեցնել վերելքը, իսկ այդ ընթացքում աստիճաններն իջնում են դեպի վար: Այդ մարդկանց մեջ կարող են լինել ոչ միայն, անծանոթներ, այլև մեր հայրը, մայրը, երեխաները և այլն:

Այս բանի համար էլ ասվեց. **«Չեք կարող գալ Իմ ետևից, եթե չուրանաք ձեր հորը, մորը, երեխաներին, և եթե ձեր անձն էլ չուրանաք, չեք կարող ձեր խաչը վերցնել և իմ հետևից գալ»** (Ղուկ. 16: 24-25):

Այո, այս բոլոր արգելքները հաղթահարել կարելի է միայն սեփական անձի ուրացման ճանապարհով, որի ուրացման սքանչելի օրինակներ և վարժություններ էին վերը նշված այդ երկու պատմությունները: Չպետք է երկնչել այդ ճանապարհը բռնելուց, քանզի դրա համար հարկ է ունենալ ամուր հոժարակամություն, և այդ ժամ Աստծո շնորհը կհասնի և կոգնի մեզ հաղթահարելու այդ բոլոր արգելքները, ըստ Երանելի Հայր Զոսիմոսի զրույցների:

Ահա թե ինչպես է մեկնում Սուրբ Հովհան Ոսկեբերանը 9-րդ սաղմոսի

առաջին համարը, որում ասվում է. «Խոստովանում եմ Քեզ, Տեր, իմ բոլոր սրտով: Քո բոլոր սքանչելիքները պիտի պատմեմ»: Խոստովանությունը լինում է երկու տեսակ, այն կամ սեփական մեղքերի խոստովանությունն է, կամ էլ Աստծուն գոհություն մատուցելը: Այստեղ վերջինս գոհության իմաստը ունի: Ի՞նչ է նշանակում՝ «Իմ բոլոր սրտով», այսինքն՝ ամենայն պատրաստակամությամբ և ջերմեռանդութ-յամբ ոչ միայն բարիքի համար, այլև սրա հակառակ իրավիճակում: Հենց այն է հատկանշական գոհացող և իմաստուն անձի համար, որ շնորհակալ լինի Աստծուն նաև վշտալից իրավիճակներում, փառավորելով նրան ամեն ինչի համար, ոչ միայն բարիքների, այլև պատժի համար: Սրանով անձն արժանանում է մեծ շնորհի: Գոհություն հայտնելով, բարերարությունների համար, դու քո պարտքն ես կատարում, իսկ գուհություն հայտնելով վշտալի, աղետալի իրավիճակներում, դու դրանով Աստծուն դարձնում ես քեզ պարտական: Ով վայելում է բարիքներ և երախտապարտության զգացումով է լցվում, նա կատարում է այն, ինչ որ հարկն է, իսկ ով ընկնում է նեղությունների և վշտերի մեջ և փառավորում է Աստծուն, նա իր համար վարձք է պատրաստում: «Նման գոհունակության համար Աստված շնորհում է նրան այլ պարգևներ թե այստեղ, և թե այնտեղ, այսպես որ, մեր համար նեղություններն սկսում են դառնալ դյուրակիր»:

Սուրբ Ոսկեբերան հայրապետն այստեղ մատնանշում է այն բանը, որ փորձություններից և վշտերից խուսափելով չէ, որ պիտի արժանանանք երկնքին, այլ այդ ամենը գոհությամբ կրելուց: Իսկ մեկը կասի, որ դրանք չափազանց ծանր են, այո, այդպես է, բայց երբ սկսես անձդ վարժեցնել այդ դառնություններին, ժամանակի հետ Աստծո օգնությամբ դա կդառնա դյուրակիր և նույնիսկ ախորժալի: Օրինակ, երբ երեխային տալիս ես դառնահամ մի բան, ասենք՝ ձիթապտուղ կամ նման մի այլ բան, նա տհաճություն զգալով ետ է մղում այն, քանզի սովոր լինելով քաղցրությունների և այլ դյուրամարս կերակուրների, չի կարողանում ուտել այս: Եվ չի հասկանում, թե ինչու են մեծ տարիք ունեցողներն իրենց տհաճություն պատճառում՝ ուտելով նման դառնահամ բաներ: Բայց երբ որ կամաց-կամաց սկսում է սովորել դրանց, տարիքի հետ արդեն ոչ թե տհաճությամբ, ինչպես որ փոքր ժամանակ, այլ արդեն հաճույքով է սկսում ճաշակել նման բաներ: Հոգևոր կյանքում

էլ նորադարձը սնվում է հոգևոր մանկական սննդով և զարմանում, որ մեծերը, այսինքն՝ Սուրբ Հայրերը և նրանց ճանապարհով գնացողներն ընդունում են նման կոշտ և դառնահամ կերակուրներ:

Ցավոք, շատերն առաքելական ժամանակներից մինչ օրս, խուսափում են իրենց անձերը այդ դառը և կոշտ կերակրին վարժեցնելուց և մնում են մանկական սննդի վրա, որի համար և Պողոս Առաքյալը ասաց. «Ժամանակն էր, որ դուք կոշտ կերակուր ուտեիք, իսկ դուք դեռ կաթ եք խմում»: Այս պատճառով նման քրիստոնյաները տկար և թույլ մի վիճակում են գտնվում և չեն ուզում իրենց անձերը վարժեցնել խաչակրության, օրինակ ունենալով Սուրբ Հայրերին, որոնց զրույցներն ու խրատները՝ Տիրոջ ողորմությանը հուսալով, կջանանք տպագրել այս մատենաշարում: Եվ շարունակում է Սուրբ Ոսկեբերան Հայրապետը՝ ասելով. «Ոչ ոք չի վշտանում այն բանի համար, ինչի համար, որ գոհություն է հայտնում Աստծուն: Նման ձևով մենք կարող ենք այստեղից ստանալ ևս մի օգուտ, այն է՝ ազատվել վշտերից: Եթե դու զրկվելով ունեցվածքիցդ, գոհություն ես հայտնում, այդ կորուստը քեզ այնքան չի վշտացնի, որքան որ կուրախացնի գոհունակության զգացումը: Սա ծանր հարված է սատանայի համար, և այս բանը հոգին դարձնում է իմաստուն և սովորեցնում ճշմարտապես դատողություն անելու այժմեական իրերի վերաբերյալ: Մարդկանցից շատերը չունեն ներկայիս իրերի հանդեպ ճշմարիտ ընկալում, այս պատճառով էլ նրանք ընկնում են տրտմության մեջ: Միայն մտագարներն են վախենում այն բանից, ինչը որ վախենալու չէ, նրանք հաճախ սարսափում են գոյություն չունեցող բաներից և ստվերներից: Սրանց են նման և նրանք, ովքեր վախ ունեն ունեցվածքի կորստի հանդեպ: Նման վախը չի առաջանում իրերի առանձնահատկությունից, այլ մեր կամքից: Եվ իսկապես, եթե սա իրականում վշտացնող բան լիներ, այդ ժամ հարկ էր, որ վշտացներ բոլոր ունեցվածքից զրկվողներին, և քանի որ մենք ոչ բոլորս ենք սգում նման կորստից, ուրեմն, այս առաջանում է ոչ թե այն բանի համար, որ սա բնորոշ է նման իրավիճակին, այլ սրա պատճառը հոգու անկատարությունն է: Ով որ գտնվում է մթության մեջ, հաճախ վախենում է պարանից՝ նրան օձի տեղ դնելով, ամեն ինչին վերաբերվում է կասկածամտորեն և ընկերներին էլ թշնամի է համարում: Այսպես և անխոհեմ մարդիկ, կարծես գտնվելով խոր մթության մեջ, չեն կարողանում ճանաչել իրավիճակները և

սողալով ցեխերի և մոլախոտերի մեջ, չեն համարում այն որպես անպիտան մի բան»: Ահա խաչի ճանապարհի ճշմարիտ մեկնաբանումը, որի մասին ավելի ծավալուն կտեղեկանաք Աբբա Զոսիմոսի զրույցներից: Այսօր բազմապիսի վարդապետություններ են շրջում, սրանցից ոմանք շեշտը դնում են շնորհի վրա ասելով՝ **«Մենք շնորհի տակ ենք և ոչ՝ օրենքի»,** և այս բանից մղվելով՝ ընկնում են անհոգ վիճակի մեջ, սխալ ընկալելով շնորհի դերը փրկության համար: Շնորհը դարձի եկած քրիստոնյային օգնում է հաղթահարել դժվարությունները, արգելքները, որոգայթները և հասնել Երկինք: Իսկ ասելով՝ **«Շնորհի տակ ենք և ոչ՝ օրենքի»**, սրանից գալիս են այն եզրակացության, որ մեղքի դեմ պատերազմելը, իզուր ժամանակ վատնել է նշանակում: Իհարկե, սատանայի մեծ աջակցությամբ է, որ նրանք ոչ շնորհի, ոչ օրենքի դերը չեն կարողանում ընկալել և գլորվում են գաղջության գուբը, դեռ չսկսած պատերազմը, շուտով այն դադարեցնում են՝ համարելով իրենց արդեն իսկ երկնային քաղաքացիներ: Կա նաև մի այլ վարդապետություն, որը մղում է ահով և դողով փրկությունն իրագործելուն, հիշեցնելով մահը, Ահեղ Դատաստանը, դժոխքի անվերջանալի տառապանքները և նմանատիպ այլ հիշեցումներով սրբության կյանքի կոչ անում, սակայն ցույց չի տրվում ճանապարհ, թե ինչպես է պետք այդ երկյուղից մղվելով աճել սրբության ճանապարհի մեջ: Կոչ է արվում չթմրել, այլ բարի պատերազմը մղելու ջանք անել, սրանով կարծես քնից արթնացնում է և բերում մարտադաշտ, սակայն թե ինչպես են մղում այդ պատերազմը, դրա մասին ոչ մի խոսք չի ասվում: Այս պատճառով նման վարդապետությունը վերը նշվածի պես, թեկուզ և սխալ չէ, սակայն թերի է և, ինքնըստինքյան անօգուտ և վնասակար: Նման վարդապետությունը հասցնում է կամ հիասթափության, կամ հուսահատության, կամ ինքնախաբեության: Իսկ Սուրբ Հայրերն ուսուցանում են, թե ինչպես կարելի է ձեռք բերել այդ փրկարար երկյուղը և թե ինչպես վարվել նրա հետ: Նրանք հմուտ մարտիկներ էին, և ինչպես որ աշխարհի մարդիկ գիշեր ու զօր ջանք են թափում՝ աշխարհի բարիքներին տիրանալու համար, նմանապես և հոգևոր Հայրերը երկնայինի համար էին ճգնում, այդ ճանապարհին անտեսելով ամեն բան, ինչպես որ ասում էր Առաքյալը, թե՝ **«Ամեն բան ետևս թողած՝ ձգտում եմ առաջիններին, որպեսզի արժանանամ փառաց պսակին»:**

Հայրերն ասում են, որ այս փրկության ճանապարհին գործածիր ամեն բան, ինչ-որ կարող ես, ինչպես որ Հակոբը, չնայած որ զրկվեց իր ապուրից, սակայն տեղը ստացավ առաջնեկությունը, և չնայած որ զրկվեց իր ամբողջ ժառանգությունից, փոխարենն ստացավ Իսահակի օրհնությունը, կարծես թե ոչ արդար ճանապարհով, բայց այստեղ կարևորը արդյունքն է և ոչ թե այն ձեռք բերելու կերպը: Բայց Հակոբը իր հոգևոր ձեռքբերումների համար վճարեց իր նյութականն անմնացորդ տալով դրա փոխարեն, այն առակի նման, որ գանձ գտնողը գնաց, վաճառեց իր ամբողջ ունեցվածքը և գալով՝ գնեց հողակտորը, որի մեջ գտնվում էր գանձը: Եվ Տերը Հակոբի նման արարքը ահա թե ինչպես գնահատեց. **«Եսավը Հակոբի եղբայրը չէ՞ր, -ասում է Տերը, -Ես սիրեցի Հակոբին, բայց Եսավին ատեցի»** (Մաղաք. 1:2):

Եվ այսպես, այս մրցասպարեզում կարող ես դիմել ամեն մի քայլի, որպեսզի առաջ անցնես և հասնես խոստացված բարիքներին, կարող ես մեկին հրելով մի կողմ գցել, մյուսի հագուստից քաշելով կասեցնել նրա ընթացքը՝ ինքդ առաջ անցնելով, և սրանց նման այլ բաներ: Ի-հարկե, առաջին հայացքից այս խոսքերը տարօրինակ կթվան, սակայն սրանց պետք է նայել հոգևոր աչքերով, և ահա թե ինչպիսի պատկեր կստացվի դրանից. երբ ասվում է թե մեկին հրելով կարող ես մի կողմ գցել, սա նշանակում է, որ եթե մեկին հանձնարարեն մի ծանր և տհաճ գործ, դու առաջ ընկիր և հավատացրու, որ դու այդ գործը կանես ավելի հեշտությամբ, քանզի սիրում ես նման գործ անել, չնայած որ դա այնքան էլ այդպես չէ, և ահա դու նրան մի կողմ հրեցիր և առաջ անցար: Հագուստից քաշելով ետ պահել և ինքդ առաջ անցնելը սա է. եթե երկուսիդ տրվել է մի հանձնարարություն, և ընկերդ թերացել է դրանում ու պիտի տույժ կրի, աշխատիր նրան ետ պահել և ներում խնդրելով՝ քեզ վրա վերցնել այդ նախատինքը, ասելով, որ դու ես մեղավոր այդ թերացումների համար: Եվ ահա դու նրան պահելով առաջ անցար նրանից: Կարող է պատահել, որ տարբեր որակի հագուստ կամ մի այլ բան նվիրեն ձեզ, երբ խմբովին մի տեղ եք հավաքված, պետք չէ շտապել ամենալավը ձեռք բերել, քանզի այդ դեպքում վատը ինքստինքյան կհասնի մեկ ուրիշին, դու կուրախանաս լավը ձեռք բերելով, բայց շուտով ուրախությունդ կանցնի և դրան կհետևի գաղջությունը, իսկ եթե աղոթես, որ Տերը քեզ զորացնի, որ մնաս տեղումդ

նստած, մինչև որ բոլորը ջոկեն վերցնեն, և ապա տակը ինչ որ մնա, և եթե նույնիսկ ոչինչ էլ չմնա, գոհությամբ Տիրոջ ձեռքից ընդունես, Տիրոջ շնորհով սիրտդ կբերկրի և կուրախանաս եղբայրներիդ ձեռքբերումով, և ահա դու նորից առաջ անցար: Ահա նաև նմանատիպ մի այլ օրինակ Սուրբ Հայրերից: Երկու եղբայր սիրով ապրում էին մի խցում, այնպես պատահեց, որ նրանցից մեկը ընկավ ծանր մի մեղքի մեջ և հուսահատվելով՝ ուզեց թողնել անապատը և հեռանալ աշխարհ, մյուս եղբայրը, ինչքան էլ որ համոզեց, ոչինչ չկարողացավ անել և ասաց. «Ի՞նչ ես կարծում, իմ այս ճգնությունները, որ ես արել եմ հանուն Աստծո մի որևէ արժեք ունե՞ն»: Մեղանչող եղբայրը պատասխանեց. «Ես համոզված եմ, որ դու մեծ վարձք ես դիզել երկնքում»: «Այդ դեպքում, -ասում է այս եղբայրը, -ես իմ ամբողջ վարձքը, որ ունեմ երկնքում, դնում եմ քո մեղքի փոխարեն, եթե համաձայնվես մնալ»: Այս բանից խանդավառված մեղանչող եղբայրը մնաց անապատում, և շարունակեցին իրենց վանական կենցաղավարությունը: Մի առ ժամանակ անց, մեղանչող եղբայրը հիվանդացավ և մահացավ: Իսկ այս մյուսը մի օր իր աղոթական կարգի ժամանակ, հայտնություն ունեցավ. նա տեսավ մահացած եղբոր հոգին լույսերի մեջ, փառք տվեց Աստծուն և հարցրեց եղբորը. «Իսկ ի՞նչ եղավ իմ այն վարձքի հետ, որ ես տվեցի քո մեղքի փոխարեն»: «Տերը այն կրկնապատկեց քո հաշվին»՝ ասաց նա:

Ահա այսպես ամեն բան զոհելով ստանում են առավելը, քանզի կարևոր է, որ իմանաս, թե ինչպես է պետք այդ պահին վարվել, ինչն է հաճո Աստծուն, ինչն է պատճառը մեղքերից մաքրվելու համար, և երկնային վարձքին արժանանալու: «Երբ մեզ վրա են հասնում հիվանդությունները, այդ ժամանակ կատարելագործվում են մեր առաքինությունները, իսկ հավատը փորձությունների մեջ հաստատ պահելով՝ արժանանում ենք պսակի: Հենց սրանում է կայանում մեր և մնացած մարդկանց միջև եղած տարբերությունը, որոնք չեն ճանաչում Աստծուն և չարչարանքների մեջ բողոքում են ու տրտնջում» (Կիպրիանոս Կարթագենացի):

Երբեմն մեզ վիրավորում են կամ անտեղի մեղադրում. ահա թե ինչպիսի դիրք է մեզ պետք գրավել այդ պարագայում, դա կարող ենք իմանալ՝ նայելով Երանելի Սաղմոսերգուի՝ Դավթի օրինակին: Երբ նա փախչում էր Աբիսողոմից, ճանապարհին հանդիպեց Սեեմին և նրա

կողմից արժանացավ նզովքի և հանդիմանության, իսկ Դավթի զորավարներից մեկը ասաց. **«Տեր իմ, ո՞վ է այս սատկած շունը, որ իմ թագավոր տիրոջը նման բաներ ասի, թույլ տուր գնամ նրա գլուխը կտրեմ»:** Սակայն Դավիթը սաստեց նրան՝ ասելով. **«Ի՞նչ բան ունեք դուք ինձ հետ, ով Շարուհայի որդիներ, թույլ տվեք թող ասի, քանզի Տերը նրան ասաց, որ նզովի Դավթին: Իսկ ես գոհությամբ այս կվերցնեմ Տիրոջ ձեռքից, որպեսզի նա նայի իմ վիճակին և ողորմի ինձ»:** Քանզի Դավիթը նման ձևով պատերազմում էր ոչ թե Սեեմիի հետ, այլ սատանայի, և մեծ հաղթանակ կրելով, Աստծո ողորմությանը արժանացավ: Եթե մենք էլ մեր անձերը վարժեցնենք նման ձևով փորձություններին դիմակայել, կդասվենք երանելիների հետ, ըստ Սուրբ Հակոբոս Առաքյալի. **«Երանելի է այն մարդը, որ համբերում է փորձությանը, որովհետև եթե փորձության մեջ հաստատուն լինի, կստանա կյանքի պսակը, որը Տերը խոստացավ Իրեն սիրողներին»** (Հակոբ. 1:12):

Այս պատերազմը տևում է մինչև մեր կյանքի վերջը: Եվ երբեք թույլատրելի չէ թմրել և հանգիստ փնտրել, այլ հարկ է միշտ լինել զգոն, քանզի թշնամին չի ննջում: Իսկ այս բանի համար պետք է ջանալ, որ միշտ Տիրոջ մոտ լինենք, քանի որ դա է մեր փրկության արգասիքը. երբ ոչխարը հովվի մոտ է՝ ապահովության մեջ է, իսկ երբ հեռանում է նրանից՝ ընկնում է մեծ վտանգների մեջ: Իսկ ովքե՞ր են նրանք, որոնք մշտապես Տիրոջ մոտ են գտնվում: Սրանք այն քրիստոնյաներն են, որոնք բարձրանալով առաքինության ամենավերին աստիճաններով, մշտապես իրենց համարում են մաքսավոր և մեղավոր. **«Իսկ դպիրները ու փարիսեցիները, երբ տեսան, որ Նա մաքսավորների և մեղավորների հետ է ուտում, Նրա աշակերտներին ասացին. «Ինչո՞ւ է Նա մեղավորների և մաքսավորների հետ ուտում և խմում», երբ Հիսուս լսեց, նրանց ասաց. «Առողջներին բժիշկ հարկավոր չէ, այլ հիվանդներին, և ես չեմ եկել արդարներին կանչելու, այլ մեղավորներին»** (Մարկ. 2:16-17):

Սուրբ Հայրերը իրենց ամեն կերպ պահում էին մեղավորի դիրքի մեջ, որ չզրկվեն Նրա Սուրբ ներկայությունից, Ով ասաց. «Ես չեմ եկել արդարներին կանչելու, այլ մեղավորներին», սրանից ելնելով միշտ իրենց ներկայացնում էին, որպես հիվանդ և մեղավոր, որ չզրկվեն երկնային հոգատարությունից: Ամբողջ «Նարեկ» մատյանը և բոլոր Սրբերի գրվածքները դա են վկայում: Իսկ ով իրեն այդպես չէր նկատում,

ոչ թե իրեն սուրբ էր համարում, այլ կույր, և լացով խնդրում էր Տիրոջից սեփական մեղքերի տեսություն: Ուրեմն ոչ թե մտածված մեղանչենք, որպես թե պատճառ Տիրոջը մոտենալու, քանզի Առաքյալը ասում է. **«Արդ ի՞նչ ասենք, մնա՞նք մեղքի մեջ, որպեսզի շնորհը բազմանա: Քավ լիցի: Մենք որ մեռանք մեղքի նկատմամբ, ինչպե՞ս տակավին ապրենք նրա մեջ»** (Հռոմ. 6:1):

Այլ մենք էլ խնդրենք սեփական մեղքերի տեսություն, որոնց հանդեպ ցավոք կույր ենք: Իսկ կուրության պատճառը նույնպես Տիրոջից հեռու գտնվելու մեջ է, քանզի Նա ասաց. **«Ես եմ աշխարհի լույսը»**, իսկ լույսից հեռու՝ ուրեմն խավարի մեջ լինել է նշանակում:

Ահա այդ բանը մեկնող մի պատմություն Հայրերի վարքից:

«Մի ծեր կար, որ իր աստվածահաճո կենցաղավարությամբ հասել էր հոգևոր մեծ բարձրունքների, Տիրոջից ստանալով բազում շնորհներ, և այդ տեղի ամբողջ բնակչությունը նրան էր նայում, որպես Աստծո հրեշտակի: Մի օր այս ծերի մոտ եկավ մի հեղինակավոր այր և այսպես դիմեց ծերին.

-Ով սուրբդ Աստծո, խնդրում եմ քո անմերժելի աղոթքների մեջ հիշիր ինձ:

Իսկ ծերը պատասխանեց.

-Ինչո՞ւ ես ինձ նման ձևով դիմում, ես էլ մեղավորի մեկն եմ: Իսկ այցելուն այսպես պատասխանեց.

-Հայր, բոլորը գիտեն, թե դու ինչ սուրբ կյանք ես վարում, իսկ դու ասում ես, թե մեղավորի մեկն ես, կներես ինձ, սակայն այդ խոսքերիդ մեջ արդյոք կեղծավորություն չկա՞:

-Ձավակս, դու ո՞վ ես ի պաշտոնե, -հարցրեց ծերը:

-Ես այս մոտակա գյուղի գյուղապետն եմ, -ասաց այցելուն:

-Իսկ ինչպե՞ս են քեզ նայում գյուղի բնակիչները, -հարցրեց ծերը:

-Դե, ոմանք հարգում են, ոմանք՝ սիրում, ոմանք էլ՝ վախենում:

-Իսկ եթե գնաս քաղաք, այնտեղի ժողովուրդը ինչպե՞ս կվերաբերվի քեզ հետ:

-Կարծում եմ, որ այնտեղ անտարբեր կլինեն իմ հանդեպ, -ասաց գյուղապետը:

-Լավ, իսկ եթե մտնես թագավորի մոտ, այնտե՞ղ ինչպես կվերաբերվեն:

-Դե, այնտեղ ինձ ընդհանրապես մարդու տեղ չեն դնի, -ասաց նա: Ծերն էլ այսպես եզրափակեց խոսակցությունը.

-Այդպես էլ և մենք, զավակս, ինչքան որ մոտենում ենք Աստծուն, այնքան մեր ոչնչությունը և մեղավորությունն ենք տեսնում»:

Իսկ ով իրեն նման ձևով չէ, որ տեսնում է, նա նման է կույր փարիսեցիներին և զրկվում Տիրոջ պահպանիչ աջից:

Իսկ ճշմարիտ դիրքը իրականում այն է, որ մենք ամեն բան ջանանք անել հին Ադամին հակառակ: Նա ինքն իրեն արդարացնելու փորձեր արեց, այդ ճանապարհին մեղադրելով բոլորին, մինչև իսկ Աստծուն, սակայն ինքը դատապարտվելով՝ վտարվեց Դրախտից: Իսկ մենք ջանանք հակառակը անել՝ բոլորին որպես արդար նկատել, իսկ մեզ՝ որպես վերջին մեղավոր, և եթե սքանչելի սրբերը իրենց սրբության մեջ գտնվելով ասում էին թե. «Չկա այր անբարտավան ինձանից բացի ոչ առաջ, ոչ հիմա և ոչ էլ կլինի ապագայում» (Նարեկ), ուրեմն մենք էլ հարկ է, որ միշտ այդպես ջանանք ներկայանալ Տիրոջ առջև:

Ադամն իր մերկությունը ծածկեց թզենու տերևներով, իսկ մենք մեր հոգու մերկությունն ու մեղքերը չծածկենք ինքնարդարացման փուչ ջանքերով, այլ որպես զղջացող մեղավորներ, լանք ու պաղատենք՝ ասելով. «*Զգեցո զիս, Տէր պատմուճանն առաջին, որ մերկացայ մեղօք*»:

Քանզի մեղանչելով Ադամը զրկվել էր լուսե պատմուճանից, Կյանքից, Դրախտից և որ ամենակարևորն է, Աստծո ներկայությունից, և այդ բոլորն ուզում էր շտկել թզենու մի քանի տերևների օգնությամբ, այդպես նա արժեքավորեց այդ բոլորի կորուստը: Մենք էլ, երբ ուզում ենք ինքնարդարացման ուղիով շարժվել և համարելով սա փրկության պատճառ, դրանով ահավոր մեղք ենք գործում, քանի որ այդ միջոցով կարծես ասում ենք, թե հարկ չկար, որ Տերը խաչվեր մեր համար: Այն, ինչ որ Ադամը կորցրեց, դրա ճշմարիտ արժեքը տրվեց միայն Գողգոթայի խաչի վրա: Եվ նույնիսկ այն կաշվե հագուստները, որ Աստված հագցրեց Ադամին, դա դեռ բավարար չէր մերկությունը ծածկելու, ուր մնաց՝ տերևները, քանզի կաշվե հանդերձները խորհրդանշում էին Մովսեսի օրենքները, որոնք էլ փրկելու կարողություն չունեին: Ահա տերևները խղճի ձայնից մղված ինչ-որ քայլեր են, որը հեթանոսների հույսն է, կաշվե հագուստը՝ օրենքը, որը հրեաների հույսն էր, իսկ Քրիստոս Աստծո Գառը որպես միակ ճշմարիտ փրկություն, հույսն է

քրիստոնյաների, որի համար Առաքյալն ասում էր, թե՝ **«Դուք, որ Քրիստոս եք հագել»:** Եվ ահա ինչ մեծ խաբեություն է ինքդ քո վրա հույս դնելը և նաև օրենքին հուսալը, իսկ նրանք, որոնք ճշմարիտ կերպով հուսում են Փրկչին, այդպիսիներն են, որ ամեն ջանք թափում են, որպեսզի վերագտնեն կորցրած Երկնքի Արքայությունը, որի համար ասվեց, թե՝ **«Ձեր մեջ այն փնտրեք»:**

Իսկ Ադամը այն զղջման կոչին, որ ասում էր. **«Ո՞ւր ես, Ադամ»**, սկսեց ինչ-որ բաներ ասել, բայց ոչ երբեք զղջալ ու խոստովանել գործած անօրենությունները: Ադամն ինչպիսի՞ անտարբերությամբ և հեշտությամբ անսաց կնոջը, ոչ մի արժեք չտալով Աստծո տված այդ մի հատիկ պատվիրանին, չէ՞ որ օձն Ադամին չխաբեց, այլ կինն ականջ դրեց, խոսակցության մեջ մտավ, նայեց պտղի ախորժալի տեսքին և խաբվեց: Եվայի մեղքն այստեղ կարծես այնքան մեծ չէր, որքան որ Ադամինը, քանզի Եվան Ադամին խաբելու կամ համոզելու ինչ-որ փորձ էլ չարեց, այլ. **«Իր ամուսնուն էլ տվեց, և նա կերավ»** (Ծննդ. 3:6):

Ինչ աստիճանի արհամարհանք Արարչի հանդեպ, կարծես թե Նրա ասածն Ադամի համար բացարձակ ոչ մի արժեք չէր ներկայացնում: Պողոս Առաքյալն էլ հանդիմանում էր նման կերպով վարվողներին՝ ասելով. «Դուք մեղքի դեմ արյուն թափելու չափ չպայքարեցիք»: Այսինքն՝ մեղքը որպես մահվան պատճառ նկատելով, հարկ էր վերջին ճիգն իսկ գործածելով, այն հետ մղել, իսկ Ադամը ամենաչնչին դիմադրության նշաններ էլ չցուցաբերեց, այնինչ հարկ էր «արյուն թափելու աստիճան» դիմակայել: Սրան նման էր նաև այն փայտ հավաքողը, որը Մովսեսի ժամանակ քարկոծվեց անապատում: Քանզի սա էլ պատվիրանը գիտեր, որ շաբաթը հարկավոր էր սուրբ պահել,սակայն ամենավերջին անհավատի պես արհամարհեց այն՝ ոչ մի արժեք չտալով Աստծո պատվիրանին, ինչը ստանալու ժամանակ նա էլ մյուս իսրայելացիների պես դողում էր սարսափից, մխացող Սինա լեռան մոտ: Նաև չարժեքավորվեց նրա կողմից Կրակի և Ամպի սյունը, որը խորհրդանշում էր Տիրոջ ներկայությունը: Սա էլ Ադամի պես ոչ մի բանից չէր գայթակղվել, այսինքն՝ ոսկի չէ, որ գտել էր, որից գայթակղվելով խախտեր շաբաթը, այն վերցնելով Աքարի պես, և եթե Աքարը ոսկուց գայթակղվեց և քարկոծվեց, ուր մնաց սա, որ մի քանի ճյուղի արժեքի էլ չարժանացրեց Աստծո պատվիրանը: Ճիշտ է, Տերը շաբաթ օրը բժշկում-

ներ արեց և ասաց, որ շաբաթին գերի պետք չէ դառնալ, այլ այն ծառայեցնել բարիք անելու համար, սակայն ոչ կենցաղային ունայն գործերով և անօրինությամբ այն անցկացնել: Եվ չնայած որ թե Ադամի, և թե այս ճյուղեր հավաքողի անտարբերությունն Աստծո հանդեպ վրդովվեցուցիչ և քարկոծելի էր, սակայն մինչ նրանց վրա վրդովվելը, հարկ է նայենք ինքներս մեզ, թե մենք էլ, արդյոք, հաճախակի չէ՞, որ ամենայն անտարբերությամբ գործում ենք նմանօրինակ ահավոր մեղքեր, լեզվի անզսպությամբ, չար բաներին ականջալուր լինելով, աչքերի չար նայվածքով, չար մտածումներով և խորհուրդներով, սրտի մեղավոր շարժումներով, և այլ բազում քարկոծելի բաներով, որոնց համար Ահեղ դատաստանի ժամանակ մեկիկ-մեկիկ պիտի պատասխան տանք: Քանզի Առաքյալը գրում է, որ **«Եթե Սինա լեռան մոտ գտնվողները դողում և սարսափում էին և նման պատիժների արժանանում, ապա ուր մնացինք մենք, որ մոտեցել ենք Երկնային Սիոնին, հրեշտակների բնակարանին, Աստծո Գահին»**: Այո, սրա համար հարկ է մեզ այսօր գիտակցել մեր մեղքերը, ապաշխարել և ջանալ շտկվել, որպեսզի այն ահավոր օրը, որը **«Գողի նման է գալու»,** մեզ անպատրաստ չգտնի:

Ուրեմն, ջանանք արթուն և զգաստ լինել, Տիրոջը միշտ մեր նավակի մեջ ունենալու ձգտմամբ, և եթե փոթորիկների էլ հանդիպենք մեր կյանքում, որն անխուսափելի է փրկության հետամուտ քրիստոնյայի համար, չվախենանք, քանզի Տերը մեզ հետ է: Առաքյալները Տիրոջ ներկայությունը բավարար չհամարելով, Նրան արթնացրեցին, որ գոնե ինչ որ մի բանով՝ թիավարելով կամ նավից ջուր դուրս թափելով իրենց օգնի, սակայն Տերն իսկույն հանդարտեցրեց հողմը, և ծովը խաղաղվեց, բայց և հանդիմանության արժանացրեց նրանց՝ թերահավատության համար: Մենք էլ փորձությունների ժամանակ հարկ է ոչ թե հուսալքվելով դիմենք մարդկային օգնությանը, ինչպես Առաքյալները, որ այդ պահին ընդամենը որպես մի հասարակ մարդու էին ընդունում Տիրոջը և ավելին ոչինչ չէին սպասում Նրանից, քան մարդկային օգնություն: Սակայն հարկ է համբերել փորձություններին, ինչպես որ հետո երանելի սուրբ Առաքյալները և Սուրբ Հայրերը: Պողոս Առաքյալը ահավոր փորձություններ կրեց մինչ իր կյանքի վերջը, սակայն չէր խուսափում դրանցից, այլ դրանց մեջ էր գտնում խնդություն և ուրա-

խություն, իսկ երբ մի բան երանելի է, ինչպե՞ս կարելի է նրանից շուտափույթ ջանալ ձերբազատվել: Այսինքն, Տիրոջ համար նեղություններ և վշտեր կրելը համբերությամբ և իմաստությամբ, իսկապես մեծ երանություն է: Հիշենք, թե ինչպես հրեաների կողմից ահավոր վերքեր ստացած, ոտքերը կոճղի մեջ ամրացած Պողոսը և Շիղան աղոթում և օրհնում էին Աստծուն, օրհնելը այստեղ գոհանալու իմաստն ունի, նրանք չէին աղոթում, որ Տերն իրենց շուտափույթ ազատի, այլ գոհանում էին, որ Տիրոջ սիրո համար արժանացան նման վիճակի, և դրան ի պատասխան, բանտը հիմքից շարժվեց, շղթաները քանդվեցին, բանտապահն իր ընտանիքով դարձի եկավ, իրենց էլ բանտից փառքով ազատ արձակեցին: Ահա փորձության մեջ համբերելու և գոհանալու պտուղները: Ինչպիսի՞ն էր Պետրոս Առաքյալը, երբ Տիրոջը բռնեցին, ինչպես էր վախենում իր կյանքի համար, և ինչպես իր կյանքը փրկելու համար երեք անգամ ուրացավ իր Տիրոջը: Իսկ ինչպիսի՞ն էր նա հետո՝ Սուրբ Հոգով զորացած առաքելական գործունեության ժամանակաշրջանում: Ինչպե՞ս էր նա հալածանքներ կրում ուրախությամբ, որպես թե մեծ շնորհ, իսկ երբ գլխատեցին Հակոբոս Առաքյալին, իսկ Պետրոսին բանտ նստեցրին, այն ժամ ի՞նչ հոգեվիճակի մեջ նա պիտի լիներ, եթե Հակոբոսին գլխատեցին, ինքնըստինքյան իրեն էլ մահ պիտի սպառնար: Սակայն հիմա տեղի էր ունեցել զարմանալի փոփոխություն. բազում զինվորներով շրջափակված մոտալուտ մահվան սպառնալիքի ներքո նա ոչ միայն չէր խռովվում, այլ հանգիստ քնել էր և միգուցե երազում էր ու աղոթում, որ ինքն էլ արժանանա Հակոբոսի ճակատագրին, որ հանուն Քրիստոսի, իր արյունն էլ հեղվի: «Երբ հասնես այն կետին, որ չարչարանքները արդեն քաղցր լինեն քեզ համար և սիրես այն՝ հանուն Հիսուս Քրիստոսի, այնժամ ինքդ քեզ երջանիկ համարիր, որովհետև Դրախտը գտած կլինես երկրի վրա» (Թովմաս Գեմբացի): Այն ժամ, երբ իր կյանքը փրկելու համար ուրացավ Տիրոջը, աքաղաղը նրան դատապարտեց, իսկ այժմ, երբ Տիրոջ համար պատրաստվում էր նահատակվելու, բանտի մեջ դատապարտող աքաղաղի փոխարեն նրան մոտեցավ ավետաբեր հրեշտակը և սքանչելի հրաշքով ազատեց նրան՝ ի ուրախություն և ցնծություն նրա համար աղոթող առաքյալների: Դրա համար էլ գրված է, թե՝ «Ով ուզենա իր անձը ապրեցնի այս երկրի վրա, այն կկորցնի, իսկ ով Տիրոջ համար իր անձը մատնի, այն կգտնի

հավիտենական կյանքի համար»: Այդպես և վարվեցին բոլոր առաքյալները, նաև սուրբ Հայրերը: Մի ծերի մասին գրված էր, որ նա շատ ծանր հիվանդացավ ջրգողությամբ, և երբ հայրերից եկան այցելության և նրա համար ուզեցին աղոթել, ծերը ասաց. «Աղոթեք Տիրոջը, որ զորություն տա ինձ կրելու այս հիվանդությունը գոհությամբ, իսկ ինչ վերաբերվում է բժշկվելուն, ես խնդրում եմ, որ այն դեռ երկարաձգվի»:

Ահա ծերը ոչ միայն չէր խնդրում, որ փորձությունը հեռանա իրենից, այլ որ այն շարունակվի: Սրա իմաստը կհասկանան նրանք, ովքեր փորձառություն ունեն այս բանի մեջ:

Նաև պատմում էին մայր Սառայի մասին, որ Եգիպտոսի միանձնուհիների մեջ երևելի էր իր ճգնակենցաղ վարքով, նա մինչև իր կյանքի վերջը հարձակում էր կրել շնության ոգու կողմից, բայց երբեք չէր խնդրել, որ իրենից հեռացվի այդ պատերազմը, այլ խնդրում էր զորություն, որ ետ մղի սրա գարշելի հարձակումները: Ուրեմն, լավ է փոթորիկ և ալեկոծություն Տիրոջ հետ, քան թե անդորր առանց Տիրոջ: Ինչ Երանելի և օրհնյալ տարիներ անցկացրեցին առաքյալները Տիրոջ հետ, նրանք զորեղ էին, դևեր էին հանում, բժշկումներ անում, կարողություն ունեին երկնքից կրակ իջեցնելու, վայելում էին ժողովրդի սերն ու հարգանքը: Բայց երբ հասավ բաժանման պահը, Տերը խորհուրդ տվեց, որ ապավինեն սրին, այսինքն՝ իրենց անձերին: Երբ Տերը նրանց երեք օրով լքեց, նրանց ուրախությունը վերացավ, իշխանությունը չքվեց, զորությունը ի չիք դարձավ, նրանք վախի ու սարսափի մատնվեցին, իսկ այդ ընթացքում դժոխքում մեծ ցնծություն և ուրախություն էր, քանզի Տերն էր եկել այն ավիրելու և ազատ արձակելու կապված հոգիներին, ինչպես որ ուրախություն էր տիրում Իսրայելում, երբ նրանք Եգիպտոսից դուրս էին գալիս: Այսինքն, ի՞նչ է դուրս գալիս. գերադասելի էր դժոխքում լինել, եթե Տերն այնտեղ է, քան թե երկրի վրա՝ առանց Տիրոջ:

Չար ժամանակներում ենք ապրում, քանզի չկան խրատող, շտկող, մխիթարող և առաջնորդող սուրբ ծերեր, սակայն կան նրանց գրավոր ժառանգությունները, որոնց հետևելով նրանց իսկ բարեխոսությամբ կարող ենք քայլել փրկության «նեղ և անձուկ» ճանապարհով, արժանանալ Սուրբ Հայր Ամոնի ասած երկրորդ սիրույն և ջերմությանը, որով և կարող ենք այս խավար աշխարհում կենցաղավարել որպես Լուսո որդիներ և Տիրոջ օրն անդատապարտ կանգնել Նրա առջև, այլ ոչ թե

սարսափահար եղած, նայենք այս ու այն կողմ և որպես մխիթարություն, ըստ Սուրբ Գրքի, աղաչենք, որ լեռներն ընկնեն մեզ վրա և ծածկեն մեզ ահավոր Ատյանի տեսարանից: Թող բոլոր սուրբ հայրերի բարեխոսությամբ, մասնավորապես նրանց, ում ուսուցումները և վարքը կտպագրվեն այս մատենաշարում, Տերը մեզ ողորմի, քազնի ասում են, թե սուրբ հայրերից ում աշխատությունները որ կարդում է ընթերցողը, Սուրբն այդ պահին աղոթում է նրա համար:

Աբբա Զոսիմոսի վարքից քիչ բան է պահպանվել, նրա մասին հիմնականում ծանոթանում ենք Սուրբ Մարիամ Եգիպտացու վարքից, որը և զետեղել ենք այստեղ՝ այն վերցնելով «Գանձասար» հանդեսի 5-րդ հատորից, որպեսզի նրա զրույցները ավելի ջերմեռանդությամբ ընթերցվեն: Աբբա Զոսիմոսին են վերագրում նաև մի պատմություն, որը գրված է այլաբանորեն և կոչվում է «Աբբա Զոսիմոսը Երանելիների Երկրում»: Քանզի ոչ բոլորն են այն վերագրում Աբբա Զոսիմոսին, այդ պատճառով էլ այն ամբողջությամբ չզետեղեցինք այստեղ, այլ միայն մի փոքր հատված, որն սկսվում է այսպես՝ «Հավաքելով եղբայրներին, որոնք քուրձ էին կրում իրենց վրա, վանքի մոտակայքում կառուցեցի մի եկեղեցի և ուխտավորների համար ապաստան՝ նրանց ընդունելու և խնամելու մտադրությամբ: Այդ նպատակով, ես գնեցի մի ավանակ և նրանով ջուր էի բերում Հորդանանից՝ կարիքավորների ծարավը հագեցնելու համար: Մի անգամ ես ավանակին արձակեցի, որ արածի, իսկ ինքս մտա եկեղեցի՝ աղոթելու: Դուրս գալով, սկսեցի փնտրել ավանակին և չգտա: Եվ վերցնելով տիկերը, ուղղություն վերցրեցի դեպի Հորդանանի ափը, այնտեղ տեսա մի առյուծի և սկսեցի նրան մեղադրել և ասել. «Այդ դու ես կերել իմ իշուկին»: Այս խոսքերն ասելով, բռնեցի նրան և տիկը կապեցի առյուծի մեջքին և երեք տարի ստիպեցի նրան, որ ջուր կրի: Նա էլ հնազանդությամբ կրում էր ջուրը և չէր հեռանում վանքի դարպասներից: Մի անգամ Եգիպտոսից մի քարավան եկավ, որը գնում էր Բաբելոն: Առյուծը այս տեսնելով, գնաց քարավանին ընդառաջ: Ժողովուրդը տեսնելով առյուծին՝ փախավ: Իսկ առյուծը քարավանի մեջ նկատելով ավանակին, դուրս քշեց նրան և բերեց վանքի դարպասների մոտ, իսկ ինքը մոտենալով ինձ՝ ընկավ ոտքերս և սկսեց լիզել դրանք: Մենք դեռ ոչինչ չգիտեինք, սակայն, երբ դուրս եկանք, տեսանք մեր իշուկին ու զարմացանք: Այդ ժամ նկատեցինք նաև քարավանը, իսկ քարավանատերերը

եկան և պատմեցին, թե ինչպես էին իրենք տարել ավանակին, և թե ինչ-պես առյուծը փախցրեց նրան իրենց մոտից: Նրանք մեզ մոտ թողեցին ավանակին իր բեռներով հանդերձ և շարունակեցին իրենց ճանապարհը: Իսկ առյուծը շարունակեց մնալ վանքում, մինչև որ ծերանալով շունչը փչեց, մենք նրան թաղեցինք եկեղեցու դռան մոտ: Այդ վանքը մինչ օրս էլ կոչվում է «Առյուծի վանք»:

Այս վանքում էլ իր հոգին խաղաղությամբ ավանդեց Երանելի ծեր Աբբա Զոսիմոսը»:

ՍՈՒՐԲ ՄԱՐԻԱՄ ԵԳԻՊՏԱՑՈՒ ՎԱՐՔԸ, ՈՐ ՊԱՏՄԵՑ ԵՐԱՆԵԼԻ ԱԲԲԱ ԶՈՍԻՄՈՍԸ

«Թագավորական գաղտնիքը պահելը լավ է, իսկ Աստծո գործերը քարոզելը՝ փառավոր», -այսպես ասաց հրեշտակը Տովբիթին նրա կույր աչքերի հրաշափառ բժշկությունից և բոլոր այն վտանգներից հետո, որոնցից նա փրկվեց իր բարեպաշտության շնորհիվ: Քանզի թագավորական գաղտնիքը չպահելն անզգուշություն է և կորստաբեր, իսկ Աստծո հրաշափառ գործերի մասին լռելը՝ հոգուն վնաս պատճառող: Ուստի և ես, երկնչելով աստվածայինի մասին լռելուց և հիշելով գանձաթաքույց ծառային սպասող պատուհասը, որ Տիրոջից տաղանդը ստանալով, հողի տակ թաքցրեց և գործադրելու համար տվածը ծածուկ պահեց, չեմ կարող չպատմել մինչև ինձ հասած այս շահավետ պատմությունը: Եվ թող ոչ ոք, ինչպես լսեցի, գրողիս հանդեպ անվստահություն չունենա և իրողության սքանչելի մեծության պատճառով ինձ հորինաբանող չհամարի, քանզի ես չեմ կարող կեղծել և վաճառական լինել այն խոսքի, որի մեջ Աստված է հիշատակվում: Եվ կարծում եմ, որ իրավունք չունենք անգամ փոքր իրադարձությունն արհամարհելու՝ անարժան համարելով Աստծո մարմնացյալ Բանի մեծ փառքին, և չվստահելու նրանց, ովքեր պատմում են այս պատմությունը: Իսկ եթե ոմանք, կարդալով այն և նրանում թերևս զարմանահրաշ բաներ տեսնելով, ամենևին չկամենան հավատալ, թող նրանց քավիչը Տերը լինի, քանզի, խորհելով մարդկային տկարության մասին, հնարովի են համարում մարդկանց մասին պատմող հրաշքները:

Արդ, անցնեմ մեր մեջ վաղուց ի վեր տարածված այն պատմությանը, որը մեզ ավանդեց մանկությունից աստվածային բաներ խոսելու և գործելու սովոր այն մեծ այրը, որպեսզի մեզանում կատարված այսպիսի սքանչելի դեպքերը, անկարելի համարելով, անվստահության չմատնեն: Քանզի, ինչպես Սողոմոնն ուսուցանեց, Սուրբ Հոգու շնորհները, ներգործելով տարբեր անձանց մեջ, նրանցից Աստծո բարեկամներ ու մարգարեներ են պատրաստում:

Իսկ այժմ ժամն է այդ մեծահրաշ պատմությունն սկսելու:

Պաղեստինի վանքերից մեկում ապրում էր մի այր՝ զարդարված

առաքինի վարքով և իմաստուն խոսքով: Նա վաղ մանկությունից ի վեր մենակյացի կյանքով էր ապրում: Այդ ծերի անունը Զոսիմոս էր: Նա Պաղեստինի ուղղափառ մենակյացների սքանչելի վանքերից մեկում անցավ առաքինության բոլոր աստիճաններով՝ պահելով կրոնավորության ողջ կարգը: Կատարելով ավանդված պատվիրանները և հետևելով ուսուցանող վարդապետների ցուցումներին՝ խորը ինքնաճանաչողության հասնելով՝ նա ձգտում էր մարմինը հնազանդեցնել հոգուն: Իր այս դիտավորությունից ամենևին չշեղվեց և իր բարեմիտ գործերի շնորհիվ այնպես հռչակվեց, որ բազմիցս թե՛ մերձակա և թե՛ հեռու վանքերից նրա մոտ էին գալիս՝ իր վարդապետությունից պարկեշտության օրինակ վերցնելու: Չնայած իր գործնական մեծ ճի-գերին՝ ծերն ամենևին չէր ծուլանում աստվածային խոսքի ընթերցման մեջ, այլ թե՛ ննջելուց առաջ ու արթնանալուց հետո և թե՛ աշխատելիս և ուտելիս հարաժամ սաղմոսերգում էր և հմտանում Սուրբ Գրոց իմացության մեջ:

Պատմում են, որ ծերը բազում անգամ, ի վերուստ լուսափայլություն ստանալով, աստվածատեսության էր արժանանում: Եվ սա ամենևին զարմանալի ու անհավատալի չէ: Քանզի, եթե Տերն ասում է. «Երանի՜ սրտով մաքուրներին, որովհետև նրանք Աստծուն պիտի տեսնեն», ապա ակնհայտ է, որ, մաքրելով իրենց անձերը և մշտապես խոկալով, նրանք հոգու մշտարթուն աչքերով տեսանում են աստվածային խոստման առհավատաչյան՝ ներկայում ստանալով ապագայի ավետիսը:

Ասում են, որ այս ուղղափառ Զոսիմոսը վաղ մանկությունից՝ մայրական ծոցից ընծայվել է վանքին և մինչև հիսուներեք տարեկանը ճգնակեցությամբ է ընթացել: Այնուհետև, ինչպես պատմվում է, նրան սկսում է նեղել այն խորհուրդը, թե ինքն ամեն բանով արդեն կատարյալ է և ուրիշ ոչ մի ուսուցման պետք չունի:

Այսպես ներամփոփված՝ նա խորհում էր. «Թերևս երկրի վրա լինի մի մենակյաց, որ ինձ օգտակար լիներ կամ այնպիսի նոր բաներ ու ճգնության տեսակներ սովորեցնել կարողանար, որոնց ես անտեղյակ եմ ու չեմ գործել: Թերևս անապատներից որևէ մեկում գտնվի մի իմաստասեր այր, որ թե՛ գործերով ու թե՛ իմացությամբ ինձանից առավել լինի»: Մինչդեռ ծերն այս մասին էր խորհում, հայտնվեց Տիրոջ հրեշտակը և ասաց.

-Զոսիմո՛ն, մարդու հնարավորությունների սահմաններում ազնվորեն

ու գեղեցկորեն ճգնեցիր: Բայց մարդկանցից ոչ ոք չի կարող կատարյալ համարվել, քանզի առաջիկա ճգնությունը նախորդից մեծ է լինում, և դուք թերևս երբեք չգիտեք ապառնին: Բայց որպեսզի իմանաս, թե որքան ճանապարհներ են տանում դեպի փրկություն, դո՛ւրս եկ քո երկրից (ինչպես նշանավոր նահապետներից՝ Աբրահամը) և գնա՛ Հորդանանի ափին հիմնված վանքը:

Ծերն իսկույն նեթ, հետևելով հրահանգին, դուրս եկավ վանքից, որտեղ մանկությունից ճգնել էր և, առաջնորդվելով կանչողից, ընթացավ դեպի սուրբ գետ Հորդանան՝ հասնելով այն վանքին, ուր առաքել էր նրան Աստված: Ապա, ձեռքով բախելով դռան օղամանյակն ու բացելով, տեսավ մի մեծահասակ վանականի, որ դռնապահն էր, որն էլ իրեն ներկայացրեց վանահորը: Իսկ վանահայրը, հյուրընկալելով և տեսնելով նրա աստվածավախ կեցվածքն ու հասարակ զգեստները, մենակյացի կերպով խոնարհվելն ու օրհնություն ընդունելը, հարցրեց.

-Եղբա՛յր, որտեղի՞ց և ինչի՞ համար եկար տառապյալ ծերերիս մոտ: Իսկ Զոսիմոսը պատասխանեց.

-Թե որտեղից եկա, կարևոր չէ, բայց հոգևոր շահի համար եկա, քանզի ձեր մասին գովեստի արժանի բաներ եմ լսել, որոնցով հոգին մեծապես մոտենում և միավորվում է մեր Քրիստոս Աստծո հետ:

-Եղբա՛յր, -ասաց վանահայրը, -մարդկային հիվանդությունների միակ բժիշկն Աստված է, և թող Նա թե՛ մեզ ու թե՛ քեզ ճանաչեցնի Իր կամքը և ամենքիս առաջնորդի՝ այն վայելչապես կատարելու: Քանզի մարդն իր նմանին չի կարող օգնել, այլ յուրաքանչյուր ոք, Աստծուն իրեն նեցուկ ունենալով, թող իր համար զգուշանա և մտքով արթուն լինելով, բարին գործի: Բայց քանի որ Քրիստոսի սերը քեզ դրդեց տեսնել մեզ՝ բազմատանջ ծերերիս, մնա՛ մեզ մոտ, որովհետև այդ նպատակով ես եկել: Իսկ մեզ բոլորիս Սուրբ Հոգու շնորհներով կսնուցանի Իր Անձը մեզ համար զոհաբերած Բարի Հովիվը, որ Իր ոչխարներին անուններով է կանչում: Վանահոր այս խոսքերից հետո Զոսիմոսը ծնրադրեց և աղոթեց՝ այդուհետև մնալով այդ վանքում: Այստեղ նա տեսավ գործով և իմացությամբ փայլող բոլոր այն ծերերին, որոնք չափազանց ջերմեռանդ ու նվիրված ծառայում էին Տիրոջը՝ հարաժամ սաղմոսերգելով և պարկեշտությամբ աղոթելով. անգամ ձեռքերով ձեռագործելիս նրանք սաղմոսում էին շուրթերով: Դատարկաբանությունը

նրանց մոտ ամենևին բացակայում էր, և նյութական հոգսերը չէին հուզում նրանց, այլ, միայն իրենց ջանքերով ժողովելով կերակրի ծախսերը, աշխարհիկ հոգսերին ամենևին անծանոթ էին մնում: Բոլորի և յուրաքանչյուրի միակ ձգտումն էր մարմնով մեռած լինելը աշխարհի և ամենայն աշխարհիկ բանի հանդեպ: Նրանց ամենասիրելի կերակուրն Աստվածաշնչի անսպառ խոսքն էր: Մարմինները կերակրում էին միմիայն ամենաանհրաժեշտով, այսինքն՝ հացով ու ջրով, այնքան, որքան նրանցից յուրաքանչյուրին աստվածային սերն էր շարժում: Այս ամենը տեսնելով՝ Զոսիմոսը ոգևորվում էր և ձգտում միշտ առաջիկայում առավել աճեցնել իր ընթացքը և, գտած լինելով իր զուգափափագողներին, ազնվաբար աստվածային դրախտն էր նորագործում: Բազում օրեր անց մոտեցավ քրիստոնյաներին ավանդված Մեծ պահքը վայելչապես պահելու ժամանակը՝ նախապես մաքրագործելով Քրիստոսի Չարչարանքներին և Հարությանը երկրպագելուն պատրաստվելու համար: Վանքի դռները միշտ փակ էին՝ մենակյացների ճգնությունն անհայտ պահելով, և երբեք չէին բացվում, բացի այն դեպքերից, երբ որևէ կարևոր գործ էր լինում: Այդ տարածքն ամայի էր, և մենակյացներին մերձակա բնակիչները ոչ միայն չէին կոխել այդ հողը, այլև անծանոթ էին դրան: Եվ այս վանքում ի սկզբանե սահմանված կարգ կար, որի համար էլ, ինչպես կարծում ենք, Աստված Զոսիմոսին այստեղ բերեց: Իսկ թե ինչ կարգ էր և ինչպես էր իրագործվում, այժմ կասենք: Մեծ պահքին նախորդող կիրակի օրը, սուրբ Պատարագին, բոլորը հաղորդվում էին անապականագործ և կենդանարար խորհրդին: Այնուհետև, փոքր ինչ կերակրվելուց հետո, բոլորը հավաքվում էին աղոթատեղում և ծնրադրությամբ աղոթում, միմյանց ողջույն տալիս, գրկախառնվում, խոնարհվում էին մեկմեկու առաջ և աղաչում աղոթել միմյանց համար՝ ի նկատի ունենալով առաջիկա ճգնավորական մաքառումները: Այս ամենից հետո բացվում էին վանքի դռները, և բոլորը, զուգաձայնաբար երգելով **«Տերն է լույսն իմ ու Փրկիչն իմ»** սաղմոսը, ինչպես նաև ըստ կարգի բոլոր սաղմոսները, դուրս էին գալիս վանքից՝ միայն մեկ կամ երկու պահապան թողնելով այնտեղ. ոչ թե շտեմարանները պահպանելու համար, քանզի գողանալու ոչինչ չկար, այլ որպեսզի աղոթավայրն առանց պաշտամունքի չմնա: Վանքից ճգնության հեռացած յուրաքանչյուր ոք ինքն էր պատրաստում իր

կերակուրը՝ իր ցանկության և կարողության չափով: Նրանցից ոմանք սակավ-ինչ հաց էին տանում՝ ըստ մարմնի չափավոր կարիքների, մյուսները՝ թուզ, ուրիշները՝ արմավ, իսկ այլոք՝ թրջած ունդ: Ոմանք էլ ոչինչ չէին տանում, իրենց մարմնի վրա կրած հանդերձից բացի, և կերակրվում էին, որքան որ մարմնի բնությունն էր ստիպում, անապատում բուսած խոտերով: Յուրաքանչյուր ոք իր առանձին կանոն ուներ, և անխախտելի օրենք կար նրանց մոտ՝ չհետաքրքվել, թե ինչպես է մյուսը պահքը պահում կամ ճգնում: Ոմանք Հորդանանն անցնելուց հետո անմիջապես հեռանում էին միմյանցից և բնակվում անապատում: Եվ նրանցից ոչ ոք չէր գնում իր ճգնակից ընկերոջ մոտ: Եվ եթե մեկը տեսնում էր հեռվից, որ ընկերն իր կողմն է գալիս, իսկույն թեքվում և ուրիշ կողմ էր գնում՝ մենակ մնալով Աստծո հետ, հարաժամ սաղմոսելով և կերակրվելով միայն սահմանված ժամին: Այսպես անցկացնելով պահոց շրջանը՝ բոլորը վերադառնում էին վանք՝ Փրկչի կենդանագործ Հարությունից մեկ շաբաթ առաջ նշվող Ծաղկազարդի տոնին, որը տոնում է Եկեղեցին գեղեցկադիտակ ծաղիկների վայելչությամբ: Եվ յուրաքանչյուրը վերադառնում էր՝ իր մեջ կրելով իր մշակության վաստակը, գիտակցելով իր ճգնությունների աստիճանը. ոչ ոք բնավ չէր հարցաքննում ընկերոջը, թե նա ինչպես էր անցկացրել իր ճգնությունը հոգու փրկության համար: Այսպիսին էր այդ վանքի կարգը, որ ազնվաբար պահում էին մինչև վերջ, քանզի յուրաքանչյուր ոք, անապատում գտնվելով և ազատ լինելով մարդահաճությունից, ոչ թե մարդկանց ցուցադրելու համար էր պահք պահում, այլ ճգնում էր միայն Աստծո առջև: Քանզի այն, ինչ մարդկանց ցույց տալու կամ նրանց հաճոյանալու համար է արվում, ոչ մի օգուտ չի բերում ճգնողին, այլ շատ անգամ վնասում է: Այն ժամանակ նաև Զոսիմոսը մյուս վանականների հետ անցավ Հորդանանը՝ մի փոքր պաշար վերցնելով իր հետ մարմնի կարիքները հոգալու համար, նույն պատառոտված հանդերձով, որ կրում էր: Եվ այնուհետև, անապատով ընթանալով, կրոնավորական կարգն էր կատարում. կերակրվում էր միայն ըստ անհրաժեշտության, քնում չափավոր, գետնատարած, ուր որ վրա հասներ երեկոն: Իսկ վաղ առավոտյան արթնանալով՝ դարձյալ շարունակում էր քայլել՝ միշտ արագ ընթանալով: Նա ցանկանում էր խորանալ անապատի մեջ՝ հուսալով գտնել որևէ ճգնավոր հոր, որը կարողանար իր հոգու փա-

փագին համապատասխան օգուտ տալ իրեն հոգեպես: Այս պատճառով ժուժկալությամբ ընթանում էր ինչպես մեկը, որ շտապում է դեպի օթևան: Քսանօրյա ճանապարհ անցնելուց հետո, երբ հասավ օրվա վեցերորդ ժամը, նայելով դեպի արևելք, նա իր սովորական աղոթքն էր անում, քանզի արդեն սովորություն էր դարձել օրվա մեջ սահմանված ժամանակահատվածում ճանապարհ ընթանալը և փոքր-ինչ հոգնությունից հետո հոտնկայս հանգստանալը՝ սաղմոսելով ու երկրպագելով: Եվ ահա, մինչ նա աղոթում էր՝ անսայթաքելի հայացքով նայելով դեպի երկինք, աջ կողմից երևացող մի ստվեր տեսավ՝ նման մարդու մարմնի: Նա սկզբից վրդովվեց՝ այն ինչ-որ դիվական երևույթ կարծելով, և դողալով խաչակնքեց՝ երկյուղը վանելով իրենից: Սակայն աղոթքի ավարտին Զոսիմոսը դարձյալ ստուգապես տեսավ դեպի հարավ գնացող ինչ-որ մեկին: Նրա մերկ մարմինն արեգակի բոցից սևացած էր, իսկ վարսերը գլխին գեղմի պես սպիտակ էին և սակավ աճած՝ մինչ պարանոցը: Զոսիմոսը, տեսնելով նրան և հիանալով զարմանալի տեսիլքով, սկսեց ընթանալ դեպի նրա կողմը՝ անպատմելի ուրախությամբ շտապելով հասնել նրան, որովհետև քանի օր է չէր տեսել որևէ մարդու, կենդանու կամ թռչնի և բնավ որևէ ցամաքային կերպարանք կամ ստվեր: Բացի այդ, նրան խիստ ցանկալի դարձավ ճանաչել, թե ով է այդ մարդը՝ հուսալով, որ մեծամեծ բաների ականատես կլինի: Իսկ մարդը, տեսնելով հեռվից եկող Զոսիմոսին, սկսեց փախչել և ընթանալ դեպի անապատի խորքը: Զոսիմոսը, ասես մոռացած իր ծերությունը, տակավին անտեսելով ճանապարհի դժվարությունները, նետվեց հասնելու փախչողին և այնպես արագ էր հետապնդում, որ սակավ առ սակավ մերձենում էր նրան: Երբ այնքան մոտեցավ, որ ձայնը լսելի կլիներ, սկսեց աղաղակել և այսպես ձայնել արտասվելով. -Ինչո՞ւ ես փախչում մեղավոր ծերիցս, Աստծո ճշմարիտ ծառա: Ով որ ես, սպասիր ինձ հանուն Աստծո, Ում համար որ այս անապատում ես բնակվում, սպասիր ինձ՝ տկարիս և անարժանիս, հանուն քո ճգնությունների հատուցման հույսի, ապասիր և ծերունուս բաշխիր աղոթքներդ ու օրհնությունդ հանուն Աստծո, որ երբեք ոչ ոքի չի արհամարհում: Այսպես Զոսիմոսն արտասվելով խոսում և ընթանում էր նրա ետևից, մինչև հասան մի հովիտ, որ նման էր չորացած գետի հունի: Եվ երբ հասան այն տեղին, փախչողն իջավ ու ելավ և անմիջապես անցավ

մյուս կողմը: Իսկ Զոսիմոսը հոգնած և այլևս չկարողանալով ընթանալ, մնաց մյուս ափին: Եվ սկսեց առավել ուժգին արտասվալից հեծեծալ, որպեսզի այդպես լսելի լինի նրան: Այնժամ փախչողն այսպես ձայնեց. -Հայր Զոսիմոս, թողություն շնորհիր հանուն Աստծո, չեմ կարող վերադառնալ և երևալ քեզ այսպիսի տեսքով, քանզի թշվառական և մերկ կին եմ, ինչպես տեսնում ես, մարմնիս ամոթույքն՝ անծածկ: Բայց եթե իրոք ցանկանում ես մեղավոր կնոջս շնորհել քո աղոթքները, գցիր ուսանոցդ, որպեսզի դրանով ծածկեմ իմ կանացի տկարությունը և, դառնալով դեպի քեզ, ընդունեմ աղոթքներդ: Այնժամ Զոսիմոսը սրդոողեց՝ խորհելով, թե ինչպես այդ կինն իրեն իր անունով դիմեց: Ապա, քանի որ սուրբ այր էր, հասկացավ աստվածային նախանշանը, եթե կինը, շնորհով պայծառացած, նախիմացությամբ քաջահայտ չլիներ իր մասին, իրեն անվամբ չէր կոչի՝ կյանքում երբեք տեսած կամ լսած չլինելով: Եվ, շտապելով կատարել հրամայվածը, հանեց իր հին, պատառոտված ուսանոցը և գցեց նրա վրա: Կինը, վերցնելով այն, ծածկեց իրեն այնքան, որքան հնարավոր էր, ապա, շրջվելով դեպի Զոսիմոսը, ասաց. -Հա՛յր, ինչո՞ւ ցանկացար տեսնել մեղավոր կնոջս, ի՞նչ էիր փնտրում տեսնելու կամ սովորելու, որ չզլացար այսքան դժվարություններ կրել: Ապա նա, ըստ ընդունված կարգի, ծնրադրեց՝ օրհնություն խնդրելով: Նրա նման և ծերն ընկավ գետնին, և երկուսը երկար ժամանակ մնացին այդպես՝ յուրաքանչյուրը օրհնություն խնդրելով մյուսից: Եվ ուրիշ ոչինչ չէր լսվում նրանցից: Շատ ժամեր անց կինն ասաց Զոսիմոսին. -Հայր Զոսիմո՛ս, քեզ է պատշաճ օրհնել և աղոթել, քանի որ քահանայության պատվով ես պատվված շատերից՝ սուրբ Սեղանի մոտ կանգնելով և բազում անգամ աստվածային խորհուրդներին խորհրդածու լինելով: Իսկ Զոսիմոսն առավել մեծ երկյուղով լցվեց, և դողից սկսեց նրանից քրտինք հոսել: Զարհուրած նրա տեսքից՝ հեծեծանքից կտրատվող ձայնով ասաց. -Ո՛վ հոգևոր մայր, դու Աստծուն ես մերձեցել և աշխարհի հանդեպ շատ բաներով մեռած ես, և այդ հայտնապես վկայում է քեզ պարգևված այդպիսի շնորհը՝ ինձ երբեք տեսած չլինելով՝ անունով կոչելդ և երեց անվանելդ: Եվ քանի որ շնորհները պատվից չեն ճանաչվում, այլ բարի նկարագրից, դու օրհնի՛ր ինձ Տիրոջ անունով և աղոթքներդ շնորհիր կարոտյալիս՝ ըստ քո կատարելության: Այնժամ կինը, հնազանդվելով ծերին, ասաց. -Օրհն-

յա՜լ է Աստված՝ մարդկային հոգիների փրկության Խնամատարը: Իսկ Զոսիմոսն ասաց «ամեն», և երկուսն էլ վեր կացան երկրպագությունից: Եվ կինն ասաց ծերունուն. -Ինչո՞ւ եկար մեղավորիս մոտ, ով մարդ, ինչո՞ւ առաքինությունից լիովին զուրկ մերկ կնոջս տեսնել կամեցար: Բայց քեզ Սուրբ Հոգու շնորհն առաջնորդեց, որպեսզի պատշաճ սպասավորությունը կատարես... Արդ, նախ ասա ինձ, թե ինչպես են ապրում քրիստոնյաները, աշխարհի թագավորները, եկեղեցին: -Մայր իմ, -պատասխանեց ծերը, -Ձեր աղոթքներով Հիսուս Քրիստոս ամենքին բարեկարգ խաղաղություն շնորհեց: Այլ ընդունիր անարժան ծերունուս աղաչանքները և աղոթիր հանուն Տիրոջ՝ ողջ աշխարհի և մեղավորիս համար, որ տկարս այս անապատում անպտուղ չմնամ: Նա պատասխանեց. -Քեզ է վերապահված, հա՛յր Զոսիմոս, քահանայի պատիվ ունենալով, ինձ և բոլորի համար աղոթել, քանզի սրա համար իսկ ես կանխադրված, բայց, քանի որ հրամայված է ամեն ինչ հնազանդությամբ կատարել, ես բարեհոժար կերպով կկատարեմ քո հրամայածը: Այս ասելով՝ դարձավ դեպի արևելք և, աչքերը վեր հառելով ու ձեռքերը տարածելով, սկսեց աղոթել: Նա աղոթում էր միայն շուրթերը շարժելով, իսկ ձայնը լսելի չէր: Եվ Զոսիմոսը ոչինչ չէր լսում, այլ գլխահակ կանգնել էր: Եվ պատմում է նա, վկա բերելով Աստծուն, որ կնոջ աղոթքի ժամանակ, մի պահ բարձրացնելով հայացքը, տեսավ նրան գետնից մի կանգուն վեր բարձրացած և այդպես աղոթելիս: Այս տեսնելով առավել մեծ երկյուղով բռնված՝ ընկավ գետնին, սարսափելի քրտնած և ահաբեկված՝ չհամարձակվեց ոչինչ ասել, այլ միայն ստեպ-ստեպ արտաբերել. «Տեր, ողորմեա»: Եվ խոնարհված ծերին սկսեցին ալեկոծել խորհուրդները. չլինի՞ թե սա ոգի է՝ աղոթողի կերպարանք առած: Այդժամ կինը, բարձրացնելով նրան, ասաց. -Հայր, ինչո՞ւ են քեզ խռովեցնում խորհուրդներդ, թե՝ ոգի եմ՝ աղոթողի կերպարանք առած: Հավատա, այր դու, որ մեղավոր կին եմ, սակայն պարսպված եմ Հոգու մկրտությամբ և ոգի չեմ, այլ հող ու մոխիր և մարմին եմ ամբողջապես՝ ամենևին չխորհելով հոգեղեն լինելու մասին: Եվ խաչակնքեց իր ճակատը, աչքերը, շուրթերն ու սիրտը՝ ասելով. -Հայր Զոսիմոս, Աստված ազատի՛ մեզ չարից և նրա դարանակալությունից, քանզի նրա զորությունը հույժ հակառակում է մեզ: Այս լսելով՝ ծերը նետվեց ու բռնեց նրա ոտքերից և արտասվելով ասաց. -Երդվեցնում եմ քեզ մեր Քրիստոս

Աստծով, որ Կույսից է ծնվել, Ում համար մերկացել ես այսպես, ասա, հանուն ինչի՞ այդպես մաշեցիր մարմինդ. ոչինչ մի թաքցրու ինձանից, այլ պատմիր ամեն ինչ քո մասին, որպեսզի Աստծո փառքը քարոզած լինես, քանզի ի՞նչ օգուտ ծածկված իմաստությունից և աներևույթ գանձից: Ասա ինձ ամեն ինչ հանուն Տիրոջ՝ ոչ թե պարծենալու կամ ցուցադրության, այլ մեղավոր անարժանիս շինությանը նպաստելու համար, քանզի հավատում եմ Աստծուն, Որով ապրում և առաքինանում ես, որ սրա համար առաջնորդվեցի դեպի անապատ, որպեսզի Աստված քեզ հայտնի դարձնի: Այսուհետև մենք անկարող ենք Աստծո վճռին դեմ կենալ, քանզի եթե Քրիստոսին հաճո չլիներ հայտնել, թե ինչպես ճգնեցիր, ոչ ոքի թույլ չէր տա քեզ տեսնել և ոչ էլ ինձ կզորացներ՝ այսքան ճանապարհ կտրելու: Եվ առանց Նրա չէի կարող անգամ իմ խրճիթից դուրս գալ: Այս և բազում այլ խոսքեր ասաց Զոսիմոսը, իսկ կինը, նրան ոտքի բարձրացնելով, ասաց. -Աղաչում եմ, աբբա, հանուն Աստծո թողություն տուր ինձ, քանզի ամաչում եմ պատմել գործերիս մասին: Սակայն, քանի որ տեսնում ես մերկ մարմինս, կմերկացնեմ նաև գործերս, որ տեսնես, թե որքան լեցուն է հոգիս ամոթով ու նախատինքով: Կպատմեմ քեզ ոչ պարծենալու համար, ինչպես ասացիր, քանզի ի՞նչ ունեմ պարծենալու բանսարկուին ընտիր անոթ եղածս: Գիտեմ, որ եթե սկսեմ պատմել իմ մասին, ինձանից կփախչես, ինչպես օձից: Արդ, թեև անօրեն արարքներ եմ գործել, սակայն պիտի պատմեմ ու ոչնչի մասին չեմ լռի՝ ամենակալ Աստծով երդվեցնելով քեզ, որ չդադարես ինձ համար աղոթելուց, որպեսզի վերջին Դատաստանին ողորմություն գտնեմ: Ծերը շարունակ արտասվում էր, իսկ կինը սկսեց պատմել իր մասին՝ ասելով. -Իմ հայրենիքը, եղբա՛յր, Եգիպտոսն է: Դեռևս ծնողներիս կենդանության ժամանակ, երբ տասներկու տարեկան էի, մերժելով նրանց սերը, եկա Ալեքսանդրիա: Եվ թե ինչպես սկզբից իմ կուսությունն ապականեցի և ինչպես անխափան ու անհագ կերպով խառնակության ախտը տենչացի, այդ մասին նույնիսկ ամաչում եմ մտածել: Սակայն այժմ հարմար եմ գտնում դրանք ազնվորեն խոստովանել: Ուստի այդ մասին պիտի թերևս կարճառոտ պատմեմ, որպեսզի իմանաս իմ չարառիթ հեշտախտության մասին: Ո՛վ հայր, հանուն Տիրոջ թողություն տուր ինձ, քանզի տասնյոթ տարեկանում կամ ավելի մեծ հասակում ես հրա-պարակայնորեն՝ ժողովրդի առջև էի անառակություն գործում,

սակայն՝ ոչ թե որևէ մեկից վարձ ստանալու համար, քանզի արդարև, շատ անգամ հրաժարվում էի դրամ վերցնել՝ մտածելով, թե այդպիսով առավել հաճախ կայցելեն ինձ և որպես պարգև կբավարարեն իմ ցանկությունները: Մի կարծիր, թե ունևոր լինելու պատճառով էի մերժում վարձը, քանզի ապրուստս վաստակում էի անդադար կանեփ մանելով, այլ որովհետև տենչում էի անսանձ կրքերիս հագուրդ տալու համար ամեն ժամ թավալվել այդ տիղմում: Ահա այս էր իմ կյանքի և գործի նպատակը՝ հարաժամ թշնամություն գործել բնությանս դեմ: Մի անգամ ամռանը, երբ շարունակում էի այսպիսի կյանքով ապրել, լիբիացի և եգիպտացի տղամարդկանց մի բազմություն տեսա, որ գնում էր ծովի կողմը: Այդժամ նրանցից մեկին հարցրի, թե ուր են շտապում: «Բոլորն էլ Երուսաղեմ են գնում, -պատասխանեց նա, -քանզի մի քանի օրից պատվական Խաչի Վերացման տոնն է»: Իսկ ես ասացի նրան, թե արդյոք ինձ կտանե՞ն իրենց հետ, եթե կամենամ այնտեղ գնալ: Նա ասաց. «Ոչ ոք չի կարող արգելք լինել քեզ, եթե դրամ և սննդի պաշար ունես»: Իսկ ես ասացի նրան, որ ոչ պաշար ունեմ և ոչ էլ նավավարձ, բայց եթե նույնիսկ ինձ չկերակրեն, և իմ փոխարեն նավավարձս տվող չգտնվի, պիտի գնամ և նստեմ այդ նավը, քանզի մարմին ունեմ և վճարելիքի փոխարեն կարող են այն գործածել: Եվ նրա համար էի գնում այնտեղ, ով հայր, թողություն տուր հանուն Տիրոջ, որպեսզի տռփանքի պատրաստ բազում գործակիցներ ունենայի: Այլևս ինձ մի ստիպիր պատմել իմ նախատինքը, աբբա Զոսիմոս, քանզի, Տերը վկա, վախենում եմ իմ խոսքերով պղծել քեզ և այս օդը: Իսկ Զոսիմոսը, արտասուքով թրջելով գետինը, պատասխանեց նրան. -Հանուն Տիրոջ, պատմի՛ր, ով ազնիվ մայր, մի՛ ընդհատիր այդ շահեկան պատմությունդ: Այդժամ կինը հաջորդաբար շարունակեց. -Երիտասարդը, լսելով իմ զազրելի խոսքերը, ծիծաղելով հեռացավ: Իսկ ես, դեն նետելով ձեռքիս ճախարակը, գնացի ծովի կողմը, ուր և շտապում էր բազմությունը: Եվ ահա այնտեղ տեսա մարմնով ու շարժուձևով խիստ գեղեցիկ տասը կամ ավելի պատանիներ: Նրանք, ինչպես թվում էր, ինչ-որ կարևոր բան էին փնտրում և ետ էին մնացել իրենց ուղեկիցներից, որոնք վաղուց նավ էին նստել: Ես անպատկառորեն, իմ սովորության համաձայն, վազեցի նրանց մոտ և ասացի. «Ուր որ գնում եք, ինձ էլ տարեք ձեզ հետ: Ես ձեզ հաճույք կպատճառեմ»: Ուրիշ նման այպանելի մտքեր հայտնելով՝

նրանց ծիծաղը շարժեցի, իսկ նրանք, իմ անամոթությունը տեսնելով, ինձ նավ բարձրացրին: Եվ նավը շարժվեց: Իսկ հետագա դեպքերի մասին ինչպե՞ս պատմեմ, ով մարդ, ո՞ր լեզուն կարող է պատմել, և ո՞ր ականջ-ները՝ լսել այն ամենը, ինչ կատարվեց ճանապարհին՝ նավի մեջ: Քանզի նույնիսկ երբ նրանք չէին կամենում խառնակվել, ես էի հարկադրում թշվառներին: Լսված ու չլսված պղծագործության տեսակ չէր մնացել, որ չուսուցանեի նրանց: Այժմ, հավատա, զարմանում եմ, թե ինչպես ծովը հանդուրժեց իմ այդքան անառակությունները, և ինչպես երկիրն իր բերանը չբացեց՝ ինձ՝ այդքան անձանց գայթակղողիս, դժոխք իջեցնելու: Սակայն, ինչպես երևում է, Աստված իմ ապաշխարությունն էր կամենում, քանզի Նա մեղավորի մահը չի կամենում, այլ երկայնամտությամբ մեր դարձին է սպասում: Եվ այսպես, շուտով հասանք Երուսաղեմ: Նախքան տոնը եղած այն օրերին, որ մնացի քաղաքում, նույն վարքով անցկացրի և նույնիսկ ավելի վատ, քանի որ միայն ծովում ինձ ճանապարհակցած երիտասարդներով չբավականացա, այլ, քաղաքաբնակներից և օտարականներից շատերին նույն բանի համար հավաքելով, նրանց էլ պղծեցի: Իսկ երբ եկավ Ս. Խաչվերացի տոնը, ես, ինչ-պես առաջ, գնալով երիտասարդներին հրապուրելու, բոլորին տեսա վաղ առավոտյան միասին եկեղեցի գնալիս և նրանց հետ գնացի ու մտա եկեղեցու գավիթ: Երբ հասավ Խաչվերացի խորհրդակատարության պահը,ես բազմության հետ հրմշտվելով շտապեցի ներս մտնել: Մեծագույն ջանքերով ու ճիգերով թշվառականս մոտեցա դռանը, որով մտնում էին տաճար, ուր ցուցադրվում էր կենդանարար Փայտը: Բայց երբ հասա դռան շեմին, թեև ուրիշներն անարգել մտնում էին, աստվածային ինչ-որ զորություն ինձ արգելում ու չէր թողնում ներս մտնել, քանզի ստուգապես ետ էի մղվում: Եվ, դուրս շպրտվելով, կանգնեցի գավթում: Ապա, ենթադրելով, թե կատարվածը կանացի տկարությանս պատճառով է, դարձյալ զուր տեղը, այլոց խառնվելով համառորեն ձգտեցի ներս խուժել: Այսպես ապարդյուն ջանքեր էի վատնում, քանզի թշվառականս ամեն անգամ դռան սեմը կոխելիս տեսնում էի, որ բոլորն առանց որևէ մեկից խոչընդոտվելու ներս են մտնում, մինչդեռ ես՝ ողորմելիս, մերժվում եմ: Ինչպես որ պահապան զինվորների բազմությունը կարգելակեր իմ առաջընթացը, այնպես էլ անտեսանելի զորությունն ինձ հանկարծակի արգելում էր՝ դուրս շպրտելով դեպի

գավիթ: Եվ այսպես երեք թե չորս անգամ դուրս մղվելով՝ խիստ հոգնեցի և նույնիսկ թույլ դիմադրություն չկարողացա ցույց տալ, քանզի մարմինս սաստիկ բռնությունից տկարացել էր: Ահա այս պատճառով դադարեցի առաջ գնալ ու հեռացա՝ կանգնելով գավթի անկյուններից մեկում: Այնժամ մի կերպ հասու եղա այն պատճառին, որն ինձ թույլ չէր տալիս տեսնել կենարար Փայտը, քանզի մերձենալով իմ սրտի աչքերին, փրկարար խորհուրդը ցույց տվեց, որ իմ գործերի տիղմն է խոչընդոտում իմ մուտքը: Եվ սկսեցի լալ ու ողբալ և կուրծքս ծեծել՝ երկինք առաքելով սրտիս խորքից եկող հեծեծանքները: Ապա կանգնածս անկյունում, վերը, տեսա ամենասրբուհի և անարատ Կույս Մարիամ Աստվածածնի սրբապատկերը: Ակնապիշ նայելով նրան՝ ասացի. «Ով Կույսդ տիրուհի, ով մարմնով ծնեցիր Աստվածորդուն, գիտեմ ահա, որ արդարացի և վայելուչ չէ այսքան ապականվածիս քո՝ հավերժ Կույսիդ ու անարատիդ, անապական ու մաքուր հոգի և մարմին ունեցողիդ պատկերը տեսնելը: Եվ արդարացի կլիներ նաև քո՝ մաքրությանդ կողմից ինձ զատելն ու պիղծ համարելը: Բայց քանի որ, ինչպես լսեցի, քո ծնած աստվածամարդը եկավ, որպեսզի մեղավորներին ապաշխարության կոչի, ուստի օգնիր ինձ՝ միայնակիս ու անօգնականիս, և հրամայիր, որ ինձ ևս թույլ տրվի եկեղեցի մտնել: Մի զրկիր ինձ տեսնել այն Փայտը, որի վրա քո Որդին ու քո ծնած Աստված իր Արյունն ինձ համար որպես փրկագին տվեց: Ով տիրուհիդ, հրամայիր, որպեսզի իմ առաջ էլ բացվեն եկեղեցու դռները՝ աստվածային Խաչին երկրպագելու համար: Եվ, քեզանից Ծնվածի մոտ միջնորդ լինելով, երաշխավորիր իմ ուխտադրությունը՝ այլևս զազրելի խառնակություններով չթշնամանել մարմինս. և երբ տեսնեմ Խաչափայտը, աշխարհից և աշխարհում գտնվող ամեն ինչից հրաժարվեմ ու գնամ այնտեղ, ուր որ դու, իբրև փրկության միջնորդ, առաջնորդես ինձ»: Եվ այս ասելուց հետո անմիջապես ինչ-որ վստահություն ստացա՝ սրտումս հավատքից ջերմություն զգալով, և Աստծո բարեգթությանն ապավինած, իմ աղոթած տեղից շարժվեցի ու դարձյալ միացա ներս մտնողների բազմությանը: Եվ այլևս ոչ ոք ինձ չէր խոչընդոտում ու չէր խանգարում տաճարի մուտքին մոտենալ: Այնժամ սարսափ ու դող պատեց ինձ, և սրտաբեկ մոտեցա այն դռանը, որը մինչ այդ ինձ համար բոլորովին փակ էր, բայց այժմ այն զորությունը, որ քիչ առաջ արգելում էր ինձ, իմ առջև մուտքի ճանապարհ էր բացում: Ահա այսպես մտա Սրբարան և արժանացա կենդանարար Խաչի տեսությանը և ճանաչեցի աստվածային խորհուրդը, թե Նա որքան պատրաստակամ է ընդունելու մեր ապաշխարությունը: Ապա, ընկնելով գետնին, երկրպագեցի այն սրբությանը և շտապեցի իսկույն հասնել բարեխոսիս մոտ: Գալով այնտեղ, ուր երաշխավորվեց ուխտադրությունս, ծնրադրելով ամենասուրբ և միշտ Կույս Մարիամ Աստվածածնի առջև՝ ասացի. «Ով բարերար տիրուհի, դու ցույց տվեցիր քո մարդասիրությունն իմ հանդեպ և անարժանիս աղաչանքները պիղծ չհամարեցիր, քանզի ականատես եղա այն փառքին, որը հիրավի անկարելի էր անառակիս համար: Փառք Աստծո, որ քո միջոցով ընդունում է մեղավորների զղջումը: Ուրիշ ի՞նչ կարող եմ ասել մեղավորս: Բայց այժմ, տիրուհի, ճիշտ ժամն է կատարելու այն խոստումը, որը դու երաշխավորեցիր: Արդ, առաջնորդիր ինձ, ուր կամենում ես, և եղիր ինձ փրկության վարդապետ՝ ուսուցանելով փրկության տանող ճանապարհը»: Այս խոսքերը տակավին չավարտած՝ լսեցի ասես հեռվից աղաղակող մեկի ձայնը. «Եթե անցնես Հորդանանը, այնտեղ կատարյալ հանգստություն կգտնես»: Ունկնդրելով այս ձայնը և վստահ լինելով, որ այն ինձ համար էր ասված՝ արտասվախառն աչքերով աղաղակեցի Աստվածածնին. «Տիրուհիդ իմ, տիրուհի, ով տիրուհի, մի լքիր ինձ»: Այնուհետև դուրս եկա տաճարի գավթից և առանց շեղվելու գնացի առաջ: Իմ դուրս գալու պահին ինչ-որ մեկը, տեսնելով ինձ, երեք դրամ տվեց և ասաց. «Վերցրու այս, մայր իմ»: Վերցնելով տվածը՝ դրանցով երեք հաց գնեցի և որպես օրհնված պաշար վերցրի հետս: Ապա, հաց վաճառողից հարցնելով, թե որ ճանապարհն է տանում դեպի Հորդանան, և, տեղեկանալով քաղաքի դեպի այդ կողմ տանող դարպասի մասին, ելա ու արտասվելով ճանապարհ ընկա: Եվ այսպես, սուրբ Խաչին երկրպագություն անելուց հետո հարց ու փորձով ընթանալով, արևամուտին հասա սուրբ Հովհաննես Մկրտչի տաճարին, որ գտնվում է Հորդանանի մոտ: Նախապես տաճարում երկրպագելով՝ փութանակի իջա Հորդանան և սուրբ ջրով ձեռքերս ու երեսս լվանալուց հետո Կարապետի տաճարում հաղորդվեցի անարատ, կենարար և սուրբ խորհրդին: Ապա, ուտելով մի հացի կեսը և Հորդանանի ջրով ծարավս հագեցնելով, գիշերը գետնատարած պառկեցի: Առավոտյան մի փոքրիկ նավակ գտա և անցա մյուս ափը՝ դարձյալ խնդրելով առաջնորդողիս,

որ ինձ առաքի իր կամեցած տեղը: Այնուհետև հայտնվեցի այս անապատում և մինչև օրս փախել ու ապաստանել եմ այստեղ՝ ապավինելով իմ Աստծուն, որ փրկում է կարճամտությունից ու կործանարար աշխարհից դեպի Ինքը դարձածիս: Զոսիմոսը հարցրեց նրան. -Քանի՞ տարի է, ինչ դու ապաստանել ես այս անապատում, տիրուհի: -Ահա քառասունութերորդ տարին է, ինչ դուրս եմ եկել սուրբ քաղաքից, -պատասխանեց կինը: Ծերը կրկին հարցրեց. -Իսկ ի՞նչ ես գտել ու գտնում իբրև կերակուր, տիրուհի:

-Հորդանանն անցա՝ հետս ունենալով երկուսուկես հաց, որոնք աստիճանաբար չորանալով քարացան և քիչ-քիչ ուտելով վերջացան,-պատասխանեց կինը:

-Իսկ ինչպե՞ս, -կրկին հարցրեց ծերը, -այսքան ժամանակամիջոցն այդպես անգործ անցկացրիր՝ երբեք չխռովվելով հանկարծահաս գայթակղությունից:

-Ով հայր, այնպիսի բան ես հարցնում, - պատասխանեց կինը,- որի մասին նույնիսկ սարսափում եմ պատմել, քանզի եթե անդրադառնամ իմ կրած բազմաթիվ գայթակղությունների հիշողությանը և ինձ նեղություն պատճառած դժնդակ խորհուրդներին, ապա վախենում եմ կրկին դրանց մեջ ընկնել:

-Պատմածներիդ մեջ ոչինչ բաց մի թող, տիրուհի, -ասաց ծերը, -այլ առանց հապավելու ամենը հերթով հաղորդիր ինձ: Եվ կինը շարունակեց.

-Տասնյոթ տարի ես շրջեցի այս անապատում՝ վայրենի գազաններից, այսինքն՝ անբան ցանկություններիցս նեղվելով: Քանզի կերակրվելիս Եգիպտոսի ձուկն ու միսն էի տենչում, փափագում էի նաև ինձ համար բաղձալի եղած գինին, քանզի աշխարհում ապրելիս գինի շատ էի խմում: Իսկ այստեղ, նույնիսկ խմելու ջուր չունենալով, չարաչար պապակվում էի, և պահանջներս չբավարարելը տանջում էր ինձ: Նաև միշտ ինձ անբանապես ալեկոծում էր պոռնկական ցանկություններիս հիշատակը և դրդում երգել իմ սովորած դիվական երգերը: Իսկ ես, արտասվելով և կուրծքս ծեծելով, մտաբերում էի անապատ դուրս գալուց առաջ արած իմ ուխտը և մտովի տեղափոխվում ինձ երաշխավորող Աստվածածնի պատկերի առջև՝ խնդրելով վանել իմ չար մտքերը, որոնք այնքան վտանգում էին թշվառականիս հոգին: Եվ այսպես երկարատև արտասվելով և կուրծքս ուժգին ծեծելով՝ վերջապես իմ շուրջն ամենուրեք ծավալված լույս էի տեսնում և ապա զարմանալի և հեշտարար խաղաղության մեջ ազատվում էի մրրկալի խորհուրդներից: Արդ, ինչպե՞ս նկարագրեմ քեզ, հայր, այն բոլոր պառնկական խորհուրդները, որոնք մերժվեցին իմ կողմից: Սրտիս ներսում ցանկասիրության հուրն այրում էր՝ ինձ տառապեցնելով: Եվ ես, ընկնելով գետնին և արտասուքով թրջելով այն, պատկերացնում էի, թե երաշխավորս է տնօրինում ինձ՝ դատապարտելով հանցանքներս և դրանց համար սպառնալով պատժել: Եվ ես ընկածս տեղից վեր չէի կենում, մինչև որ այն քաղցր լույսը փայլում էր իմ շուրջը և վերացնում խավար խորհուրդները: Եվ այսպես, մտքիս աչքերը միշտ դեպի իմ երաշխավորը հառած, այս դժնդակ անապատում վտանգվածիս համար նրանից օգնություն էի խնդրում: Եվ նա իմ մշտական օգնականն ու ապաշխարության միջնորդն էր: Ահա այսպես, բյուր վտանգներով վտանգված, անցկացրի տասնյոթ տարի: Եվ մինչև օրս իմ օգնականն ինձ հետ է և խնամում է ինձ: Ծերն ասաց նրան. -Իսկ կերակրի ու հագուստի կարիք երբևէ չե՞ս զգացել: Կինը պատասխանեց.

-Իմ ունեցած հացի պաշարն սպառելով՝ տասնյոթ տարի անապատի բուսականությամբ եմ սնվել, իսկ ունեցածս հանդերձը Հորդանանն անցնելիս պատառոտվեց ու մաշվեց: Հաճախ սառնամանիքից ու նաև արեգակնատապ խորշակից վնասվելով, արեգակնակեզ տոթից կիզվելով ու ցրտաշունչ սառնամանիքից դողալով՝ ուժասպառ ընկնում էի գետնին՝ շատ անգամ նաև բռնված լինելով զանազան վշտերով, փորձություններով և օտարոտի խորհուրդներով: Սակայն այնուհետ Աստծո զորությունը բազում կերպերով իմ մեղավոր հոգուն և տառապյալ մարմնին պաշտպան կանգնեց: Եվ այժմ, խորհելով թե Տերն ինչպիսի չարիքից ինձ փրկեց, որպես անսպառ կերակուր ունեմ իմ փրկության հույսը: Քանզի սնվում ու քնում եմ Աստծո խոսքով, որ կարգավորում է ամեն ինչ, քանզի միայն հացով չի ապրում մարդ և ոչ էլ զգեստ կրելով: Քանզի մեղքերի վերարկուից ազատվածն առանց հանդերձի ապաստանում է ժայռերի ծերպերում: Լսելով, որ նա Մովսեսից, Հոբից ու սաղմոսներից խոսքեր է հիշատակում՝ Զոսիմոսը հարցրեց, թե արդյոք չի՞ ընթերցել սաղմոսներն ու մյուս գրվածքները: Իսկ կինն, այս լսելով, ժպտաց և ասաց. -Ով մարդ, հավատա, որ Հորդանանն անցնելուց ի վեր

քեզանից բացի ուրիշ ոչ մի մարդ և նույնիսկ որևէ գազան այս անապատում չեմ տեսել: Իսկ գրվածքները ոչ թե որևէ մեկից եմ սովորել և կամ որևէ մեկի սաղմոսելիս կամ ընթեռնելիս եմ լսել, այլ, քանի որ Աստծո խոսքը կենդանի է ու ներգործուն, Ինքն էլ մարդկանց ուսուցանում է գիտությունը: Արդ, քանի որ ես ավարտեցի սկսածս պատմությունը, այժմ Աստվածորդու մարդեղությամբ աղաչում եմ քեզ, որ հանուն Տիրոջ աղոթես անառակիս համար: Նրա խոսքերից հետո ծերն ընկավ գետնին ու արտասվաթոր աչքերով աղաղակեց՝ բարեբանելով անթիվ, մեծասքանչ գործեր Կատարողին. -Օրհնյալ է Աստված, որ շռայլորեն շնորհ է տալիս Իրենից երկյուղածներին: Քանզի արդարև, Տեր, Քեզ փնտրողներից ոչ ոքի չլքեցիր: Իսկ կինը, մոտենալով ծերին, ընդհատեց նրան՝ ասելով. -Երդվեցնում եմ քեզ, ով մարդ, մեր Փրկիչ և Աստված Քրիստոսով, որ այն ամենը, ինչ դու ինձանից լսեցիր, ոչ ոքի չհայտնես՝ նախքան Աստծո կողմից այս երկրից արձակվելս: Իսկ այժմ գնա խաղաղությամբ և մեկ տարի հետո, Աստծո շնորհներով պահպանվելով, կրկին կհանդիպես ինձ: Այնժամ հանուն Աստծո արա այն, ինչ որ հիմա քեզ կասեմ. գալիք տարվա պահոց շրջանին Հորդանանը մի անցիր, ինչպես անում եք սովորաբար: Իսկ ծերունին, հիացած, որ գիտի նաև վանքի կանոնը, ոչինչ չկարողացավ ասել, այլ միայն փառաբանեց.

-Փառք քեզ, Տեր Աստված, որ մեծամեծ պարգևներ ես տալիս Քեզ սիրողներին: Իսկ կինն ասաց.

-Այսուհետև, աբբա, կմնաս վանքում, քանզի եթե կամենաս իսկ դուրս գալ, այդ չի հաջողվի: Եվ Խորհրդավոր ընթրիքի երեկոյան (Ավագ հինգշաբթի) վերցրու կենդանարար Մարմինն ու պատվական Արյունը, դիր որևէ մաքուր ամանի մեջ, բեր Հորդանանի այն ափին գտնվող բնակավայրի մոտ, որպեսզի ես գամ և հաղորդվեմ կենարար Պատարագին. քանզի այն օրից, ինչ Հորդանանն անցնելուց առաջ հաղորդվեցի Կարապետի տաճարում, այլևս այդ սրբությանը չեմ հաղորդվել և այժմ անդիմադրելի ցանկությամբ փափագում եմ հաղորդվել: Այս պատճառով աղաչում եմ, որ չանտեսես իմ խնդրվածքները, այլ անպայման ինձ մոտ բերես այդ աստվածային կենարար խորհուրդը այն ժամին, երբ Տերն Իր աշակերտներին Իր աստվածային Ընթրիքին հաղորդ դարձրեց: Իսկ քո բնակված վանքի վանահայր Հովհաննեսին կասես. «Զգույշ եղիր, եղբայր, քո անձի և հոտի համար, քանզի բաներ են կատարվում,

որոնք շտկելու կարիք ունեն», բայց դրանք չեմ ուզում, որ այժմ ասես, այլ այնժամ, երբ Տերը հրամայի: Այս ասելով ու ծերունուն կրկին անգամ խնդրելով, որ աղոթի իր համար՝ դիմեց դեպի անապատի խորքերը: Իսկ Զոսիմոսը, ծնրադրելով ու համբուրելով գետինը, ուր մնացել էին նրա ոտնահետքերը, գոհանալով փառք էր տալիս Աստծուն և դարձյալ ու դարձյալ, խիստ ցնծալով հոգով ու մարմնով, փառավորում ու բարեբանում էր Տիրոջը: Ապա անցնելով անապատը, հասավ վանք այն ժամանակ, երբ սովորաբար վերադառնում էին մենակյացները: Եվ ողջ այդ տարին լռեց՝ չհամարձակվելով որևէ մեկին պատմել իր տեսածները: Բայց իր սրտում աղաչում էր Աստծուն, որպեսզի իրեն դարձյալ արժանացնի փափագելի դեմքի տեսությանը, և տրտմում ու տառապում էր՝ տարվա ժամանակը մտքով անցկացնելով, ու կամենում, որ տարին մեկ օրվա պես անցներ: Իսկ երբ հասավ պահոց շրջանի սկիզբը, այսինքն՝ առաջին կիրակին, բոլորը սովորականի պես աղոթք ասելուց անմիջապես հետո սաղմոսելով քաշվեցին անապատ: Մինչդեռ Զոսիմոսը, ջերմություն ունենալու պատճառով ստիպված մնաց վանքում: Եվ իսկույն հիշեց սրբուհու ասածը, թե՝ եթե նույնիսկ կամենա դուրս գալ անապատ, չի հաջողվի: Մի քանի օր անց ապաքինվելով հիվանդությունից՝ նա մնաց վանքում: Իսկ երբ կրոնավորները վերադարձան, եվ մերձեցավ Խորհրդավոր ընթրիքի մեծ օրվա երեկոն, ծերունին կատարեց իրեն հրամայվածը. մի փոքր սկիհի մեջ մեր Քրիստոս Աստծո անարատ Մարմնից ու պատվական Արյունից վերցնելով և մի ամանի մեջ չոր թուզ, արմավ և փոքր-ինչ թրջած ոսպ դնելով՝ ուշ երեկոյան գնաց-նստեց Հորդանանի ափին՝ սպասելով սուրբի գալստյանը: Կինն ուշանում էր: Իսկ Զոսիմոսը չքնեց, այլ սկսեց ուշադիր նայել անապատի կողմը՝ սպասելով տեսնել իր ցանկալիին: Եվ իր ներսում ասում էր. «Գուցե իմ անարժությունն է նրան արգելում գալ, կամ գուցե եկել է և, ինձ չգտնելով, իսկույն հեռացել»: Այսպես ասելով՝ արտասվելով հեծեծում էր և աչքերը երկինք հառած, աղաչում Աստծուն.

-Տե՛ր, ինձ մի՛ զրկիր սուրբին դարձյալ տեսնելուց, ում նախկինում տեսնել արժանացրիր, մի՛ թող ապարդյուն վերադառնալ՝ ինձ հետ տանելով իմ մեղքերի հանդիմանությունը: Այսպես արտասվելով՝ աղաչում էր և տարատեսակ մտածումների մեջ ընկնում, քանզի ասում էր ինքն իրեն. «Եթե նույնիսկ գա, արդյոք ինչպե՞ս պիտի անցնի Հորդանանը և

գա անարժանիս մոտ, քանի որ նավ չկա: Վա՜յ ինձ, որ զրկվեցի այդպիսի վայելուչ գեղեցկությունից»: Եվ մինչ ծերն այս էր խորհում, Աստծո սուրբը մոտեցավ: Եվ Զոսիմոսը վեր կացավ և անպատմելի խնդությամբ սկսեց գոհանալ ու փառավորել Աստծուն: Սակայն Հորդանանն անցնելու անկարելիության միտքը կրկին մտահոգում էր նրան, երբ տեսավ, որ սրբուհին Քրիստոսի խաչով Հորդանան գետը խաչակնքեց, որից հետո սկսեց ջրի վրայով դեպի ինքը գալ: Ծերը կամեցավ երկրպագել նրան, բայց նա արգելեց՝ ասելով.

-Ի՞նչ ես անում, աբբա՛, քահանա լինելով հանդերձ՝ անտեսո՞ւմ ես աստվածային պատվիրանը: Իսկ Զոսիմոսն ի պատասխան նրան ասաց.

-Փառք Աստծո, որ այսպիսի շնորհներ է պարգևում Իրեն փառաբանողներին: Կինը, անցնելով ջուրը, ծերից օրհնություն խնդրեց: Իսկ ծերը, որին հրաշափառ տեսիլքից սարսափ էր պատել, դողալով պատասխանեց. -Հիրավի անսուտ է Աստված, որ, ըստ Իր խոստման, յուրաքանչյուրին սեփական մաքրության չափով նմանեցնում է Իրեն: Փառք Քեզ, որ չանտեսեցիր աղոթքս և չզրկեցիր Քո ողորմությունից Քո ծառային, փառք Քեզ, Քրիստոս Աստված մեր, որ Քո այս աղախնի միջոցով երկիցս ցույց տվեցիր ինձ, թե որքան հեռու եմ կատարելությունից: Այնուհետև կինը խնդրեց, որպեսզի կարդա «Հավատո հանգանակը» և «Հայր մերը»: Աղոթքի ավարտից հետո, ըստ կարգի, նա հաղորդվեց կենարար խորհրդին, որից հետո ձեռքերը վեր բարձրացնելով, արտասվալից աչքերով բացականչեց.

-Այժմ, ով Տեր, ըստ Քո խոսքի՝ խաղաղությամբ արձակիր աղախնիդ, որովհետև աչքերս տեսան Քո փրկությունը: Ապա դիմեց ծերին՝ ասելով.

-Հա՛յր, թողություն տուր ինձ և իմ մի ցանկությունն էլ կատարիր. այժմ խաղաղությամբ գնա Աստծո վանք, իսկ եկող տարի կրկին եկ այն հովիտը, ուր առաջին անգամ հանդիպեցի քեզ: Արի՛ հանուն Տիրոջ և դարձյալ կտեսնես ինձ, ինչպես և Նա է կամենում: Իսկ ծերը պատասխանեց.

-Երանի կարելի լիներ այստեղից իսկ հետևել քեզ ու միշտ տեսնել քո պատվական դեմքը: Իսկ այժմ Աստծո սիրույն, կատարիր մեղավոր ծերիս ցանկությունը և փոքր-ինչ ճաշակիր իմ բերած կերակուրներից: Այս ասելով՝ նրան ցույց տվեց իր ունեցածը: Իսկ կինը, մատները

մոտեցնելով ոսպին, սակավ-ինչ ճաշակեց և ասաց. -Բավական է: Սուրբ Հոգու շնորհները, որ անարատ են պահում մաքրվածի հոգին, հագեցնում են ինձ: Ապա կրկին խնդրեց ծերին՝ ասելով.

-Աղոթիր Տիրոջն ինձ համար՝ հարաժամ հիշելով ինձ՝ թշվառությանս: Ծերունին, բռնելով սրբուհու ոտքերից, խնդրեց աղոթել սուրբ Եկեղեցու, թագավորների և իր համար: Ապա, այլևս չհամարձակվելով պահել նրան, հեծելով ու ողբալով հեռացավ: Իսկ սրբուհին, դարձյալ ուղղվելով Հորդանանի կողմը և խաչակնքելով գետը, առաջին անգամվա պես անցավ ջրի վրայով ու հեռացավ: Ծերը, երկրպագելով նրա ոտնահետքերը, ուրախությամբ և խիստ երկյուղով լցված, վերադարձավ՝ ինքն իրեն մեղադրելով, որ չիմացավ սրբուհու անունը: Սակայն, ըստ սրբուհու խոսքերի, հույս ուներ նրան հանդիպել եկող տարի: Եվ երբ այդ տարին մոտեցավ, կրկին ուղևորվեց անապատ: Կատարելով ողջ կրոնավորական կարգը՝ նա ընթանում էր դեպի այն հրաշափառ տեսիլքի վայրը: Հասնելով փնտրվող վայրը հիշեցնող նշանների՝ սկսեց աջ ու ձախ նայել որսորդի նման՝ իր այն քաղցր որսը բռնելու համար: Սակայն, հայացքը շուրջբոլորը շրջելով ու ոչ ոքի չտեսնելով, սկսեց արտասվել և, արտասվախառն աչքերը երկինք հառած, ասաց.

-Տե՛ր, ցույց տուր ինձ Քո անարատ գանձը, որ այս անապատում ես թաքցրել, ցույց տո՛ւր ինձ այն մարմնավոր հրեշտակին, որին արժանի չէ ողջ աշխարհը: Այս ասելով՝ հասավ այն հովտանման վայրին և կանգնելով այնտեղ, արևելյան կողմում տեսավ սուրբի գետնատարած մարմինը՝ ննջեցյալներին տրվող ձեռնամած, արևելահայաց դիրքով: Առաջանալով՝ նա արցունքներով լվաց սրբուհու ոտքերը, քանզի չհամարձակվեց մարմնի այլ մասի մերձենալ: Բավականին արտասվելուց հետո նա, հավուր պատշաճի սաղմոսներ և թաղման աղոթքներ կարդալով, ինքն իրեն ասում էր. «Արդյոք պատշա՞ճ կլինի սուրբի մասունքները թաղելը: Գուցե դա հանգուցյալ երանելուն էլ անհաճո լինի»: Սակայն այսպես ասելիս նրա գլխակողմի հողի վրա տեսավ հետևյալ գրությունը. «Հայր Զոսիմոս, Մարիամ տառապյալիս նշխարները թաղիր այստեղ՝ հողը հանձնելով հողին, և հարաժամ աղոթիր ինձ համար՝ Մարիամի, որ վախճանվեց՝ ըստ եգիպտացիների՝ փարմութ ամսին, որ, ըստ հռոմեացիների, ապրիլն է, Փրկիչի չարչարանքների գիշերը, նվի-

ական և աստվածային Ընթրիքի ճաշակումից հետո»: Կարդալով այս գրությունը՝ ծերը շատ ուրախացավ, քանզի իմացավ սրբուհու անունը և հասկացավ, որ Հորդանանի ափին հաղորդվելով, նույն օրը սրբուհին հասել է այդտեղ և հանգել ի Տեր: Այդ տարածությունը, որը Զոսիմոսն անցել էր քսան օր չարչարվելով, Մարիամը, ընթանալով Սուրբ Հոգու թևերով, կտրել էր մի ժամում և, տեղ հասնելով, դեպի վեր՝ առ Աստված ճանապարհվել: Ապա ծերը, փառավորելով Աստծուն և արտասուքով սրբելով մարմինը, ասաց. -Տառապյալ Զոսիմոս, այժմ պատվերը կատարելու ժամանակն է: Բայց ի՞նչ կարող ես անել, ով թշվառական. ձեռքիդ բրիչ իսկ չկա: Այս ասելուն պես անապատի բաց տարածության մեջ մի փոքրիկ փայտ տեսավ, որը վերցնելով՝ սկսեց փորել: Սակայն հողը չոր էր և դժվարությամբ էր փորվում: Եվ ծերը, չարչարվելով ու խիստ հոգնելով, քրտինքով շաղախված և այլևս չկարողանալով փորել, հառաչեց սրտի խորքից: Այդ պահին, գլուխը վեր բարձրացնելով, սրբուհու մարմնի մոտ մի հսկա առյուծ տեսավ, որ լիզում էր նրա ոտքերը: Գազանին տեսնելով՝ ծերը խիստ ահաբեկվեց, մանավանդ որ հիշեց Մարիամի խոսքերը, թե երբեք գազանի չի հանդիպել: Ապա խաչակնքեց՝ հավատալով, որ Քրիստոսի զորությունն իրեն անվնաս կպահի: Իսկ առյուծը, հեզ շարժումներով խաղաղություն ներշնչելով, սկսեց մոտենալ ծերունուն: Այնժամ Զոսիմոսը դիմեց առյուծին և ասաց. -Տիրուհին ինձ պատվիրեց ամփոփել իր նշխարները, բայց քանի որ ես ծեր եմ ու չեմ կարող գուբը փորել և համապատասխան գործիքներ չունեմ և չեմ կարող այնպիսի գերեզմանափոս քանդել, որը պատշաճ լինի այս գործին, ուստի քո մագիլներով փոսը փորիր, որպեսզի սրբուհու նշխարները հողին հանձնենք: Եվ առյուծն իսկույն դիմացի ոտքերով սկսեց փորել այնքան, որքան որ պետք էր մարմինը թաղելու համար: Ապա ծերը, դարձյալ արցունքներով լվանալով սրբուհու ոտքերը և այժմ առավել հույժ պաղատելով նրան, որ բարեխոսի բոլոր մարդկանց համար, հողով ծածկեց նրա գրեթե մերկ մարմինը, որ կրում էր միմիայն իրենց առաջին հանդիպման ժամանակ իր նետած այն պատառոտուն հանդերձը, որ միայն նրա մարմնի որոշ մասերն էր ծածկում: Այնուհետև երկուսն էլ հեռացան, առյուծը գառան պես հանդարտ քաշվեց անապատի խորքերը, իսկ ծերը, օրհնելով ու փառաբանելով Աստծուն, վերադարձավ վանք: Եվ գալով վանք՝ իր

տեսածներից ու լսածներից ոչինչ չթաքցրեց. պատմեց ամեն ինչ սկզբից մինչև վերջ, որպեսզի, Աստծո մեծամեծ գործերի մասին լսելով, բոլորը հիանան և երկյուղածությամբ կատարեն սրբուհու հիշատակը: Ապա, քանի որ սրբուհու երբեմնի ասածները դատարկ խոսքեր չէին, Հովհաննես վանահայրն ի հայտ բերեց վանքում շտկելու կարիք ունեցող բաները: Այնուհետև, հասնելով իր հարյուրամյակին, վախճանվեց նաև Զոսիմոսը: Իսկ այս պատմությունը բանավոր կերպով կրոնավորները սերնդե սերունդ միմյանց էին փոխանցում և ուսուցանում, և գրավոր արձանագրված այն չկար մինչև օրս: Իսկ ես, լսելով այն, գրի առա: Թերևս մեկ ուրիշն արդեն ավելի ճոխ ու բարձրարվեստ գրած լինի սրբուհու վարքը, քան ես, թեպետ այդպիսի լուր ինձ չի հասել: Սակայն, Աստծո զորությամբ գրելով այս պատմությունը, ճշմարտությունից բացի ոչինչ չեմ հետամտել: Եվ Աստված, որ մեծահրաշ ու սքանչելի գործեր է կատարում՝ արդարապես հատուցելով Իրեն ապավինածներին, թող վարձ շնորհի այս պատմությունից օգտվողներին և նրան, ով պատվիրեց այն արձանագրել, որպեսզի նրանց էլ արժանացնի հաղորդակից լինելու երանելի Մարիամի վարքին ու կարգին, նաև բոլոր նրանց, ովքեր ի սկզբանե հաճելի եղան Իրեն՝ շնորհիվ մեր Տիրոջը՝ Հիսուս Քրիստոսին ուղղված իրենց խնդրանքների: Նրան փառք հավիտյանս. ամեն:

ՀԱՄԱՌՈՏ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՐԱՆԵԼԻ ԱԲԲԱ ԶՈՍԻՄՈՍ ՊԱՂԵՍՏԻՆՑՈՒ ՄԱՍԻՆ

Երանելի Զոսիմոսի հնագույն լատին թարգմանիչն այսպիսի նախաբանով է այն սկսում. «Մեծ տեղ և գնահատական եմ տալիս այս զրույցներին: Այն պատճառով, որ շատ պարզությամբ է այստեղ շարադրված ասկետական սխրանքների իրական բնորոշումը նաև հոգևոր առատ օծության համար, որով այն ներծծված է, և սրբության քաղցրանուշ բուրման պատճառով, որ ելնում է սրանից: Ոչինչ ես այնքան սիրով չեմ արտագրել և ոչինչ թարգմանել սրտի նման բերկրանքով, որը և ինձ ստիպեց ուսումնասիրել, թե ով էր սրանց հեղինակը և ինչ ժամանակներում էր ծաղկել, քանզի թե մեկը և թե մյուսը ստույգ կերպով հայտնի չէին: Այս զրույցներից ոչ բոլորն են պահպանվել: Սրանք ինչպես երևում է, թղթին են հանձնվել մի ջանասեր ունկնդրի կողմից, որն անմիջականորեն լսել է այս պատկառելի տարիքի հասած ծերի բերանից, որն իր կյանքի բազում տարիներն անցկացրել է վանքի պարսպից ներս, և ճգնակենցաղության ուղով անցել քրիստոնեական կատարելության բոլոր աստիճաններով և հասել սրբության ամենավերջին մակարդակին, ինչը հասանելի է մահկանացու մարդու համար՝ օգնականությամբ աստվածային շնորհի: Զրույցների հեղինակն անվանվում է Երանելի Աբբա Զոսիմոս: Իսկ նրա խոսքերը գրի առնողն ակնարկում է, որ ինքը մեկն է Երանելու մշտական ունկնդիրներից, և հավանական է, որ այդ վանքի եղբայրներից մեկն էր, որտեղ և Հորդանանի մերձակայքում բնակվում էր Աբբա Զոսիմոսը: Սակայն ո՞վ է այս Երանելի Աբբա Զոսիմոսը: Երկար և ջանադիր փնտրտուքից հետո ահա, թե ինչպիսի եզրակացության հանգեցի, որ այս զրույցների հեղինակ հանդիսանում է հենց այն պանծալի Զոսիմոսը, որը ՎԵՐԻՆ ՏՆՕՐԻՆՈՒԹՅՈՒՆԻՑ ընտրված էր, որպեսզի լսի Մարիամ Եգիպտացու վարքն իր իսկ սեփական բերանից՝ արժանանալով նրա օրհնությանը և հողին հանձնելու այս Երանելի մոր նշխարները: Այս կարծիքը հաստատվում է նրանով, որ Աբբա Զոսիմոսի կյանքի որոշ դրվագներ, որ պատմվում են այս զրույցներում, լիովին համընկնում են Սուրբ Մարիամ Եգիպտացուն տեսնող և նրա վարքը պատմող Աբբա Զոսիմոսի հետ:

1. Սուրբ Մարիամ Եգիպտացու վարքի մեջ գրված է, որ Աբբա Զոսիմոսը դեռ մանուկ հասակից մտել է մի վանք և այնտեղ մնացել

հիսուներեք տարի, հետո վերից եկող հատուկ ներշնչմամբ տեղափոխվել է մերձհորդանանյան վանքերից մեկը և այնտեղից ելնելով էլ հանդիպել է սուրբ Մարիամ Եգիպտացուն: Աբբա Զոսիմոսի այս զրույցներում էլ հիշատակվում է, որ նա առաջ բնակվել է Տիրի մոտ գտնվող մի վանքում, հետո զրույցներից երևում է, որ նա անցել է սամարական Նեապոլով և վերջապես հանգրվանել է սուրբ Գերասիմոսի վանքում: Վերջին այս փաստարկները մեկնում են առաջիններին:

2. Ս. Մարիամի պատմության մեջ Աբբա Զոսիմոսի մասին ասվում է, որ նա հարուստ էր հոգևոր փորձառությամբ, և որ նրա մոտ խորհրդի համար գալիս էին շատերը, ոչ միայն իր վանքից, այլև այլ հեռու-մոտիկ գտնվող վանքերից: Երևում է, որ նա չէր սիրում գրել, այլ ուսուցանում էր միայն բանավոր: Սուրբ Մարիամի վարքն էլ նա չի գրել, այլ բանավոր փոխանցել է, որը և մնացել է եղբայրների հիշողության մեջ, մինչև որ սուրբ Սոփրոնիուսն այն գրի առավ: Որ նա եղել է այս զրույցների հեղինակը, ապացուցում է նաև պատմությունը շարադրելու ոճը. նրան հարցնում էին և նա խոսում էր: Նրա քսանիններորդ զրույցը հայտնում է սուրբ Գերասիմոսի վարքի մասին: Կարելի է եզրակացնել, որ մյուս զրույցներն էլ, որ այստեղ կան, գրվել են իր ամենամերձավոր աշակերտներից մեկի ձեռքով:

3. Աբբա Զոսիմոսը տալիս է այնպիսի խորհուրդներ, որոնք հիմնված են հնագույն սուրբ հայրերի խոսքի վրա և այնպիսի տոնով, որ զգացվում է, թե նա հայրերից այնքան էլ ուշ չի ապրել: Այս բանը մատնանշում է չորրորդ դարի վերջը և հինգի սկիզբը: Գտնում են, որ Մարիամ Եգիպտացին ննջել է 430 թվին: Կարելի է եզրակացնել, որ Աբբա Զոսիմոսը տեղափոխվել է Մերձհորդանանյան վանք 70 տարեկան հասակում: Այս վանքում նա ապրեց երեսուն տարի, քանի որ ննջել է հարյուր տարեկանում: Նրա համար, ով ապրել է հինգերորդ դարի առաջին կեսում, չորրորդ դարում ապրած ծերերի խոսքերը դեռ թարմ կարող էին լինել: Նման պարզորոշ փաստարկները, որոնց հետ հարկ է համաձայնել, ի հայտ են բերում զրույցների հեղինակին և այն, թե ինչպես են դրանք ստեղծվել: Աբբան ասում էր, իսկ հոգևոր խրատներ սիրող աշակերտը գրի էր առնում: Այսպես են սկսվում բոլոր այն զրույցները, որոնց թիվն այստեղ երեսունմեկն է՝ «Այսպես խոսեց, կամ ասում էր, կամ պատմում էր Աբբա Զոսիմոսը»:

ԵՐԱՆԵԼԻ ԱԲԲԱ ԶՈՍՄԻՈՍ ՊԱՂԵՍՏԻՆՑՈՒ ՀՈԳԵՇԱՀ ԶՐՈՒՅՑՆԵՐԸ

1. Դնելով խաչի նշանը շուրթերին, երանելի Զոսիմոսն սկսեց խոսել այսպես.

«Բանն Աստված, մարմնանալով, մեծ օրհնություն շնորհեց Իրեն ընդունողներին և աներկբա հավատացողներին: Մեր ժամանակներում էլ հնարավոր է վստահել, հավատալ և այդ սկսել հենց այս պահից, եթե ցանկանանք: Քանզի եթե լինի մեր հոժարակամությունը, շնորհն էլ կներգործի այնպես, որ բոլոր ցանկացողներն էլ նրա միջոցով կարող են ոչինչ համարել ամբողջ աշխարհը»:

Հետո նա վերցրեց, ինչ որ ընկավ ձեռքը, կարծես ծղոտ, թե տաշեղ, թե ինչ որ այլ մանրուք, և ավելացրեց. «Ով սրա համար կսկսի կռվել և վիճել, ընկնել հիշաչարության մեջ, կամ վշտից մաշեցնել ինքնիրեն, բացառությամբ միայն նրանից, ով ճշմարտապես խելքը գցել է:

Մի՞թե Աստծո այն այրը, որ ջանասիրությամբ առաջադիմում է աստվածպաշտության մեջ, չի համարի ամբողջ աշխարհը հավասար այս ծղոտին, եթե նույնիսկ ինքը տիրեր այդ ամենի վրա:

Քանզի, ինչպես որ ես միշտ ասում եմ, ունենալը չէ վնասակարը, այլ կրքոտությամբ ունենալը: Ով գիտի, որ այս ամենից, որ մենք ունենք, ոչ մի առավել թանկարժեք բան չկա մեզ համար, քան մեր մարմինը: Եվ այսպես, երբ ժամանակը պահանջի, մենք պատվեր ունենք չխնայել նույնիսկ մեր մարմինը, և առավել ևս այն բաները, որ մենք ունենք սրանից բացի: Սակայն հարկ չէ ուղղակիորեն և ինչպես որ պատահի ցիրուցան անել մեր ունեցվածքը, ինչպես որ հարկ չէ, որ ինքներս մեզ առանց իրավիճակը վերլուծելու, մատնենք մահվան, քանզի նման ձևով վարվելը բնորոշ է միայն խենթերին, այլ հարկ է մեզ սպասել, թե երբ ժամանակը կպահանջի այդ, որպեսզի տվյալ պահին պատրաստ լինենք նման քայլերի»: Միաժամանակ նա հիշեց մի եղբոր մասին, որը բանջարանոց ուներ և ասաց. «Մի՞թե չէր ջանում նա, ջանք չէր թափում, դժվարությամբ չէ՞ր աճեցնում, չէ՞ր պարարտացնում: Սակայն անխտիր չէր քանդում-հանում ու այս ու այն կողմ նետում, այլ ուղղակի այս բոլորը ուներ հենց այնպես, որ կարծես թե չուներ: Որովհետև, երբ նրա մոտ եկավ ծերերից մեկը՝ նրան փորձելու նպատակով և սկսեց քարուքանդ անել բանջարանոցը, նա նույնիսկ դուրս չեկավ խցից, այլ թաքնվեց, և երբ մնացին միայն արմատները, ասաց ծերին. «Եթե ցանկանում ես, հայր, թող այս և սրանից հյուրասիրության համար որևէ բան կպատրաս-

տենք»: Նման վարմունքից սուրբ ծերն իմացավ, որ սա ճշմարտապես Աստծո ծառան է, այլ ոչ ծառան բանջարեղենի, և ասաց նրան. «Աստծո Հոգին է հանգչում քո մեջ, եղբայր իմ»: Եթե նա ունենար կապվածություն բանջարեղենի հետ, ապա այդ նույն պահին ի հայտ կգար նրա մոտ վշտի և խռովքի միջոցով, սակայն նա ցույց տվեց, որ այս ամենը նա ուներ այնպես, որ կարծես թե չուներ»:

Եվ եզրափակեց Աբբա Զոսիմոսը՝ ասելով. «Դևերը նկատում են նման դեպքերը և երբ տեսնում են, որ ինչ-որ մեկը անկրքոտությամբ է վերաբերվում առարկայականին՝ առանց որևէ տագնապ ապրելու նրանց կորստի համար, այն ժամ հասկանում են այս ամենից, որ նա քայլում է երկրի վրայով, բայց իր մեջ չի կրում որևէ երկրավոր իմաստություն»:

2. Ձգտումներում ամենամեծ ուժը հոժարակամությունն է: Ջերմեռանդ հոժարակամությունը նույն պահին իսկ կարող է արժանանալ ավելի մեծ աստվածհաճության, քան երկարաժամկետ ճգնություններն առանց սրա: Թորշոմած և հեղգ հոժարակամությունը չունի ոչ զորություն և ոչ էլ որևէ ազդեցություն:

3. «Զարհուրում են դևերը, երբ տեսնում են մեկին, որը կրելով վիրավորանքներ, անպատվություն, վնասներ և այլ ուրիշ տհաճություններ, վշտանում է ոչ այն բանի համար, ինչի ենթարկվեց, այլ այն բանի համար միայն, որ չկարողացավ ըստ պատշաճի արիաբար կրել այդ ամենը: Քանզի դևերը սրանից եզրակացնում են, որ այսպիսի մեկն արդեն կանգնել է ճշմարտության ճանապարհին և ունի ամուր ցանկություն Աստծո պատվիրաններով քայլելու դեպի կատարելություն»:

Աբբա Զոսիմոսն այս թեմայի հետ կապված հիշեց սուրբ Պախոմի մասին, թե ինչպես վարվեց նա, երբ իր ավագ եղբայրը հանդիմանեց իրեն՝ ասելով. «Բավ է արդեն, դադարիր փառամոլությունից մղված մեծացնել վանքը»: Սակայն սուրբ Պախոմն այդ բանն անում էր ըստ վերից իրեն տրված պատվերի: Եվ այս պատճառով էլ, երբ լսեց այս բանը, և քանզի բարի նպատակով էր այդ բանն անում, իր մեջ զգաց վրդովմունքի մղում, սակայն որևէ հակառակ բան չասեց եղբորն այդ պահին: Երբ մութն ընկավ և սրտի այդ տհաճ շարժումը հանդարտվեց, նա մտնելով իր փոքրիկ աղոթատեղին, սկսեց աղոթել, ասելով. «Օ՜հ Աստված, իմ, իմ մեջ մինչ այսօր դեռ գործում է մարմնավոր իմաստնությունը, ես դեռ ապրում եմ մարմնավորապես: Ավա՜ղ, ի՞նչ է ինձ սպասում եթե ոչ

ըստ Սուրբ Գրքի այն, թե **«Եթե ըստ մարմնի ապրեք, կմեռնեք»** (Հռոմ. 8.18): Սրտի մաքրության համար գործած այսքան ճգնություններից հետո, նորից տրվել բարկության, թեկուզ և բարի նպատակով: Ողորմիր ինձ, Տեր, որպեսզի չկորսվեմ մինչև վերջ: Քանզի եթե Դու ինձ չամրապնդես կատարելապես ու չհաստատես բարու մեջ, ապա թշնամին կգտնի իմ մեջ իր մասը, թեկուզ ամենաչնչին չափով, և ես կդառնամ նրա գերին, քանզի՝ **«Նա, որ պահում է ամբողջ օրենքը և միայն մեկ բանով սայթաքում, պարտապան կլինի ամբողջ օրենքին»** (Հակ. 2.10): Սակայն հավատում եմ, որ եթե Դու Քո մեծ առատաձեռնությամբ, օգնես ինձ, այդ ժամ ես վերջ ի վերջո կսովոր եմ ընթանալ Քո սուրբերի ճանապարհով և մշտապես **«կձգտնեմ դեպի առջևում եղածներին»** (Փիլիպ. 3.12) և ինչ-պես որ հարկն է, կխայտառակեմ բուն թշնամուն»: Այլապես, ինչպե՞ս, ով Տեր, պիտի սովորեցնեմ նրանց, որոնց Դու կկանչես, որպեսզի այս կյանքը ինձ հետ անցկացնեն, եթե ես նախ չհաղթեմ ինքս ինձ և թշնամուն»: Այսպիսի աղոթքներով նա անցկացրեց ամբողջ գիշերը և նման աղոթական խոսքեր էր ասում և հղում արցունքներ, մինչև որ լույսը բացվեց: Եվ քրտնքից նրա ոտքերի տակ ջրակույտեր էին գոյացել, քանզի հունձի ժամանակ էր, և այդ տեղը շատ տոթ էր:

«Զարմանում եմ այս բանի վրա», -ասաց երանելի Զոսիմոսը, նրա արցունքները չափ չունեին: Ինչպես Աստված չի շնորհի նման ջերմեռանդ հոժարակամությանը ամեն տեսակի բարիքներ, որ խնդրում է Իրենից, երբ նման խնդրողը մեռած է ամեն ինչի համար, և այն էլ, ինչ-որ նկատում էր իր մեջ մեծ զղջմամբ ու հոժարակամությամբ բերում Տիրոջ առջև:

4. Էլի ասում էր հայր Զոսիմոսը. «Երբ մեկն իր միտքն է բերում իրեն վիրավորողին, կամ վնաս հասցնողին, կամ իրեն վատաբանողին և իր մասին ստություններ տարածողին, կամ իր հանդեպ այլ չարիքներ գործողին, և սկսում է չար մտածումներ հյուսել, ապա նա ինքն է իր վրա ամբաստանություններ բերում դևերի փոխարեն: Եվ այդ ժամ իրեն ամբաստանելու համար բավարար է հենց միայն իր իսկ սեփական անձը: Եվ ի՞նչ եմ ասում, թե երբ չար մտածումներ է հյուսում, երբ եթե չհիշի նրան որպես բարեգործի կամ բժշկի, ապա արդեն իսկ չափազանց անարդար վերաբերված կլինի նրա հանդեպ: Քանզի սա նման ձևով ջրի

երես է հանում այն կիրքը, որով դու հիվանդացել ես, որպեսզի բժշկի այն, և դու այդ պատճառով հարկ է, որ հիշես նրա մասին, ինչպես բժշկի մասին, որն ուղարկված է քեզ մոտ Քրիստոսի կողմից:

Հանուն Քրիստոսի, հարկ է քեզ կրել այդ բոլորը՝ գոհանալով նրանից այդպիսի բարերարության համար: Եվ եթե դու չօգտագործես այս բանը, ինչպես որ հարկն է և չձերբազատվես քո այս չափ կրքից, ապա իմացիր, որ Տեր Աստվածը չէ, որ մեղավոր է այդ բանում: Այն բանը, որ դու դրանից տառապանք ես կրում, նշան է, որ քո հոգին հիվանդ է, եթե դու հիվանդ չլինեիր, այդ ժամ և ցավ չէիր զգա: Այսպիսով, դու պետք է գոհանաս եղբորիցդ այն բանի համար, որ իր միջոցով իմացար քո հիվանդ լինելը, և այն, ինչ որ դու քաշեցիր նրա կողմից, ընդունիր սիրով, որպես բժշկարար դեղամիջոց, ուղարկված հենց Իրենից՝ մեր Տեր Հիսուս Քրիստոսից:

Եթե դու ոչ միայն չես գոհանում, այլ վիրավորվում ու ընդդիմանում ես նրան և հյուսում չար մտածումներ նրա դեմ, ապա դու նման ձևով, կարծես թե ասում ես Տեր Հիսուսին. «Չեմ ցանկանում բժշկվել Քո կողմից, չեմ ցանկանում ընդունել Քո տված դեղամիջոցները, այլ ուզում եմ նեխել իմ վերքերի մեջ, ցանկանում եմ հնազանդ լինել դևերին: Չեմ ճանաչում Տիրոջը, և ով է Նա, որ ես լսեմ Նրա ձայնին (Ելից 5.2): Եվ վերջ ի վերջո, ի՞նչ պիտի անի Տերը»: Իսկ Տերը լինելով գթած և երկայնամիտ մեր չարությունների հանդեպ, մեզ պատվիրաններ է տվել, որպեսզի բժշկվենք ախտերից, ինչպես որ բժիշկները բուժում են այրելու և մաքրման միջոցով[1]: Եվ այս պատճառով, ով ցանկանում է և փնտրում բժշկություն, այդպիսինին հարկ է լռությամբ դիմանալ այն բանին, ինչը որ դնում է նրա վերքերին բժիշկը, չնայած այն շատ ցավոտ կարող է լինել:

Չէ որ մարմնավոր հիվանդություններ կրողները որպես մի քաղցր բան չի, որ համարում են անդամահատումը և այրմանը դիմանալը, կամ մաքրողական դեղամիջոցների ընդունումը, սակայն համոզված լինելով, որ առանց սրանց անհնարին է ազատվել հիվանդություններից, հանձնում են իրենց բժիշկների ձեռքը, համոզված լինելով, որ այս՝ իրենց սպասվող փոքր ցավի միջոցով կձերբազատվեն ներքին ուժեղ

[1] *Հնում բժիշկները որոշ հիվանդություններ բուժում էին այրման միջոցով:*

բորբոքումներից և երկարաժամկետ հիվանդություններից:

Հիսուս Քրիստոսի բժշկարար այրման գործիք նա է, ով որ հասցնում է մեզ վիրավորանքներ և վնասներ:

5. Նա այս մասին ավելին ասաց. «Ոչնչացրու փորձություններն ու մտային խորհուրդները՝ չի լինի և ոչ մի սուրբ: Փրկարար փորձություններից փախչողը, փախչում է հավիտենական կյանքից: Մեկը սուրբերից ասել է. «Ո՞վ շնորհեց սուրբ նահատակներին փառքի պսակներ, եթե ոչ իրենց իսկ խոշտանգողները: Ո՞վ շնորհեց Սուրբ Ստեփանոսին իրեն այդպես շրջապատող փառքով, եթե ոչ նրանք, որոնք քարկոծեցին նրան»: Միացնենք սրան նաև խոսքը մի այլ Սուրբի, որն ասում էր. «Ես չեմ մեղադրում ինձ վատաբանողներին, այլ հակառակը, մեծարում եմ և համարում նրանց որպես իմ բարերարների, և չեմ հեռացնում ինձանից հոգիների Բժշկին, որ տալիս է իմ փառամոլ հոգուն վիրավորանքի դեղամիջոցը, վախենալով, որպեսզի չլինի թե Նա իմ հոգուն էլ այնպես ասի, ինչպես որ երբեմն ասաց. **«Բաբելոնին դեղ տվեցինք, բայց նա բժշկություն չգտավ»** (Երեմ. 51.9): Եվ նորից՝ **«Երուսաղեմ, Երուսաղեմ, որ կոտորում էիր մարգարեներին և քարկոծում էիր քեզ մոտ ուղարկվածներին, քանի-քանի անգամ կամեցա հավաքել քո որդիներին, ինչպես հավը իր ձագերին՝ թևերի տակ, բայց դու չկամեցար: Ահա ձեր տունը ձեզ պիտի թողնվի ավերակ»** (Ղուկ. 13.34-35):

6. Ասաց նաև. «Եվագրը վախենում էր, որ չլինի թե Տերը ասի իրեն՝ «Դու հիվանդացել էիր փառամոլությամբ, և ես քեզ վրա բերեցի անպատվության դեղամիջոցը, որպեսզի դու նրա միջոցով մաքրվեիր, սակայն դու չբժշկվեցիր»: Հարկ է իմանալ այս բանը, որ ոչ ոք չի ասում մեզ ուղիղ ճշմարտությունը, բացի նրանցից, ովքեր պարսավում են մեզ: Տերը որ քննում է մարդու սիրտն ու երիկամները, գիտի, որ եթե ամբողջ մարդկությունն էլ գովի և մեծարի մեզ, միևնույն է, մեր ամեն ինչը, այսպես թե այնպես, արժանի է նախատինքի և թուք ու մրի: Եթե ասեն. «Թե դու այս և այն բանն ես արել, ես կպատասխանեմ՝ բայց այդ բոլորի մեջ ո՞րն է իմ գործած լավը»: Ոչ ոք չի ասում իմ մասին ստություն, բացի նրանցից, որոնք գովում և մեծարում են ինձ, և ոչ ոք չի ասում իմ մասին ճշմարտությունը, բացի ինձ կշտամբողներից և նվաստացնողներից, և նրանք էլ դեռ ամբողջովին ճշմարտությունը չի, որ ասում են իմ մասին: Եթե այնպես ստացվեր, որ նրանք տեղեկանային, դեռ չեմ ասում իմ

ամբողջ չար գործերի ծովին, այլ միայն մի փոքր մասին, այն ժամ նրանք երես կթեքեին իմ հոգու ժանտ գարշահոտությունից: Եթե մարդկային մարմնի բոլոր անդամները վերափոխվեն՝ դառնալով լեզու, որպեսզի հանդիմանեն մեզ, ես համոզված եմ, որ և այն ժամ էլ նրանք չեն կարող ամբողջովին ջրի երես հանել մեր անպատվությունը: Ամեն մի հանդիմանող արժանացնում է հանդիմանության մեր մեղքերի ընդամենը մի մասը, բոլորը նա իմանալ չի կարող: Եվ եթե Հոբն ասում էր. **«Անարգանքով լցված եմ»** (Հոբ 10.15) և այն, ինչ որ լցված է, էլ ուրիշ բան իր մեջ տեղավորել չի կարող, ապա մենք ի՞նչ ասենք, որ անդունդ ենք ամեն չարության: Բոլոր մեղքերի ծանրությամբ էլ կուրացրեց մեզ սատանան, և հարկ է մեզ գոհանալ նրանցից, ովքեր խոնարհեցնում են մեզ՝ նվաստացնելով, քանզի նրանք, որ գոհանում են իրենց նսեմացման համար, նրանք դրանով մեծ հարվածներ են իջեցնում սատանայի գլխին: Սուրբ Հայրերը ասել են, որ եթե խոնարհությունը իջեցվի մինչև դժոխք, այն կհամբարձվի մինչև երկինք և հակառակը, եթե հպարտությունը բարձրանա մինչև երկինք, այն վայր կնետվի մինչև դժոխք:

Ինչպիսի բաներ էլ, որ կրի խոնարհը, կամ լսի, նա այս բոլորի մեջ պատճառ է գտնում ինքնիրեն անարգելու և ստորացնելու համար: Այս նյութի հետ կապված, Երանելի Զոսիմոսը հիշեց, թե ինչպես կղերականները դուրս վռնդեցին Աբբա Մովսեսին եկեղեցու բեմից՝ ասելով. «Կորիր այստեղից, եթովպացի», և թե ինչպես նա ինքն իրեն սկսեց հանդիմանել՝ ասելով. «Ճիշտ վարվեցին նրանք քեզ հետ, սևամորթ: Մարդ չլինելով հանդերձ մի մտիր մարդկանց մեջ: Շատ լավ վարվեցին նրանք»:

7. Ասում էր նաև, որ հարմար է իրագործել այն, ինչը որ լսում ենք Սուրբ և գործնական մեր ուսուցչից՝ Աբբա Ամոնից, որն ասում է. «Շատ ուշադիր եղիր քո հանդեպ, թե հանուն ինչի ես դուրս եկել դու աշխարհից և ինչի համար է, որ դու այստեղ ես գտնվում և ամեն կերպ ջանա լռել, երբ մեկը քեզ ինչ որ վշտի ենթարկի, լռել և ոչ մի խոսք չարտաբերել, մինչև որ անդադար աղոթքով չհանդարտեցնես սիրտդ և հետո նոր խնդրիր եղբորիցդ ներողություն: Եվ ով սիրում է ճշմարիտ և ուղիղ ճանապարհը, նա, եթե ինչ որ մի բանի պատճառով խռովքի է մատնվում, միշտ ինքն իրեն է մեծ կշտամբանքի արժանացնում և մերկացնում իր սեփական անձը՝ ասելով. «Դիվահարվում ես, ով իմ

անձ, և ինչո՞ւ ես խռովվում որպես խելացնոր»:

Եվ այդ խռովքը ցույց է տալիս, որ հիվանդ ես: Քանզի, եթե հիվանդ չլինեիր, չէիր էլ կրի այդ տառապանքները: Եվ ինչո՞ւ ես ինքդ քեզ հանդիմանելը թողելով, կշտամբում եղբորդ, որը ցույց տվեց քեզ քո հիվանդությունները: Գործով և ճշմարտությամբ սովորիր Տեր Քրիստոսից պատվիրանները. **«Որ նախատվելով՝ փոխարենը չնախատեց, չարչարվելով՝ չսպառնաց»** (Պետր. 2.23): Լսո՞ւմ ես, թե ի՞նչ է ասում Նա, և ինչ ցույց տալիս գործով: **«Թիկունքս հարվածների տվեցի, ծնոտներս՝ ապտակի և երեսս շուռ չտվի նախատինքներից ու թքից»** (Եսայի 50.6): Իսկ դու, թշվառ հոգի, մի փոքր անպատվության և անարգանքի, մի չնչին արհամարհանքի և անտեսման, դատվելու և զրպարտանքի պատճառով, նստել և անհամար անբարյացկամ խորհուրդներ ես հյուսում, որով ինքդ քեզ վրա ես հարձակվում դևերի փոխարեն: Ի՞նչ կարող է անել նման հոգուն դևը ավելին, այն բանից, ինչը որ նա ինքն է իր հանդեպ անում: Քրիստոսի խաչը տեսնում ենք, Իր տառապանքների մասին, որ կրեց մեզ համար, կարդում ենք ամեն օր, իսկ ինքներս ոչ մի վիրավորանք չենք ուզում կրել, ճշմարտապես, որ մենք շեղվել ենք արդարության ճանապարհից:

8. Էլի ասաց. «Եթե մեկը չառաջնորդվի այն ուղիղ ճանապարհով, որով առաջնորդվում էին Սուրբերը՝ այսինքն՝ անարգանքի և անդադար կորուստներ կրելու ուղով, նա առաջընթաց չի ունենա ոչ շատի և ոչ էլ քչի մեջ և չի կարող ձեռք բերել պատվիրաններում պահված գանձերը, այլ ուղղակի իզուր կծախսի իր կյանքի բոլոր օրերը»: Սրան ավելացրեց նա. «Երբ ես գտնվում էի Երանելի Դիոնիսիայի մոտ, մի եղբայր նյութական օգնություն ստանալու ակնկալիքով դիմեց նրան և նա տվեց նրան, որքան որ կարողացավ: Բայց քանի որ սրան այնքան չէր տվել, որքան որ սա ակնկալում էր, այս պատճառով նա սկսեց չարախոսել և անմիտ բաներ տարածել իմ և Դիոնիսիայի մասին: Այս լսելով, նա բարկացավ և ցանկանում էր ինչ որ մի բանով այս չարախոսին վարձահատույց լինել: Այս հասկանալով, ես ասացի նրան. «Դու այդ ի՞նչ ես ուզում անել, նման վարմունքով դու ինքդ քեզ կվնասես և կհեռացնես քո հոգուց ողջ առաքինություններդ: Եվ չէ՞ որ դու այդ անելով ըստ արժանավույնի չես ուզում կրել այդ զրպարտանքները, ինչպես որ Քրիստոս կրեց քեզ համար: Գիտեմ, տիրուհի, որ դու քո ամբողջ ունեցվածքը ցիրուցան ես

արել որպես աղբ, բայց եթե ձեռք չբերես հեզություն, ապա կնմանվես դարբնի, որը հարվածներ է հասցնում երկաթի կտորին, սակայն պետքական բան չի սարքում դրանից: Լսիր, թե ինչ է ասում Իգնատիոս Աստվածակիրը. «Փնտրիր հեզություն, որով ավերվում է այս աշխարհի իշխանի ամբողջ զորությունը»: Տագնապի չմատնվել ոչ մի բանի համար, ահա սա է ողջ աշխարհը ուրացած լինելու նշանը: Պատահում է, որ մեկը արհամարհելով բազում գանձեր, հետո մոլությամբ կապվում է մի ասեղի հետ, և այս հակումը նրան մատնում է խռովքի և տագնապի: Այս դեպքում ասեղը տեղ է գտնում նրա մեջ՝ մերժված գանձերի փոխարեն: Ահա, թե ինչպես է պատահում, որ մարդ դառնում է ծառան ա-սեղի կամ գրքի, վեղարի, փարաջայի կամ պարեգոտի, դադարելով դառնալ ծառան Աստծո: Լավ է ասել իմաստուններից մեկը. «Որքան որ կիրք կա հոգուդ մեջ, այնքան էլ և՝ տերեր»: Եվ Տերն էլ ասում է. **«Որտեղ որ ձեր գանձերն են, այնտեղ էլ և ձեր սրտերը կլինեն»** (Մատթ. 6.21): Առաքյալը նմանապես ասում է. **«Ինչ բանից, որ մեկը հաղթվի, նրան էլ ծառա կդառնա»** (Բ Պետր. 2.20): Լսելով այս ամենը, Դիոնիսիան զարմանքով նայեց ինձ վրա և ասաց. «Թող գտնես դու Աստծուն, Որին այդպես տենչում ես»:

9. Նաև ասաց Երանելին. «Հոգին ցանկանում է փրկվել, սակայն տենչանքը ունայն բաների հանդեպ և հոգսը նրանց համար պատճառ է, որ սա փախչի փրկարար գործերի հանդեպ եղած ջանքերից: Ասենք, ճշմարտապես ոչ թե պատվիրաններն են ծանր, այլ մեր չար ցանկությունները: Երբեմն պատահում է, որ մենք վախենալով, որ կարող ենք սուզվել ծովում, կամ ընկնել ավազակների ձեռքը, այդ բաների հանդեպ ունեցած սարսափից, արհամարհում ենք և պատրաստակամորեն մի կողմ ենք նետում մեր ունեցվածքը, երբ տեսնում ենք, որ քիչ հետո մեզ մահ է սպառնում: Եվ այն բանի համար, որպեսզի դեռ մի քիչ էլ ապրենք այս երկրի վրա, մենք ամեն բան արհամարհում ենք և երջանկություն ենք համարում այն, որ ամեն ինչ կորցնելով, փրկում ենք ինքներս մեզ ավազակներից կամ ալեկոծ ծովից: Եվ այսպես, սարսափելով ծովի ալիքներից ամեն ինչ մոլեգնորեն գցում ենք ծովը, միայն թե պահպանվի այս ժամանակավոր կյանքը, իսկ ինչո՞ւ չի պահվում նման հաշվենկատություն հավիտենական կյանքի հան-դեպ: Ինչո՞ւ Աստծո հանդեպ եղող երկյուղը մեր մոտ այդքան մեծ չէ, որքան

որ մեծ է վախը ծովի հանդեպ, ինչպես որ այս մասին ասաց Սուրբերից մեկը»:

10. Այս բանի հետ կապված, Աբբան պատմեց հետևյալ պատմությունը. «Մի անգամ թանկարժեք քարերի վաճառքով զբաղվող մի վաճառական իր երեխաների հետ բարձրացավ մի նավ՝ իր հետ ունենալով բազում թանկարժեք քարեր և մարգարիտներ, որը և մեծ շահով վաճառելու հույս ուներ այն երկրում, դեպի ուր ուղևորվում էր: Պատահեց այնպես, որ Աստծո կամքով վաճառականը շատ սիրեց նավի վրա իրեն սպասարկող մի պատանու, և մխիթարում էր նրան, և ինքն էլ նավարկության ընթացքում մխիթարվում նրանով և միշտ հաղորդակից էր դարձնում իր սեղանին: Մի օր այս պատանին նկատեց, թե ինչպես են նավաստիները փսփսում իրար մեջ, և ականջ դնելով գլխի ընկավ, որ սրանք որոշել են այս վաճառականին գցեն ջուրը՝ իր թանկարժեք քարերը ձեռք գցելու նպատակով: Այս բանը մեծ վիշտ պատճառեց պատանուն: Եվ երբ հետո թախծոտ դեմքով սա մոտեցավ վաճառականին, որպեսզի սովորականի պես ծառայություն մատուցի, վաճառականը հարցրեց, թե ինչո՞ւ է այդպես տրտում: Պատանին չհամարձակվելով ասել ճշմարտությունը, ասաց, թե ոչինչ չի պատահել: Սա նորից պնդեց, թե. «Ի՞նչ որ բան կա սրտումդ , ասա ինձ ճշմարտությունը, ինչպես որ կա»: Պատանին սկսեց հեկեկալ և ասաց նրան, որ նավաստիները այսպիսի բաներ են խորհում քո դեմ:

-Դա հաստա՞տ է, -հարցրեց վաճառականը:

-Այո, -պատասխանեց պատանին, -նրանք իրար մեջ դա արդեն հաստատ որոշել են:

Այդ ժամ վաճառականը կանչեց իր երեխաներին և ասաց. «Ինչ որ ձեզ ասեմ, կատարեք այն՝ առանց հակաճառելու»:

Հետո փռելով սփռոցն ասաց. «Բերեք այստեղ արկղերը»: Նրանք բերեցին, և սա սկսեց քարերն ամբողջությամբ դատարկել: Դատարկելով բոլորը, ասաց. «Այսպիսին է կյանքը, այս առարկաների պատճառով ես ծովը գցվելու մեծ վտանգի եմ ենթարկվում, և ոչինչ ինձ հետ չտանելով, քիչ հետո մահն իմ վրա կհասնի»:

Հետո հրամայեց երեխաներին. «Ծովը գցեք այս բոլորը», նրանք այս խոսքերը լսելով, անմիջապես այդ բոլորը ծովը գցեցին: Այս տեսնելով ապշեցին նավաստիները, և քանդվեցին նրանց չար խորհուրդները:

Վերջացնելով այս պատմությունը, երանելի Աբբա Զոսիմոսը ավելացրեց. «Տեսնո՞ւմ եք, թե սրա խորհուրդները ինչ ընթացք ստացան, ինչպես սա նույն պահին վարվեց իմաստությամբ, թե՛ խոսքով և թե՛ գործով: Եվ այս բոլորն այս վաղանցիկ կյանքը պահպանելու համար: Եվ արդարացի վարվեց, խորհելով, որ եթե մահանա, ի՞նչ օգուտ կունենա այս քարերից: Իսկ մենք մի չնչին կորուստ կամ զրկանք չենք ուզում անտարբեր կրել հանուն Քրիստոսի պատվիրանների: Իսկ եթե չենք կարողանում չվշտանալ, այդ ժամ հարկ է վշտանալ մեզ վնաս հասցնողների հոգու կորստյան համար, այլ ոչ թե ունեցվածքի կորստի, քանզի նա անհիրավություն գործելով զրկեց իրեն արքայությունից, որովհետև **«Անիրավները Աստծո Արքայությունը չեն մտնում»** (Ա Կորն. 6.9): Իսկ քեզ անհիրավություն կրողիդ շնորհեց հավիտենական կյանք, ինչպես որ ասում է Տերը այսպիսիններին. **«Ուրախացեք և ցնծացեք, քանի որ ձեր վարձքը շատ է երկնքում»** (Մատթ. 5.12):

Իսկ մենք թողնելով վիշտը Քրիստոսի անդամի կորստի համար, նստում և հյուսում ենք ապականացու մտածումներ անցողիկ, չնչին, կորուսյալ և ոչինչ չարժեցող բաների շուրջ:

Արդարացիորեն, մենք արժանի ենք ամեն տեսակի պատիժների: Աստված մեզ բարձրացնելով, դասեց Քրիստոսի անդամների հետ, որպես գլուխ ունենալով Քրիստոսին՝ մեր Աստծուն, ինչպես որ ասաց Առաքյալը. **«Մարմինն ունի բազում անդամներ, և մարմնի բազում անդամները բոլորը մեկ մարմին են»** (Ա Կորնթ. 12.12): **«Նրան հաստատեց իբրև Եկեղեցու գլուխ»** (Եփես. 1. 22): Այս պատճառով, երբ եղբայրը քեզ վիշտ է պատճառում, սա նման է այն բանին, ինչպես ցավից տառապող ձեռքը, կամ աչքը ստիպում է տառապել մարմնի այլ անդամներին:

Չէ որ մենք ձեռքը չենք կտրում և մի կողմ նետում և աչքն էլ չենք հանում, երբ սրանք մեզ ցավ են պատճառում, համարելով մեր համար չարիք՝ այս անդամներից որև է մեկից զրկվելը: Այլ ընդհակառակը, խաչի նշանը՝ Քրիստոսի այս Սուրբ կնիքն ենք դնում սրանց վրա և Սուրբերին խնդրում, որ աղոթեն և մեծ ջանասիրությամբ մեր աղոթքներն ենք հղում առ Աստված, և սրա հետ միասին պատրաստում ենք քսուկներ և թրջոցներ, որպեսզի սրանց օգնությամբ բժշկենք հիվանդ անդամը: Եվ այսպես, ինչպես որ դու աղոթք ես անում աչքի կամ ձեռքի համար, որ նրանք առողջանան, և քեզ էլ ցավ չպատճառեն,

այդպես և աղոթիր քո եղբոր համար: Իսկ մենք տեսնելով Քրիստոսի անդամները կրում են այսպիսի հոգևոր վնասներ, ոչ միայն չենք վշտանում նրանց համար, այլ նույնիսկ աղոթում ենք նրանց դեմ: Սա իրականում բնորոշ է նրանց, որոնք չունեն ողորմած սիրտ:

11. Ասաց նաև Երանելին. «Խորունկ առատաձեռնություն, սեր և կարեկցանք ձեռք բերողը, առաջին հերթին ինքն իրեն է ուրախացնում ու օգտակար լինում, իսկ հետո նաև մերձավորին, նմանապես և չարությունը վիրավորում և խոցում է նախ նրան, ով այդ բաները կրում է իր մեջ: Չնայած, թվում է թե, որ նա վնաս է հասցնում մերձավորի անվանը, կամ պատվին, կամ նույնիսկ հենց մարմնին, սակայն իրականում նա ինքն իրեն է աներևակայելի վնաս հասցնում՝ զրկելով իրեն հավիտենական կյանքից»: Այս բոլորին Աբբան ավելացրեց հետևյալ ասույթը. «Այն, ինչը որ վնասակար չէ հոգու համար, վնասակար չի կարող լինել մարդու համար»:

12. Էլի նա ասաց. «Մեկն ինձ ասաց՝ «Աբբա, չափազանց շատ է այն, ինչ-որ պատվիրվել է մեզ, մթագնում է միտքը, երբ սկսում ես քննել, թե որն ես նրանցից պահպանում և որը՝ ոչ»: Ես պատասխանեցի նրան. «Դա թող քեզ չխռովեցնի, դու ահա թե ինչ պահիր մտքումդ, որ եթե իրերի նկատմամբ տենչանք չունենաս, այդ ժամ հարմար կերպով կկատարես ամեն մի առաքինի գործ: Դրանց պատճառով մի վիճիր և հիշաչարությամբ չես տարվի, իսկ այդ պարագայում մի՞թե ավելի մեծ ջանք է հարկավոր, որ աղոթես մերձավորիդ համար, մի՞թե ավելի, քան հող փորելը: Սակայն գնա համբերության ճանապարհով, մեծահոգությամբ կրիր ունեցվածքիդ անհիրավաբար հասցված վնասները, գոհությամբ կրիր անպատվությունները, և ահա դու Սուրբ Առաքյալների աշակերտն ես, որոնք ծեծվելուց հետո վերադարձան դատարանից՝ ուրախանալով, որովհետև Տիրոջ անվան համար անարգվելու արժանի էին եղել» (Գործք. 5. 41):

Եվ նրանք լինելով մաքուր, Սուրբ Քրիստոսի անվան համար անարգանք կրեցին, իսկ մենք հարկ է անարգանքի արժանանանք մեր իսկ մեղքերի համար: Մենք անարգ ենք, չնայած որ ոչ մեկը մեզ չի անարգել, և անիծված, քանզի. **«Անիծված են, -ասում է մարգարեն, -Քո պատվիրաններից շեղվողները»** (Սաղմ.118.21): Ոչ բոլորին է վիճակված անարգանքներ կրել Քրիստոսի անվան համար, ոչ բոլորին, այլ միայն

սուրբերին և մաքուրներին, ինչպես որ ես արդեն ասացի, իսկ մեր նման մարդկանց գործը այն է, որ գոհանալով ընդունենք մեր վրա եկող անարգանքները, խոստովանելով, որ արժանավորապես ենք կրում այս ամենը մեր վատ արարքների համար: Անիրավ է այն անձը, որը գիտի իր անմաքուր արարքները և տեսնում է, որ ըստ արժանավույն է կրում այն, ինչ որ կրում է և նստելով ու խաբելով իր խիղճը, չար խորհուրդներ է հյուսում, ասելով. «Նա այս ու այն բաները ասաց, անպատվեց ու անարգեց ինձ»: Սրանով նա ինքն իրեն է ամբաստանում և ինքն իրեն թշնամի դառնալով փոխարինում է դևերին: Քանզի, ինչը որ պատահում է նկարիչների հետ, նույնը և պատահում է հոգու հետ: Ինչպես որ այստեղ գլխավոր վարպետը սովորեցնելով արվեստը աշակերտին, նրան հետո թողնում է, որ ինքնուրույն աշխատի և կարիք չի զգում նստել աշակերտի կողքին, այլ երբեմն-երբեմն հետևում է նրան, թե նա չի՞ ծուլացել, կամ չի՞ փչացրել աշխատանքը: Այսպես և դևերը, երբ տեսնում են, որ անձը հնազանդությամբ և հեշտությամբ է ընդունում չար խորհուրդները, նրան են փոխանցում այս սատանայական արվեստը, և էլ հարկ չեն համարում նստել նրա կողքին, համոզված լինելով, որ հենց միայն ինքն էլ հերիք է, որպեսզի իր հանդեպ ամբաստանություններ դիզի: Ուղղակի երբեմն գալիս են տեսնելու, թե սա արդյոք չի՞ ծուլացել:

13. Ասում էր նաև Աբբան, որ ի՞նչն է ավելի լավ, քան սիրելը բոլորին, և ի՞նչն է ավելի հաճելի, քան բոլորի կողմից սիրված լինելը: Եվ ինչպիսի՞ մխիթարություններ ասես, որ չկան Քրիստոսի պատվիրաններում: Սակայն ազատակամությունը չի ձգտում նրանց կատարելու, քանզի եթե ձգտեր, ապա Քրիստոսի շնորհի օգնությամբ, ամեն բան նրա համար հեշտ կլիներ: Մեր կողմից կամքի մի փոքր դրսևորումը դեպի բարին, պատճառ է, որ Աստված մեզ օգնության հասնի, ինչպես որ ես միշտ ասում եմ, ինչպես որ ասում է աստվածային Անտոնը. «Առաքինի գործերի համար հարկավոր է միայն մեր ցանկությունը և փորձառությունը»: Հարկ չկա առաքինություններ գտնելու համար ճանապարհվել հեռավոր երկրներ և ոչ էլ երկնքի արքայությունը ժառանգելու համար կտրել և անցնել ծովերով: Ինչպիսի՞ հանգիստ է վայելում հեզը և խոնարհը: Արդարացիորեն՝ **«Հեզերը կժառանգեն երկիրը և խաղաղության առատությամբ պիտի ուրախանան»** (Սաղմ. 37.14):

14. Ասաց նորից Երանելին. «Գնում էինք մենք մի անգամ ես, մի

եղբայր և աշխարհականներից մի քանի հոգի, Սամարայի Նեապոլյան կոչված ճանապարհով և հասանք այն տեղը, որտեղ գտնվում էր մաքսատունը: Աշխարհականները իմանալով, որ ըստ սովորության, այստեղ պահանջվում էր վճարել, տվեցին մաքսը՝ ոչինչ չասելով, սակայն եղբայրը, որ ինձ հետ էր, սկսեց հակաճառել նրանց՝ ասելով. «Մի՞թե դուք կհամարձակվեք վանականներից էլ պահանջել»: Լսելով այս, ես ասացի նրան, դու այդ ի՞նչ ես անում, եղբայր: Քո ասածը այլ բան չի, որ ասում ես նրանց, եթե ոչ՝ «Ցանկանում ես, թե՝ ոչ, մեծարիր ինձ, որպես սուրբի»: Ուրիշ հարց է, եթե նրանք տեսնեին քո բարի կամեցողությունը և խոնարհությունը, ամաչելով ասեին. «Ներիր, չեմ վերցնում»: Եվ այսպես դու չվարվեցիր այնպես, ինչպես աշակերտը Հեզի և Խոնարհի: Իսկ այժմ, տուր ինչ որ հարկն է, և խաղաղությամբ շարունակիր ճանապարհդ»:

15. Մի այլ անգամ, երբ ես գտնվում էի սուրբ քաղաքում, ինձ մոտեցավ մի Քրիստոսասեր և ասաց. «Այնպես ստացվեց, որ իմ և եղբորս միջև մի փոքր անհաշտություն առաջացավ, հիմա եղբայրս չի ցանկանում հաշտվել ինձ հետ, և այժմ խնդրում եմ, շնորհ արա, խոսիր նրա հետ»: Ես ուրախությամբ համաձայնվեցի, և կանչելով այդ եղբորը, խոսեցի նրա հետ այն ամենի մասին, ինչը որ կարող էր նրան ուղղել դեպի սերը և խաղաղությունը: Նա կարծես թե համաձայնվեց, սակայն հետո ասաց ինձ. «Ոչ, չեմ կարող հաշտվել, որովհետև խաչով եմ երդվել, որ չհաշտվեմ»: Այն ժամ ես ժպտալով ասացի նրան. «Քո երդումը այսպիսի իմաստ ունի, երդվում եմ Քո սուրբ Խաչով, որ չեմ պահի Քո պատվիրանները, այլ կկատարեմ կամքը Քո թշնամու՝ սատանայի»: Իմացիր, որ մենք ոչ միայն պարտավոր չենք կանգնել մեր տված խոսքի վրա, որով խոստացել ենք անել մի ինչ-որ չար գործ, այլ առավել հարկ է, զղջալ և ապաշխարել այն բանի համար, որ ինքներս մեզ ստիպել ենք նման ձևով վարվել: Ինչպես որ ասում էր աստվածային Բարսեղը. «Եթե Հերովդեսը սթափվեր և չիրագործեր իր տված երդումը, չէր ընկնի ահավոր մեղքի մեջ՝ գլխատելով Քրիստոսի Մկրտչին»: Եվ վերջապես, ես նրա առջև բերեցի Սուրբ Ավետարանի խոսքը այն մասին, որ Տերը ցանկացավ լվանալ Սուրբ Պետրոսի ոտքերը, իսկ այս վերջինը վճռականորեն, որ հատուկ է երդվողներին, ասաց. **«Չես լվանա»:** Իսկ հետո ոչ միայն համաձայնվեց այդ բանին, այլև ցանկացավ ավելին (Հովհ. 13. 5-10):

16. Նորից ասաց Երանելին. «Հարցրեցին ինձ մի անգամ, թե ինչպե՞ս կարող ենք ոնց-որ հարկն է սանձել բարկությունը»: -Ես այսպիսի պատասխան տվեցի. բարկությունը սանձահարելու սկիզբը դա չխոսելն է, մինչդեռ շարունակվում է մեջդ բարկալից գրգռվածությունը: Սրա օրինակը տեսնում ենք Աբբա Մովսեսի վրա, որին հայրերը, երբ ցանկանում էին փորձել, իրենց հավաքի ժամանակ այսպես ասացին նրան. «Ինչո՞ւ է այս եթովպացին մտնում մեր հավաքույթի մեջ»: Իսկ նա այս լսելով՝ լռեց և հետո, երբ ոմանք հարցրեցին նրան, թե չխռովվե՞ց այդ բանից, նա պատասխանեց. **«Խռովվեցի, բայց չխոսեցի»** (Սաղմ. 76.4): Սակայն նա այդպիսին էր սկզբում: Իսկ հետո, երբ նա փորձառություն ձեռք բերեց և ձեռնադրվեց սարկավագ, այն ժամ ոչ միայն լռեց, այլ նաև չխռովվեց: Եվ ահա, թե դա ինչպես եղավ: Արքեպիսկոպոսը ցանկանալով փորձել նրան, ասաց կղերականներին. «Երբ Աբբա Մովսեսը մտնի դասից ներս, նրան դուրս վռնդեք, և գնալով նրա հետևից, ականջ դրեք և իմացեք, թե նա ինչ կխոսի»: Եվ երբ նա մտավ դաս, կղերականներն ասացին նրան. «Դուրս կորիր այստեղից, սևամորթ եթովպացի»: Եվ նա դուրս եկավ՝ ասելով ինքն-իրեն. «Լավ արեցին քեզ հետ, մարդ չլինելով հանդերձ, ինչո՞ւ ես մտնում մարդկանց հավաքի մեջ»: Այժմ նա ոչ միայն լռեց անարգանք կրելուց, այլև չխռովվեց, և ոչ միայն չվրդովվեց, այլ նաև հանդիմանեց ինքն իրեն: Խռովվել, սակայն չխոսելը այդ պահին բնորոշ է անկատարներին և սկսնակներին, իսկ նաև չվրդովվել արդեն կատարյալների գործն է, ինչպես որ ասում է մարգարեն. **«Ինձ շատ ծաղրեցին, բայց ես Քո օրենքից չխոտորվեցի»** (Սաղ. 118.51): Եվ սա շատ մեծ առաքինություն է: Իսկ մենք մեծամասամբ ավելի ցածր ենք գտնվում սկսնակներից, երբ չենք ջանում հաղթահարել ինքներս մեզ և ստիպել լռել, երբ բարկությունը գլուխ է բարձրացնում, մեր ծուլության պատճառով համարում ենք, որ այս առաքինությունը շատ բարձր է և մեր համար անհասանելի: Նույնիսկ ցանկություն չենք ցուցաբերում, որպեսզի այս ջանքերի սկիզբը դնենք մեր համար, և դրանով մեր վրա դարձնենք Աստծո շնորհը, որպեսզի նրա օգնականությամբ կարողանանք հաղթական դուրս գալ այս պայքարից: Սակայն եթե նույնիսկ ցանկություն ենք ցուցաբերում, ապա ալարկոտությամբ և ոչ ամրապնդությամբ, դրա համար էլ միևնույն է, չենք արժանանում Աստծուց առաքված որևէ շնորհի:

17. Այս բոլորին Երանելին ավելացրեց. «Մեր կյանքի ընթացքն այսպես պետք է գնա, նախ՝ հարկ է, որ ամեն մեկը իր կողմից տվյալ աշխատանքի հանդեպ ներդնի հոժարակամության ջանք և միայն այդ պայմանով կարող է ակնկալել Աստծուց օգնականության շնորհը»: Ինչպես որ հողագործը, չնայած քիչ է ցանում, սակայն եթե Աստված օրհնում է նրա աշխատանքը, ապա նա առատ բերք է ստանում, ինչպես գրված է Իսահակի մասին. **«Իսահակը այդ երկրի մեջ ցանեց ու այդ տարին հարյուրապատիկ արդյունք քաղեց, քանզի Տերը օրհնեց նրան»** (Ծննդ. 26.12): Այսպես, եթե Տերը օրհնի մեր հոժարակամության ջանքերը, մենք ամեն ինչ կկատարենք առանց դժվարության, ոչ ստիպողաբար, այլ քաղցրությամբ, և այս ամենից մեծ հոգևոր շահ կունենանք: Ստիպողաբար և համբերատարությամբ կատարվող աղոթքը ծնում է առավել թեթև աղոթք՝ մաքուր և քաղցր: Եվ սա, որ արվում է ստիպողաբար, հոժարակամության արդյունք է, իսկ այն, որ արվում է քաղցրությամբ, դա արդեն արդյունք է շնորհի: Նույնը չե՞նք տեսնում, արդյոք, նրանց պարագայում, ովքեր ձեռնամուխ են լինում սովորելու մի որևէ արհեստ, թեկուզ և մեծ ջանասիրությամբ են սկսում իրենց ուսուցումը, սակայն սկիզբը գնում է դժվարությամբ, և հեշտությամբ չեն ամրացնում մի առարկան մյուսին և հաճախ փչացնում են, բայց չեն հիասթափվում, այլ նորից գործի են անցնում, չթողնելով ուսումը, ցույց տալով ուսուցչին հոժարակամության պնդությունը: Իսկ եթե հիասթափվեն և թողնեն ջանքերը, այդ դեպքում ոչնչի չեն հասնի, իսկ չնայած այն բանին, որ հաճախ փչացնում են, սակայն չեն թողնում ջանքերը, այլ համբերատարությամբ շարունակում են ջանալ և աշխատել, վերջ ի վերջո, Աստծո օգնությամբ, սովորում են արհեստը և սկսում են իրենց կատարած աշխատանքները փոքր քանակով արտադրել առանց տհաճության զգացումի, այլ մեծ հաճույքով և այնպիսի հաջողությամբ, որ այդ միջոցով ստացված գումարը բավարար է լինում նրանց՝ ամբողջ կարիքները հոգալու համար: Այսպես և հոգևոր կյանքի պարագայում, ով ցանկանում է առաջադիմել առաքինությունների մեջ, չպետք է մտածի, որ հենց նույն պահին կհասնի մեծ հաջողությունների, քանզի դա հնարավոր չէ, սակայն թող ջանա (խոսքի համեմատ, թե՝ **«Փնտրեք ու պիտի գտնեք, դուռը թակեք ու պիտի բացվի, խնդրեք ու պիտի տրվի»**): Չնայած որ սկզբնական շրջանում նրա գործերն այնքան էլ

հաջող չեն լինի, սակայն թող ետ չկանգնի սկսած գործից, ապա թե ոչ՝ չի հասնի հաջողության: Ուրեմն, թող նորից ու նորից ջանա, նման այն աշակերտին, որն ուզում է արհեստավոր դառնալ: Երբ նա համբերատարությամբ, ինչպես այդ արհեստ սովորողը, սկսի ջանալ՝ անհաջողություններից հիասթափություն չապրելով, Աստված էլ կնայի նրա ջանքերին և հոժարակամությանը և նրան զորություն կտա, որ ամեն ինչ կարողանա կատարել հեշտությամբ և հաջողությամբ: Եվ հենց սա է այն բանը, ինչի մասին ասում էր Աբբա Մովսեսը. «Հաջողության հասնելու նրանց համար, ովքեր ուզում են առաջադիմել առաքինությունների մեջ, այն է, որ նրանք փոքրոգություն չանեն, երբ պատահի, որ սայթաքեն, այլ նորից ցուցաբերեն նախանձախնդրություն և ջանան այդ նույն բանի համար»:

18. Ասաց նաև. «Ամեն մի առաքինության հասնելու համար հարկավոր է ջանք և ժամանակ, նաև այն ցանկանալ ի սրտե: Աստված էլ նման պարագայում մեզ աջակից կլինի, որը անհրաժեշտ պայման է, որպեսզի հասնենք հաջողության: Քանզի եթե Աստված չաջակցի մեր հոժարակամությանը, մեր ամբողջ ջանքերը իզուր կլինեն, ինչպես որ հողագործի աշխատանքները, որ փորում և ցանում է իր հողակտորը, բայց Աստված անձրև չի առաքում: Աստծո աջակցությանը արժանանալու համար պահանջվում է մեր աղոթքները և աղաչանքները, քանզի սրանով մենք միայն Աստծո օգնությունն ենք հայցում մեզ հովանավորելու համար: Եթե հեղգանանք աղոթքի մեջ, ապա Աստված ինչպե՞ս պիտի մեր ջանքերի համար խնամք տանի: Նույնը և, եթե աղոթենք, սակայն ծուլությամբ և ցրվածությամբ, կամ ձանձրանալով շուտով հեռանանք աղոթքից, ոչինչ էլ չենք ստանա, ինչպես որ ես միշտ ասում եմ ձեզ, որ Աստված նայում է մեր հոժարակամությանը և դատելով դրանից, տալիս է շնորհներ: Մի՞թե Աբբա Մովսեսը ժամանակին ավազակապետ չէր: Չէ՞ր գործել այնպիսի բազում հանցանքներ, որ նա այդ չարագործությունների պատճառով խույս տար իր Տիրոջից: Բայց քանի որ նա անվեհերորեն և այնպիսի ջերմ հոժարակամությամբ գործի անցավ, որի արդյունքում հասավ մեծ բարձունքների, այնպես որ դասվեց Աստծո ընտրյալների հետ, ինչպես որ ասում է նրա վարքագիրը: Իսկ մենք, չնայած աշխարհից հրաժարվելու պահին ցուցաբերում ենք ջերմեռանդություն, սակայն ժամանակի հետ, մեր հեղգության

պատճառով կորցնում ենք այն և հակվում հոգին սառեցնող, փուչ և ոչինչ չարժեցող բաների, սրանք փոխանակելով Աստծո և մերձավորի հանդեպ սիրո հետ: Ասենք նաև, որ եթե գործում էլ ենք որևէ բարի բան, այն վերագրում ենք մեզ, կարծես թե մեր ուժերով այդ բանը արեցինք, այլ ոչ թե Աստուց ստացանք, այն դեպքում, երբ ճշմարտությունը ասում է. **«Ի՞նչ բան ունես, որ ստացած չլինես և եթե ստացել ես, ինչո՞ւ ես պարծենում չստացողի պես»** (Ա Կորնթ. 4.7):

19. Ասում էր նաև. «Չի աղքատացել Տեր Հիսուսը և չի տկարացել, որպեսզի շնորհի և մեզ այնպիսի շնորհներ, որոնցով լիացրեց նա մեր սուրբ նահապետներին, եթե տեսներ, որ մենք մեր օգտի և Իր փառքի համար ենք ծառայեցնում այնքանը, որը Նա արդեն իսկ շնորհել է մեզ: Սակայն երբ տեսնում է, որ մենք մեր անկարգավորվածության պատճառով ի վնաս մեզ ենք դարձնում Իր կողմից արդեն իսկ մեզ տրված ոչ մեծ և ոչ շատ շնորհները, այդժամ որպես մարդասեր, մեզ ավելի մեծերը չի շնորհում, որպեսզի վերջում մենք կորստի չմատնվենք: Եթե Նա տեսներ, որ մենք մեր օգտի համար ենք գործածում արդեն իսկ տրված քիչը, դե իհարկե, անզոր չէր, որպեսզի մեզ շնորհեր նաև ավելի մեծը, ինչպես որ ես արդեն ասացի սկզբում: Աստված, ինչպես որ ես միշտ ասում եմ, լինելով բարեգութ, մեզ ազատություն է տվել և հնարավորություն, ամեն ինչից օգուտ ստանալու համար, իսկ մենք մոլությունների և ի չար գործածելու պատճառով կորստի ենք մատնում և զրկում մեզ՝ Աստծո տրված շնորհներից: Շնորհները մեզ համար մեծ բարիք են, սակայն մեր չարամտության և չար բարքի պատճառով մեզ համար դարձնում ենք վնասակար»:

20. Հաճախակի ասում էր նաև Երանելին. «Ոչ ոք չի կարող վնաս հասցնել հավատարիմ հոգուն, քանզի ինչ վնասակար բան որ գալիս է նրա վրա, այդ բանը նրա համար վերափոխվում է բարիքի: Աշխատողը, չնայած որ ծանրաբեռնված է լինում գործերով, սակայն բարեհոգաբար շարունակում է իր քրտնաջան աշխատանքները, համոզված լինելով, որ աշխատանքի ավարտին կստանա իր վարձքը: Իսկ անհավատարիմը, հանդիպելով որևէ դժվարության, տանջվում է ինչպես դժոխքում, իր անհավատարմության պատճառով:

Հավատարիմն իր բոլոր դժվարությունների մեջ, հաստատուն կանգնելով, վստահությամբ սպասում է այն վարձքին, որ պիտի ստանա իր

համբերության համար, որի ակնկալիքով և մեծ մխիթարություն է ստանում դժվարությունների մեջ: Իսկ անհավատարիմը, որ չունի հավատք, Տիրոջից որևէ բան ստանալու, ի՞նչ մխիթարություն կարող է ունենալ: Նստում է նա և տրվում չար խորհուրդների, հենց որ մի փոքր վշտալից բանի է հանդիպում, ինքն իրեն սկսում է խոսել. «Նա ինձ այսպես ասաց, սակայն ես էլ շատ բաներ ունեմ իրեն ասելու», -և ընկնելով հիշաչարության մեջ, սկսում է խորհել անիրականանալի բաների մասին, որը նա ընդհանրապես իրականացնելու կարողություն չունի: Քանզի ամեն ինչ չէ, որ մարդիկ մտածում են, կարող են արդեն իսկ իրականացնել գործով: Ոչ, այլ միայն այն, ինչը թույլատրվում է Աստծո կողմից, քանզի միայն նա է տնօրինում վիճակների վրա: Հաճախ մեկը խորհում է մի որևէ վնաս հասցնել մեկ ուրիշին, սակայն եթե Աստված թույլ չտա այդ բանը, նրա բոլոր ջանքերը ապարդյուն են լինում: Ինչքան չարիք խորհեցին սուրբ նահապետների հանդեպ, սակայն Աստված թույլ չտվեց, որպեսզի այդ բաները տեղի ունենային, դրա համար էլ ոչ ոք և ոչ մի վնաս չկարողացավ նրանց հասցնել, ինչպես որ գրված է. **«Իմ օծյալներիս մի դիպչեք, ու Իմ մարգարեներիս չարություն մի արեք»** (Ա Մնացորդ. 16.22): Երբ Աստված ցույց է տալիս Իր անսպառ զորությունը, այն ժամ ամենադաժան սրտերն էլ դառնում են ողորմած, ինչպես որ գրված է Դանիելի Գրքում. «Աստված ներքնապետի առջև շնորհք ու գթասրտություն գտնել տվեց Դանիելին» (Դան. 1:9): Երանելի է այն հոգին, որ ծարավի լինելով Աստծու հանդեպ, իրապես պատրաստում է իր անձը՝ ընդունելու Նրա շնորհները, որովհետև Տերը ոչ մի բանում չի թողնում այդպիսի հոգուն, այլ ամեն ինչում հովանավորում է նրան, նույնիսկ այն բաներում, որի մասին նա գլխի չընկնելով, չի խնդրում: Լավ է ասել Իմաստունը. «Իմաստուն այրը բնակվում է Աստծո հովանու տակ»:

Քանի անգամ Սավուղը մահափորձ արեց՝ երանելի Դավթին սպանելու համար: Ինչ էլ որ արեց, ինչ խորամանկության էլ որ դիմեց, սակայն Սավուղի բոլոր խորհուրդները ընդունայն եղան, քանզի Դավթին Տերն էր պահպանում, և ոչ միայն այդ, այլև շատ հաճախ հենց Սավուղն ինքը տրվում էր Սրբի ձեռքը, որը սակայն խնայեց նրան՝ չունենալով նրա հանդեպ բորբոքուն և վրեժխնդիր չարություն:

21. Մի անգամ հարցրին Աբբային. «Ինչպե՞ս կարելի է հասնել այն բանին, որ չբարկանան, երբ անարգում են և չարախոսում»: Նա

պատասխանեց. «Ով որ իր սրտում իրեն ոչնչություն է համարում, նա ոչ մի անարգանքի պատճառով չի խռովվում», ինչպես որ ասել է Աբբա Պիմենը. «Եթե նվաստացնես ինքդ քեզ, այդ ժամ էլ հանգիստ կվայելես»:

22. Դարձյալ ասաց Աբբան. «Ինձ հետ ապրող եղբայրներից մեկը, որը ինձանից սքեմ էր ստացել, որին և ես ջանացի սովորեցնել ամեն տեսակի առաքինություններ, և որի հանդեպ երբեմն զիջողաբար էի վերաբերվում իր տկարությունների պատճառով, քանի որ նա շատ նուրբ մարմնակազմ ուներ, մի օր ասաց ինձ. «Ո՜վ իմ Աբբա, ես շատ եմ սիրում քեզ»: Ես պատասխանեցի նրան. «Ես դեռ չեմ հանդիպել այնպիսի մեկին, որը ինձ սիրի այնպես, ինչպես որ ես եմ սիրում Նրան: Ահա այժմ դու ասում ես, որ սիրում ես ինձ, և ես հավատում եմ քեզ, սակայն եթե այնպես պատահի, որ դու ինձանից մի որևէ անախորժության արժանանաս, չես մնա այդ նույն զգացմունքների վրա: Իսկ ես, ինչ բան էլ որ կրեմ քո կողմից, միշտ էլ քո հանդեպ կմնամ նույն տրամադրվածությամբ, և ոչինչ չի կարող ինձ հեռացնել քո հանդեպ ունեցած սիրուց»: Այնքան էլ շատ ժամանակ չէր անցել այս խոսակցությունից, չգիտեմ թե ինչ տեղի ունեցավ նրա հետ, և նա սկսեց իմ մասին խոսել ամեն տեսակի բաներ, մինչև իսկ ամոթալի ու խայտառակ բաներ, և ես այս ամենի մասին տեղեկանում էի: Այնժամ ես ինքս ինձ ասացի. «Նա Հիսուսի բժշկարար գործիքն է, որ ուղարկված է, որ այրման միջոցով բժշկի իմ փառամոլ հոգին: Նման բաներ տարածողների միջոցով նորից կարելի է ձեռք բերել այն, ինչ որ կորցնում ենք մեզ սիրաշահողների կողմից: Նա է իմ ճշմարիտ բարեկամը»: Եվ ես նրան միշտ հիշում էի որպես բժշկի և իմ բարեկամի: Իսկ նրանց, որոնք ինձ տեղեկացնում էին նրա չարախոսությունների մասին, ասում էի. «Նա գիտի միայն իմ հայտնապես երևացող վատթարությունները, այն էլ, ոչ բոլորը, այլ միայն մի մասը, իսկ իմ ծածուկ թերությունները անթիվ-անհամար են»: Միառժամանակ անց նա հանդիպեց ինձ Պաղեստինյան Կեսարիայում, մոտենալով ինձ, ըստ սովորության, գրկեց և համբուրեց և ես էլ նրան, այնպես, կարծես թե մեր միջև ոչ մի արտասովոր բան էլ չէր եղել: Նման չարախոսություններից հետո, հանդիպելով ինձ, նա այսպես գրկախառնվեց ինձ հետ, անկասկած այն բանի պատճառով, որ ես ոչ մի կասկածելի բան և վշտացած լինելու և ոչ մի նշան չցուցաբերեցի, չնայած որ ամեն բանի էլ տեղյակ էի: Սակայն նա ինքն ընկավ իմ ոտքերը և

գրկելով նրանց, ասաց. «Ների՛ր ինձ, հա՛յր իմ, ի սեր Աստծո, քանի որ ես քո մասին բազում չարախոսություններ եմ արել»: Իսկ ես համբուրելով նրան, սիրալիրությամբ ասացի. «Հիշո՞ւմ է, արդյոք, աստվածսիրությունդ, թե երբ դու ասացիր ինձ «շատ եմ սիրում քեզ», ես պատասխանեցի, որ դեռ չեմ հանդիպել մի մարդու, որ ինձ սիրի այնպես, ինչպես որ ես եմ սիրում իրեն, և եթե քեզ հետ որևէ անախորժ բան պատահի, դու այդ դիրքի վրա չես մնա, իսկ ես ինչ վնասներ էլ որ կրեմ քո կողմից, միշտ նույն ձևով կվերաբերվեմ քեզ, ու ոչինչ չի կարող հեռացնել ինձ քո հանդեպ ունեցած սիրուց»: Եվ թող համոզված լինի քո սիրտը, որ ինձանից ոչինչ թաքուն չի մնացել այն ամենից, որ դու ասել ես, և թե որտեղ և ում ես ասել: Բոլորն էլ լսել եմ և երբեք չեմ ասել, որ դրանք այդպես չեն, և ոչ ոք չկարողացավ ինձ համոզել, որպեսզի ինչ որ վատ բան ասեմ քո հասցեին, և ավելին, ես դեռ ասացի նրանց, որ ինչ որ նա ասում է, դա զուտ ճշմարտություն է, և որ դու այդ անում ես իմ հանդեպ ունեցած սիրուց, և քեզ համարելով իմ սիրելին, աղոթքներումս երբեք չեմ մոռացել քեզ: Եվ որպեսզի քեզ ավելին վկայեմ, քո հանդեպ ունեցած իմ սիրո մասին, մի բան էլ ավելացնեմ. մի ժամանակ շատ ծանր հիվանդացավ աչքս, և ես հիշեցի քեզ, Սուրբ Խաչի նշանը դնելով աչքիս ասացի. «Տե՛ր Հիսուս Քրիստոս, հանուն նրա աղոթքների բժշկիր ինձ: Եվ նույն պահին իսկ բժշկվեցի»:

23. Շատ հաճախ ասում էր նաև Երանելին. «Չգիտենք մենք՝ մարդիկս, թե ինչպես անել, որպեսզի մեզ սիրեն ու հարգեն, ցավոք մեր ապրելակերպը կորցրել է ամեն մի իմաստ:

Եթե մեկը մի փոքր համբերատարություն ցուցաբերի եղբոր հանդեպ, երբ նա բարկացած է, կամ մի այլ կերպով վիշտ է պատճառում մեզ, այն ժամ նա շուտով կսթափվի և հասկանալով, թե ինչ համբերատարությամբ է դիմացինը կրել իր կողմից հասցված վշտերը, այդ ժամ իր անձն էլ կդնի նրա համար»: Եվ մի օրինակ բերեց Երանելին մի եղբոր մասին, որը պատմել է իրեն իր Աբբայի մասին, որին մեծ առաքինությունների և իր կողմից կատարվող հրաշագործությունների պատճառով ամբողջ երկրով մեծարում էին ինչպես Աստծո հրեշտակի: Մի օր այս եղբայրը, թշնամուց մղված մոտենում է ծերին և սկսում մինչև վերջին խոսքերն իսկ ասելով, չարախոսել նրան՝ բոլորի ներկայությամբ: Իսկ ծերը հանդարտ կանգնելով բոլորի ներկայությամբ, նայելով նրան, ասում է.

«Աստծո շնորհներն են քո բերանին, եղբայր իմ»: Իսկ նա ավելի բորբոքվելով, գոռում է՝ ասելով. «Ես գիտեմ, դու այդ ասում ես, անմիտ և որովայնամոլ ծերուկ, այն բանի համար, որ քեզ այնպես ցույց տաս, իբր թե հեզ ես»: Ծերը պատասխանում է այդ բանին այսպես. «Ճշմարիտ որ այդպես է, եղբայր իմ, ինչ որ ասում ես՝ արդարացի է»: Այս ամենից հետո մեկը հարցրեց ծերին. «Մի՞թե այս բոլորը քեզ խռովքի չմատնեցին, ով այր Աստծո»: «Ոչ, -պատասխանեց նա, -սակայն զգում էի, որ հոգիս կարծես թե պահպանված էր Քրիստոսով»:

Այս պատմությանը Երանելին ավելացրեց. «Արդարացիորեն հարկ է շնորհակալ լինել այդպիսիներին և մեծարել նրանց: Եթե մեկը բռնված է կրքերով, նրանք որպես բժիշկ, ապաքինում են հոգու վերքերը, իսկ ով մաքուր է կրքերից, սրանք այսպիսիների համար բարեգործներ են, որ նրանց հասցնում են Երկնքի Արքայություն»:

24. Էլի ասաց Երանելին. «Երբ ես գտնվում էի Տիրի վանքում, մինչ իմ այստեղից տեղափոխվելը, մեզ մոտ եկավ իր առաքինի գործերով հայտնի մի ծեր: Եվ մենք սկսեցինք կարդալ գիրքը հիշարժան պատմվածքների և իմաստնագույն խոսքերի, որ գրել են սուրբ ծերերը, քանզի Երանելին սիրում էր վերընթերցել այն և կարծես թե շնչում էր դրանցով և նրանցից քաղում էր սովորելու համար ամեն տեսակի բարիք: Երբ հասանք այն պատմությանը ծերի մասին, որի մոտ, երբ եկան ավազակները և ասացին, որ այն ամենը, ինչ որ կա խցում, պիտի վերցնենք, նա հանդարտ ասաց. «Վերցրեք, զավակներս, ինչ որ տեսնեք», և երբ նրանք ամեն ինչ վերցրին և գնացին, աչքաթող անելով մի պայուսակը, ծերը վերցրեց այն և վազելով նրանց ետևից, ասաց. «Տղաներ, սա որ մոռացել էիք մեր խցում, վերցրեք իմ կողմից»: Նրանք ապշելով ծերի անհիշաչարության վրա, ամեն ինչ ետ բերեցին խուցը, և զղջալով ասացին մեկմեկու. «Ճշմարտապես, որ Աստծո այր է»: Եվ երբ մենք կարդացինք այս, ծերը ասաց ինձ. «Գիտես, ո՞վ իմ Աբբա, այս պատմությունը ինձ շատ մեծ օգուտ տվեց»: «Այդ ինչպե՞ս, հայր», -հարցրեցի ես: Նա պատասխանեց. «Մի ժամանակ, երբ ես գտնվում էի Հորդանանի մերձակայքում, կարդալով այս, սքանչացա այս ծերով և ասացի. «Տեր, ինձ էլ արժանացրու քայլել նրանց ոտնահետքերով, որոնց դասին (սքեմավորների) միանալու Դու ինձ արժանացրիր»: Այս ցանկությունը միշտ վառ էր իմ մոտ: Եվ ահա երկու օր անց, ավազակ-

ները մոտեցան և ծեծեցին դուռը: Ես իսկույն հասկացա, որ սրանք ավազակներ են և ինքս իմ մեջ գոհացա Աստծուց և ասացի՝ ահա ժամը, որ ցուցաբերեմ բաղձանքիս պտուղը: Հետո բացեցի դուռը և նրանց ընդունեցի ուրախ սրտով և վառելով լամպը, սկսեցի ցույց տալ իմ ունեցվածքը, ասելով նրանց. «Մի անհանգստացեք, քանզի ինչպես որ հավատում եմ Տիրոջը, այնպես էլ ոչինչ չեմ թաքցնի ձեզանից»: Նրանք ասացին. «Ոսկի կա՞ քեզ մոտ»: «Կա, -պատասխանեցի ես, -ահա երեք ոսկեդրամ», և նրանց առջև բացեցի տուփը: Նրանք վերցրեցին և խաղաղությամբ գնացին: Իսկ ես, -ասաց Աբբա Զոսիմոսը -ժպտալով հարցրեցի երանելիին. «Իսկ նրանք ետ դարձա՞ն քեզ մոտ, ինչպես որ այն ծերի մոտ»: «Աստված չաներ, -միանգամից պատասխանեց նա, -իմ մտքում իսկ չկար նրանց ետ գալու մասին մտածում»: Սրան Աբբան ավելացրեց՝ ասելով,- ահա թե ինչպիսին էր ծերի նախանձախնդրությունը, և տեսեք, թե ինչի արժանացրեց նրան սուրբերին նմանվելու ձգտումը, նա ոչ միայն չվշտացավ, այլ նույնիսկ ուրախացավ, կարծես թե արժանացել էր մի մեծ բարիքի:

25. -Երբ ես սրանից առաջ դեռ զրուցում էի ձեր հետ, -ասաց երանելին, -ասացի, որ եթե մի փոքր համբերատար գտնվենք մեր եղբոր հանդեպ, երբ նա բարկության մեջ է, ապա կշահենք նրա հոգին: Այս բանի հետ կապված ուզում եմ պատմել մի եղելություն, որը լսել եմ երանելի Սարգսից, որը Պեդիադիայի վանահայրն էր: Նա ասաց ինձ. «Մի անգամ մենք ճանապարհ էինք ընկել մի սուրբ ծերի հետ և մոլորվեցինք՝ կորցնելով ճանապարհը: Եվ չգիտեինք, թե որ կողմ գնանք, ու ընկանք մի ցանված արտի մեջ և մի փոքր տեղ հողը տրորեցինք: Այս տեսնելով հողագործը, որը այդ պահին աշխատում էր այդտեղ, բարկությամբ, գոռգոռալով սկսեց մեզ վիրավորանքներ հասցնել՝ ասելով. «Մի՞թե դուք վանականներ եք, դուք վախ ունե՞ք Աստծուց, եթե դուք Աստծո վախը ձեր աչքերի առջև ունենայիք, այս բանը չէիք անի»: Այն սուրբ ծերը նույն պահին ասաց. «Ի սեր Աստծո, ոչ ոք թող չխոսի, -և դառնալով հողագործին հեզությամբ դիմեց այսպիսի խոսքերով, -Ճշմարիտ ես ասում, զավակս, իսկապես որ, եթե մենք ունենայինք Աստծո վախը, այս բանը չէինք անի»: Սա նորից բարկությամբ սկսեց կոպտել: Իսկ ծերը նորից ասաց նրան. «Ճշմարիտ ես ասում, որ եթե մենք վանականներ լինեինք, այս բանը չէինք անի: Սակայն ի սեր Աստծո, ներիր մեզ, ընդունում ենք,

որ մեղանչեցինք քո հանդեպ»: Այս բանը այնպիսի ազդեցություն թողեց հողագործի վրա, որ սա ապշեց և մոտենալով ընկավ ծերի ոտքերը և ասաց. «Դու ներիր ինձ ի սեր Աստծո, ո՜վ հայր, և ինձ էլ վերցրու քեզ հետ»: Եվ իսկապես, նա եկավ մեր ետևից, -ասաց երանելի Սարգիսը, -և գալով վանք, սքեմ ընդունեց»: «Ահա թե ինչ կարողացան անել Աստծո օգնությամբ սուրբ ծերի հեզությունը և բարությունը, -ավելացրեց Աբբա Զոսիմոսը, -Աստծո նմանությամբ ստեղծված հոգուն, որը ցանկալի է Աստծուն ավելի, քան անհամար աշխարհները իրենց հարստություններով հանդերձ»:

26. Ասաց էլի Աբբա Զոսիմոսը. «Մի անգամ, երբ ես գտնվում էի Երանելի Սարգսի մոտ, նա ինձ ասաց. «Կարդա որևէ բան Սուրբ Գրքից»: Ես սկսեցի կարդալ և երբ հասա այն տեղը, որտեղ ասվում է. **«Առանց փայտի կրակը կմարի և եթե քսու չլինի, կռիվը կդադարի»** (Առակ. 26.20), ասացի նրան. «Ինչպե՞ս կարելի է հասկանալ այդ համարը»:

Նա իմ հարցին այսպես պատասխանեց. «Ինչպես որ նյութական փայտը պատճառ է, որ կրակը չմարի և եթե այն չհերիքի, կրակը շուտով կհանգչի, այնպես էլ և կրքերը ունեն իրենց բորբոքվելու պատճառները, և եթե մեկը կտրի այս պատճառները, կրքերը կմնան անշարժ: Այսինքն շնության բուն պատճառը, ինչպես որ ասաց Աբբա Մովսեսը, «անժուժկալ ուտելու և խմելու, նաև երկար քնի, անգործ նստելու, դատարկախոսության, զվարճանքների, նաև զարդարվելու հանդեպ ունեցած սիրո մեջ է»: Եթե մեկն այս բոլորը կտրի և հեռացնի իրենից, վավաշոտության կիրքը զորություն չի ունենա: Նաև բարկության բուն պատճառները, ինչպես որ նա ասաց, սա է. «տալ ու առնելը (եռանդուն գործարքներ կատարելը), սեփական կամքի կատարելը, սովորեցնել սիրելու հակումը, ինքդ քեզ խելոք համարելը»: Ով անդամահատի այս ամենը, նրա մոտ բարկության մոլուցքը կանզորանա: Այսպես և հարկ է վերաբերվել մյուս կրքերի հանդեպ: Ե՛վ հենց սա է նշանակում Աբբա Սիսոյի խոսքը, որը ասաց, երբ եղբայրը հարցրեց նրան. «Ի՞նչն է պատճառը, որ կրքերը չեն հեռանում ինձանից»: Այսպես պատասխանեց նրան ծերը. «Որովհետև նրանց անոթները՝ այսինքն պատճառները, քո մեջ են, տուր դրանք որպես գրավ, և նրանք կհեռանան քեզանից»:

27. Մի այլ անգամ էլ ասաց. «Երկակի բարկացկոտը նա է, ում մեջ չի դադարում պայքարը, նա է, որ չբավարարվելով առաջին բարկությամբ,

ինքն իրեն բորբոքում է՝ տանելով երկրորդ բարկության: Ով բռնկվելով բարկությամբ, նույն պահին սթափվի և ճանաչի իր հանցանքը, և ներում խնդրի իր եղբորից, ում վրա որ բարկացել է, այդպիսինը չի համարվում երկակի բարկացկոտ: Նրանում պատերազմը սկսում է հանգչել, որովհետև, հենց որ նա ճանաչեց իր հանցանքը, հաշտվելով եղբոր հետ, նրանում պատերազմի համար էլ տեղ չի գտնվում: Իսկ նա, ով բարկության մեջ ընկնելով, իր հանցանքը չի ընդունում, այլ էլ առավել է բորբոքում իր մեջ բարկությունը և չի զղջում այդ բանի համար, որ բարկացել է, այլ զղջում է, որ առավել վատթար բաներ չի ասել, նրանցից բացի, ինչ որ ասել էր իր բորբոքված ժամանակ, այսպիսինը անվանվում է կրկնաբարկացկոտ: Սրանում պայքարը չի մարում, որովհետև բարկությունից հետո նրան իր իշխանության տակ է գցում հիշաչարությունը, քենը և անբարյացկամությունը: Տեր Հիսուս Քրիստոսը թող մեզ ազատի այսպիսիների շարքում գտնվելուց և արժանացնի հեզերի և խոնարհների հետ դասվել»:

28. Հաճախ նա ասում էր նաև, որ մեծ ուշադրություն և ոչ պակաս իմաստնություն է հարկավոր սատանայի չար որոգայթներին դիմակայելու համար: Քանզի պատահում է, որ սա ոչնչից առաջացնում է խռովք և դժգոհություն, ներշնչելով այնպիսի մտքեր, որ թվա, թե բարկանալը նման պարագայում արդարացի է և դրա համար կա հիմնավոր պատճառներ: Սակայն ինչ էլ որ սա ներշնչի, թող գիտենա նա, ով ցանկանում է ճշմարտապես քայլել սուրբ վանականների ուղիով, որ ոչ մի զայրույթ, ինչպես էլ որ նա մեզ արդարացի թվա, այդ բանը իրեն պիտի թույլ չտա, ինչպես որ ասում էր Հայր Մակարը. «Վանականին հարկ չէ բարկանալ, և էլի՝ «Չպետք է վշտացնել մերձավորին»: Որպես լրացում այս ամենին, երանելին պատմեց հետևյալը. «Մի անգամ ես պատվիրեցի մի հմուտ գրչի, որ իմ համար արտագրի մի քանի գրքեր: Վերջացնելով աշխատանքը, նա լուր ուղարկեց ինձ՝ ասելով. «Ես վերջացրեցի, ուղարկիր պայմանավորված գինը և վերցրու գրքերը»: Մի եղբայր լսելով պայմանավորվածության մասին, գալիս է այս գրչի մոտ և իմ անունից տալով նրան պայմանավորված գումարի չափով, վերցնում է գրքերը: Այդ ընթացքում ես չիմանալով կատարվածի մասին, ուղարկեցի մի եղբոր, նամակով և գումարով, որպեսզի բերի գրքերը: Գրիչը հասկանալով, որ խաբվել է գրքերը տանող եղբոր կողմից, խիստ

վրդովվելով ասաց. «Անպայման կգնամ և նրա հախից կգամ, գրքերի, նաև այն բանի համար, որ ինձ ծաղրի է ենթարկել»: Իսկ ես լսելով այդ մասին, նորից լուր ուղարկեցի նրան, ասելով. «Իհարկե, դա քո գործն է, եղբայր իմ, սակայն ի՞նչ է դուրս գալիս, մենք գրքեր ենք ձեռք բերում, որպեսզի նրանց միջոցով սովորենք սիրել, նաև խոնարհություն և հեզություն, իսկ եթե գիրք ձեռք բերելու հենց սկիզբը պիտի տանի վեճերի, այդ դեպքում չեմ էլ ուզում նրանք ունենալ, որպեսզի հեռու մնամ վեճերից: **«Այսպես, ուրեմն, Տիրոջ ծառան պետք չէ, որ կռիվ անի»** (Բ Տիմ. 2. 24): Նման ձևով հրաժարվելով գրքերից, ես անպես արեցի, որ այն եղբորը չհասցվեր կանխամտածված սրտմտություն»:

29. Մի անգամ նստելով մեզ հետ և զրուցելով հոգեշահ բաների շուրջ, երանելին սկսեց մեջ բերել սբ. ծերերի խոսքերից, հատկապես այն, որ ասվել է Աբբա Պիմենի կողմից. «Ինքն իրեն դատապարտողն ամենուր հանգիստ է գտնում», նաև Նիտրա լեռան Աբբայի պատասխանը այն հարցին, թե «Դու առավել ի՞նչ բան շահեցիր այս ճանապարհին, հայր», «Մեղադրել և հանդիմանել ինձ մշտապես, -պատասխանեց նա և ավելացրեց, -չկա այլ ճանապարհ սրանից բացի»:

Հիշելով այս խոսքերը, երանելին ասաց. «Մեծ զորություն ունեն ծերերի ասույթները, քանզի ինչ որ նրանք ասել են, իրականում ասել են փորձառությունից և ճշմարտությունից, ինչպես որ վկայում է այս մասին աստվածային Անտոնը: Այս բանից էլ նրանց խոսքերը մեծ զորություն ունեն, քանզի այդ խորհուրդները ապրված են, ինչի մասին և ասում է իմաստուններից մեկը՝ «Քո խոսքերը թող հաստատի քո կյանքը»: Այս բանին որպես հաստատում, Աբբան մեզ պատմեց հետևյալ դեպքը. «Երբ ես դեռ որոշ ժամանակ մնում էի Աբբա Գերասիմոսի Մայրավանքում, իմ համար մի շատ սիրելի եղբոր հետ նստել և զրուցում էինք հոգեշահ բաների մասին: Ես հիշեցի վերը ասված Աբբա Պիմենի և այն մյուս Նիտրայի լեռան ծերի (Աբբա Ամմոնի) խոսքերը: Այս լսելով եղբայրն ինձ ասաց. «Ես փորձով ճանաչեցի ճշմարտացիությունը այս խոսքերի, և ճաշակեցի հանգիստ, որին արժանացրեց ինձ այս ասույթների իրագործումը: Ապրում էի ես այս Մայրավանքի սարկավագի հետ անկեղծ բարեկամությամբ: Չգիտեմ, թե ինչ պատճառով, նա իմ հանդեպ ինչ-որ կասկածներ ունեցավ մի հարցի հետ կապված, և վիրավորվելով այս բանից, սկսեց իմ հանդեպ սառը վերաբերմունք ցուցաբերել: Նկատելով

այդ սառնությունը, ես խնդրեցի, որ նա ինձ բացատրի դրա պատճառը, և նա ինձ ասաց. «Դու այս ու այն բաներն ես արել»: Բայց քանի որ ես նման ոչ մի բան չէի գործել, սկսեցի նրան ապացուցել իմ անմեղությունն այդ բանում: Սակայն նա ասաց. «Ներիր, չեմ համոզվում»:

Եվ գնալով իմ խուցը, ես սկսեցի քննել սիրտս, թե իսկապե՞ս այդպիսի բան եմ արել, և չգտա նման ոչ մի բան: Սրանից հետո այնպես ստացվեց, որ նա սկիհը ձեռքում իմ դեմ եկավ, ես էլ որպես իմ խոսքերի հաստատում, սկիհի առջև ասացի, որ չեմ մտաբերում, որ ես նման բան արած լինեմ, սակայն նրան այդ էլ չհամոզեց:

Այդ ժամ նորից մտնելով խուցս, ես հիշեցի այս ծերերի խոսքերը և կատարյալ հավատով սրանց ճշմարտացիության վրա, սկսեցի ինքս իմ մեջ խորհել և ասացի. «Սարկավագը անկեղծորեն սիրում է ինձ և այս սիրուց մղված, ինձ հայտնեց այն, ինչ իմ նկատմամբ ունի իր սրտում, որպեսզի ես սթափությամբ կենցաղավարեմ, որպեսզի չլինի թե, իսկապես նման բան անեմ: Սակայն անձ իմ թշվառ, ինչպե՞ս ես ասում, որ նման բան չես արել: Հազարավոր չար գործեր է արվել քո կողմից, և դու մոռացել ես դրանց մասին: Ի՞նչ եղան այն բաները, որ կատարվել են քո կողմից երեկ, կամ տաս օր առաջ: Հիշո՞ւմ ես, արդյոք, դու այդ մասին: Եվ այսպես, միգուցե դու իսկապես արե՞լ ես այն, ինչ որ ասում է սարկավագը, ուղղակի մոռացել ես, ինչպես որ մոռացել ես երեկվա քո գործած մեղքերը: Նման ձևով ես դրեցի սրտիս մեջ այն, որ ես իսկապես այդ բաները արել եմ, և քանի որ մոռացել եմ առաջվանները, նման ձևով և մոռացել եմ սա: Եվ սկսեցի գոհանալ Տիրոջից և սարկավագից, որ նրա միջոցով Տերը արժանացրեց ճանաչել իմ մեղքը և ապաշխարել այդ բանի համար: Հետո վեր կացա և նման մտածմունքներով գնացի եղբոր մոտ, որպեսզի խոստովանեմ նրան: Սակայն ես դեռ նոր-նոր ծեծեցի նրա դուռը, նա իսկույն բացեց և առաջինը իմ առջև խոնարհվեց, ասելով. «Ներիր ինձ, ես խաբվել եմ դևերի կողմից, և կասկածել քեզ այն բանի մեջ, որ դու չես արել, քանզի Աստված ճշմարտապես ինձ ցույց տվեց, որ դու անմեղ ես այդ բանում»: Եվ էլ թույլ չտալով ինձ իրեն հակառակը համոզել, ասաց. «Դրա կարիքը էլ չկա»:

Պատմելով այս, Երանելի Զոսիմոսը ավելացրեց. «Ահա թե անկեղծ խոստովանությունը ինչպիսի տրամադրվածության ուղղեց եղբոր սիրտը, քանզի նա ոչ միայն չխռովվեց սարկավագի արարքով և չվիրավորվեց նրանից, նախ այն բանի համար, որ նա կասկածել է իրեն, երկրորդ, որ չհավատաց իր անմեղությունը ապացուցելու փորձերին, այլև իր վրա վերցրեց չգործած մեղքերը, և ոչ միայն դա, այլև շնորհակալ եղավ սարկավագից:

Տեսնո՞ւմ եք, թե ինչ է անում այս առաքինությունը: Ինչ բարձունքներ է հասցնում իրեն սիրողներին: Քանզի եթե եղբայրը ցանկանար, ապա հազարավոր պատճառներ կարող էր գտնել, որպեսզի սարկավագի պատճառով վերածվեր դևի: Բայց քանզի նա ձգտում էր առաքինության, դրա համար էլ ոչ միայն չվիրավորվեց նրանից, այլև գոհացավ, քանզի առաքինությունը պարուրել էր նրա սիրտը: Այնպես որ, եթե մենք էլ նախօրոք սերմանենք մեր մեջ հեզության և խոնարհության սերմերը և մեր սրտերը տրամադրենք սրանց, այն ժամ թշնամին էլ տեղ չէր գտնի նրանում իր չար սերմերը ցանելու համար: Բայց քանի որ նա մեզ գտնում է դատարկ, առանց բարի խորհուրդների, և դրանից վատթարը, երբ մենք ինքներս մեր մեջ բորբոքում ենք չար մտածումների բոցը, հենց այստեղից էլ նա պատճառ է գտնում, որպեսզի մեզ լեցուցացնի իր չարիքներով: Իսկ առաքինությունների հանդեպ սեր ունենալու դեպքում, տեղի է ունենում լրիվ սրան հակառակը, քանզի այն ժամ, երբ Տերը տեսնում է, թե ինչպես է անձն ուզում փրկվել, և ինչպիսի ջանասիրությամբ է մշակում բարի սերմերը, և հանուն այս բարի տրամադրվածության, լցնում է նրան Իր շնորհներով:

30. Մի անգամ երանելի Աբբան հիշեց մի ծերի մասին, որից իր հարևանությամբ ապրող մի եղբայր գողանում էր: Ծերն այս իմանալով, երբեք ցույց չէր տալիս, որ գիտի այդ մասին, այլ ավելի ջանասիրաբար էր աշխատում, ասելով. «Միգուցե եղբայրը կարիքի մեջ է»: Եվ սքանչանալով սուրբերի բարեգործության վրա, պատմեց հետևյալ դեպքը. «Երբ ես դեռ գտնվում էի Պեդիադիայում, ահա թե ինչ պատմեց ինձ տեղի վանահայրը. «Մեր վանքի մերձակայքում բնակվում էր մի ծեր, որ բարյացկամ հոգու տեր մեկն էր: Նրա հարևանությամբ ապրող եղբայրը մի անգամ ծերի բացակայության ժամանակ թշնամական փորձությամբ մղված, բացում է նրա խուցը, մտնում ներս և տանում է նրա իրերը և գրքերը: Երբ ծերը վերադառնալով մտնում է խուցը և տեսնում եղածը, գնում է այդ եղբոր մոտ, որպեսզի նրան պատմի այդ մասին: Սակայն մտնելով նրա խուցը, տեսնում է իր իրերը այնտեղ լցված, քանի որ

եղբայրը դեռ չէր հասցրել դրանք թաքցնել: Չուզենալով եղբորն ամոթահար անել՝ մերկացնելով նրա արարքը, այնպես ցույց տվեց, իբր հանկարծակի ուժեղ փորացավ ունեցավ այդ պահին և իսկույն դուրս եկավ և բավական ժամանակ մնաց դրսում, իբր թե կարիքի համար, որպեսզի եղբայրը հասցնի իրերը տեղավորել: Դրանից հետո նորից գալով նրա մոտ, սկսեց այլ բաների մասին խոսել, և չմերկացրեց նրան: Մի քանի օր անց նրա մոտ գտան ծերի իրերը և նրան բռնելով բանտարկեցին: Ծերն այդ մասին ոչինչ չգիտեր, սակայն լսելով, որ եղբորը բանտ են տարել և չիմանալով, թե ինչ պատճառով է այդտեղ գտնվում, նա փութով եկավ ինձ մոտ, -ասաց վանահայրը, -և խնդրեց՝ ասելով. «Ողորմություն արա, տուր ինձ մի քանի ձու և մի քանի թարմ հաց»: Ես նրան ասացի. «Այսօր քեզ մոտ հյուրե՞ր կան»: «Այո», -պատասխանեց ծերը: Սակայն նա կամենում էր այցելել բանտ և մխիթարել եղբորը: Հենց որ նա մտնում է բանտախուց, եղբայրն իսկույն ընկնելով նրա ոտքերը, ասում է. «Ներիր ինձ, Աբբա, քանզի քո հանդեպ մեղանչելու պատճառով է, որ ես այստեղ եմ, որովհետև այդ ես եմ գողացել քո իրերը և քո գրքերը», և ասում է նաև, թե այժմ ում մոտ են գտնվում գրքերը, ում մոտ՝ հագուստը և այլն: Ծերը ասում է նրան. «Թող վստահ լինի սիրտդ, որդյակ իմ, որ ես դրա համար չի, որ եկել եմ այստեղ, ես նույնիսկ չգիտեի, որ դու իմ պատճառով ես այստեղ գտնվում, սակայն լսելով, որ դու այստեղ ես, ես շատ տխրեցի և եկա քեզ մխիթարելու, ահա, տես, թարմ հաց և ձվեր եմ բերել քեզ համար: Իսկ այժմ կգնամ և կանեմ ամեն ինչ, որպեսզի քեզ դուրս բերեմ այստեղից»: Եվ գնալով, խնդրեց պետերից ոմանց, որոնք ճանաչում էին նրան իր առաքինասեր բարքի համար, որոնք էլ և կարգադրեցին, որպեսզի եղբորը ազատ արձակեն բանտախցից»:

31. Պատմում էին այս նույն ծերի մասին, որ նա մի անգամ գնաց շուկա, որպեսզի իր համար հագուստ գնի: Տալով մի ոսկի, նա գնեց հագուստը և քանի որ էլի մի որոշ մանր գումար էլ պիտի ավելացներ, այս պատճառով նա հագուստը վերցնելով դրեց իր տակ և սկսեց հաշվել մնացած մանրը: Այդ պահին մեկը մոտենալով նրան, փորձում էր տակից դուրս քաշել հագուստը: Զգալով այս, ծերը հասկացավ, թե սա ինչ է նշանակում և խղճալով այս ջանասերին, սկսեց կամաց-կամաց կանգնել, իբր ուզում է մանրը մեկնել վաճառողին, մինչև որ սա դուրս քաշեց հագուստն ու գնաց, և ծերը չմերկացրեց նրան:

Վերջացնելով այս պատմությունը երանելի Զոսիմոսն ասաց. «Տեսեք, թե որքա՞ն նստեցին այդ վնասները, որ կրեց ծերը այս հագուստը ու այն գրքերն ու իրերը կորցնելուց: Սակայն ինչ մեծարժեք է նրա հոժարակամությունը: Նա ցույց տվեց, որ ունենալով այդ ամենը, նա այնպիսին էր, որ կարծես թե ոչինչ էլ չուներ: Երբ դրանք հափշտակեցին, նա մնաց այնպիսին, ինչպիսին որ կար, չվշտացավ դրանց համար և չմատնվեց խռովքի: Քանզի, ինչպես որ ես միշտ ասում եմ, այն չի վնասում, որ ունենք, այլ այն, որ ունենք կրքոտությամբ: Այս ծերը, եթե նույնիսկ ամբողջ աշխարհն էլ ունենար, կլիներ այնպիսին, որ կարծես թե ոչինչ էլ չուներ, քանզի այն, ինչ որ նա արեց, դա ապացույց էր, որ նա ազատ էր և ոչ մի կապվածություն չուներ այդ ամենի հետ: Եվ այսպես, ջանանք և մենք, եղբայրներ, ընդօրինակել հայրերին և նախանձախնդրորեն իրագործել նրանց ասածները, որպեսզի այստեղ իսկ պտղաբերենք բարի պտուղներ, և արժանանանք հավիտենական բարիքներին, Քրիստոս Հիսուսով, մեր Տիրոջով, Որին փառք և իշխանություն Հոր և Սուրբ Հոգու հետ այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից. Ամեն: